[13] Ուր. $^{(É)}$s(u)=use «աշտարակաձև սրբավայր/տաճար» [**Salvini A.**, 1979, 581–2. **Salvini A., Wegner I.**, 2014, 113, և այլն]: Սույն գոյականը կազմված է su- հիմքից և -use /oc′/ տեղացույց ածանցից (այս ածանցի մասին տե՛ս **Այվազյան Ս.**, 2013, 34–5): Բառն ամբողջությամբ՝ հմմտ. hhայ. *gnւ-ng*, «տանիքի կամ սրահի վրա գտնվող երեսը բաց ինչ-որ կառույց (երեսը բաց վերնահարկ)», վկայված է ԲՀ-ում, որտեղ մեկնվում է իբրև «ցուիք, որ ի տանիսն լինի յառաջն բաց», «ցիվք ասին, որ սրահին վերայ երեսաբաց լինի» [**Ամալյան Հ.**, 1975, 320, 438]:

[14] Այս մասին տե՛ս **Дьяконов И.**, 1951, 244–5. **Пиотровский Б.**, 1959, 228. **Բաղալյան Մ.**, 2015, 206, Աղ. 1, և այլն: Ավելի վաղ շրջանի նման հնարավոր վկայությունների մասին տե՛ս **Фрайданк Г.**, 1976, 87:

անունը մեկնաբանում է իբրև «երկնային» [C. Lehmann-Haupt, 1931, 935, հմմտ. նաև Б. Пиотровский, 1959, 224: Г. Меликишвили, 1960, 427]: Գ. Ջահուկյանը նույնպես հնարավոր է համարում ուր. Ḫaldie դիցանվան վերլուծումը Ḫal-di ձևով՝ երկրորդ բաղադրիչի մեջ տեսնելով հհայ. *դի-* «աստված» բառահիմքը: Իսկ Ḫal-ը համեմատում է հայ. *հալ* «անգամ» բառի հետ՝ «ժամանակ» իմաստով: Ըստ այդմ, Ḫaldie-ի համար առաջարկում է «ժամանակի աստված» հնարավոր իմաստը [Գ. Ջահուկյան, 2000, 128–129, ծան. 8]:



Նկար 1. Թշնամուն հալածող ուրարտական դիցերի երթը (Վերին Անձավից հայտնաբերված բրոզե վահանի գծանկար)

Ա.Պետրոսյանը փորձում է Ḫaldie դիցանվան Ḫal- բաղադրիչը կապել հ.-ե. *wel արմատի հետ, որը որոշ հետազոտողներ առնչում են հնդեվրոպական այսպես կոչված «հիմնական առասպել»-ի հետ[15]: Վ. Սարգսյանը՝ մանրամասն քննելով ուրարտ. (Ḫ)aldi դիցանվան ստուգաբանման խնդիրն, ենթադրում է, որ (Ḫ)aldi անվան հիմքում ընկած է հայ. *յաղթ* «շատ, առատ, վսեմ, քաջ» բառը: Բուն դիցանունը մեկնելով «հաղթական» նա Ḫaldie-ին համարում է հաղթության, ռազմի աստված՝ համադրելով նրան հայոց Վահագն աստծո հետ [Վ. Սարգսյան, 1998, 52–63]: Նախկինում՝ անդրադառնալով այս հարցին, մենք նույնպես հնարավոր ենք համարել նման ստուգաբանությունը, միևնույն ժամանակ չբացառելով, որ սույն դիցանվան մեջ իրականում պետք առանձնացնել հայ. *դի* «աստված» բառարմատը, ինչպես առաջարկում են մի շարք (տե՛ս վերը) հետազոտողներ [Ս. Այվազյան, 2003, 23; 2008, 56]: Ներկայումս կարծում ենք, որ (Ḫ)aldie անվան -die բաղադրիչը իրոք պետք է նույնացնել հհայ. *դի-* «դիք, աստված» (հ.-ե. < *dhēs) բառարմատի հետ: Ինչ վերաբերում

[15] Նման համադրման, հնդեվրոպական «հիմնական առասպել»-ի և հարակից հարցերի վերաբերյալ մանրամասն տե՛ս **Պետրոսյան Ա.,** 2002, 261–9 և անդ նշված գրականությունը:

է (Ḫ)al-ին, ապա հաշվի առնելով (Ḫ)aldie-ի արևային բնույթը կարծում ենք, որ այն պետք է ծագի հ.-ե. **s(a)u̯H-el-* «արև» արմատից: Այս արմատից են ծագում հուն. *ἥλιος*, լատ. *sol*, կիմրերեն (վալլիերեն) *haul*, կոռներեն՝ *heul, houl*, բրետոներեն *heol* «արև», հին հնդ. (վեդ.) *súvar*, ավ. *hvarə* «արև, լույս, երկինք» և հնդեվրոպական լեզուներում «արև» նշանակող բազմաթիվ այլ բառեր[16] (նույն արմատից է ծագում նաև արևի աստված Helios-ի անունը (հուն. Ἥλιος, Ἠέλιος), որը, ինչպես և Ապոլոնը, անտիկ շրջանում նույնացվում էր Միթրա-Միհրի հետ: Այն իր հնչյունական կերպարանքով շատ նման է ուր. (Ḫ)aldie-ի առաջին բաղադրիչին: Հայերենը զարմանալիորեն «արև» գաղափարի համար գործածում է մեկ այլ հնդեվրոպական արմատ: Եթե ընդունենք, որ ուր. (Ḫ)al-ը զարգացել է հենց հայերենի հիմքի վրա, ապա նրա համար հավանական է հ.-ե **sau̯H-l̥* (ստորին ձայնադարձ) > **hawəl* > ուր. *hal* անցումը՝ միջձայնավորային *w*-ի հայերենին հատուկ անկմամբ[17]: Նկատի առնելով այս ամենը կարծում ենք, որ ճիշտ կլինի սույն դիցանունը տառադարձել Ḫal-Die /Hal-Diə/ (Հալ-Դի) ձևով, որը տառացի նշանակում է «արևի աստված»:

Teišeba: Ուրարտական դիցարանի երկրորդ դիցն է: Սկզբնաղբյուրներում, իբրև կանոն, գրվում է հինմերձավորարևելյան ամպրոպի և տարերքի աստծո ^{D}IM/^{D}IŠKUR (հազվադեպ նաև ^{D}X) գաղափարագիր նշան(ներ)ով: Վանկագիր վկայված է միայն երեք անգամ: Վերին Անձավի վերոհիշյալ հայտնի վահանի վրա Teišeba-ն պատկերված է երախը բաց առյուծի վրա կանգնած՝ յուրաքանչյուր ձեռքում կայծակե եռյակ փունջ բռնած (նկ. 1): Առհասարակ ուրարտական սկզբնաղբյուրները խիստ աղքատիկ տեղեկություններ են հաղորդում Teišeba-ի վերաբերյալ: Դա հնարավորություն չի տալիս ունենալ քիչ թե շատ ամբողջական պատկերացում նրա կերպարի և պաշտամունքի մասին: Teišeba-ն սովորաբար նույնացվում (ընդհանրացվում) է խուռա-խեթական Teššub/p-ի հետ, ով երկնքի և ամպրոպի աստվածն էր: Թեև Teššub/p-ի կերպարը որոշակիորեն տարբերվում էր ուր. Teišeba-ից (վերջինս ի հակադրություն Teššub/p-ի գերագույն աստվածը չէր, իսկ նրա խորհրդանիշ կենդանին հավանաբար առյուծն էր, մինչդեռ Teššub/p-ինը՝ ցուլը[18], տե՛ս ստորև), այնուամենայնիվ, նրանց ակնհայտ ընդհանրությունը թույլ է տալիս որոշակի մանրամասներ իմանալ ուր. Teišeba-ի մասին:

---

[16] Տե՛ս **Pokorny J.,** 1969, 881. **Гамкрелидзе Т., Иванов В.,** 1984, 684 և այլն:

[17] Հմմտ. հ.-ե. **sneu̯r̥t* > **newərd* > հհայ. *նեարդ*, հ.-ե. **nou̯o-r̥o* > **nowo-ro* > հհայ. *նոր*, հ.-ե. **k'ou̯or̥o* > **sowor̥o* > հհայ. *սոր*, հ.-ե. **gᵘrāu̯ō(n)* > **erkawa(n)* > հհայ. *երկան* և այլն: Այս մասին մանրամասն տե՛ս H.Martirosyan, 2010:739-40 և անդ նշված գրականությունը:

[18] Չի բացառվում, որ Teišeba-ի խորհրդանիշ կենդանին առյուծից զատ եղել է նաև ցուլը: Ուրարտական պատկերագրությունում բազմիցս վկայված է ցուլի վրա կանգնած տղամարդու կերպար: Սակայն հստակ չէ թե՛ դրանցում ո՛ր դիցն է պատկերված, կամ արդյոք դրանք բոլորը դից(եր)ի պատկերներ են, թե՛ նրանցում կան նաև արքաների:

Teššub/p-ն, ինչպես որ ուր. Teišeba-ն, պատկերվում էր կայծակե եռյակ փունջը ձեռքին: Նրա բնորոշ զենքն էր՝ կացինը կամ մականը, իսկ խորհրդանիշ-կենդանին՝ ցուլը, որի պաշտամունքը տարածված էր ամբողջ Փոքր Ասիայում: Խուռական Teššub-ի կինն էր Ḫebat մայր աստվածուհին, խեթականինը՝ Արևի *Arinniti աստվածուհին (^{D}UTU ^{URU}Arinna - «Arinna քաղաքի արևի աստվածուհի»): Համարվում է, որ այս աստվածների պաշտամունքը ունի մեծ հնություն և չի բացառվում, որ այն կարող է ծագել ցուլ աստծո և մայր աստվածուհու նեոլիթյան դարաշրջանի պաշտամունքից (Պորտաբլուր, Եղանիկ]: Ա. Պետրոսյանը Teišeba դիցանունը համարելով հնդեվրոպական երկարմատ կազմություն՝ առաջին բաղադրիչի մեջ փորձում է տեսնել հին հայերենում չպահպանված հ.-ե. *tek′s «հյուսել, գործել», «սարքել (հատկապես կացնով)», «կացին», իսկ երկրորդի՝ հ.-ե. *op-/*ep- «վերցնել, բռնել» արմատները: Դիցանունը ամբողջությամբ թարգմանում է «կացին բռնող, կացնավոր», իբրև «արարիչ աստծո՝ հյուսնի աշխատանքի հետ համեմատվող տիեզերածին գործողություն»[19]: Ուրարտական կրոնական ընկալումներում հյուսնության կարևորությունը հաստատում է ուրարտական տեքստերում հաճախակի հանդիպող հետևյալ բանաձևը՝ usḫ=an=u=me ^{d}Ḫaldi=še EN-še (usḫ=an=u=ne ^{d}Ḫaldi=š=me) baqṭu=tuḫe (կամ ḫuṭu=tuḫe) gunu=še (ewe ^{LÚ}ipšu=še/ ^{LÚ}UTÚL=še ŠÚ-inei urinei) «առաքեց-ինձ ^{d}Ḫaldie-ն՝ տերը (առաքեց ^{d}Ḫaldie-ն-ինձ) հաջողություն (?), մարտունակություն (կամ՝ մարտիկներ) և հյուսնություն (կամ՝ հյուսներ)[20] ամեն տեղ» [CTU A 14-1 Ro.$_{13-15}$/14-2 Ro$_{12-14}$/11-1$_{23-25}$/8-3 V$_{15-16}$,…] (տե՛ս նաև ծան. 50): Բայց նշված ստուգաբանության խոցելի կողմը՝ առկա հնչյունական անհամապատասխանությունն է: Ա.Պետրոսյանն այն հաղթահարելու նպատակով ենթադրում է *k′s > *sk′ դրափոխություն՝ հետագա *sk′ > հհայ. *շ* զարգացումով: Սակայն ուր. š - հհայ. *շ* համապատասխանությունը նույնպես խնդրահարույց է, վկայված չէ, թեև տեսականորեն չի բացառվում[21]: Բացի այդ, նման մեկնաբանության դեպքում բացատրության կարիք է զգում նաև ei երկբարբառի առկայությունը սպասվելիք պարզ e-ի փոխարեն[22]: Ա. Ֆուրնեն և Ա. Բոմհարդը ելնելով իրենց կողմից առաջ քաշված խուռա-հնդեվրոպական ցեղակցության հիպոթեզից և անդրադառնալով խուռա-խեթական Teššub դիցանվանը, այն համարում են ամբող-

---

[19] **Պետրոսյան Ա.,** 2002, 250–253: 2006, 19–21, ծան. 68; **Petrosyan A.,** 2012, 147–151, և այլն:

[20] ^{LÚ}ipšu- (= գաղափարագիր ^{LÚ}UTÚL- «ամաններ պատրաստող, ամանների մարդ») - հհայ. *հիւսն* «հյուսն, ատաղձագործ, դուրգար, խառատ», տե՛ս **Այվազյան Ս.,** 2006, 204–206: 2013, 91:

[21] Ուր. š նշանը մինչ այժմ հայտնի բառային համապատասխանություններում փոխանցում է հհայ. *ս*-ն կամ *չ*-ն:

[22] Ա. Պետրոսյանը *է*-ի առկայությունը *ե*-ի փոխարեն բացատրում է հաջորդող *շ*-ի ազդեցությամբ [**Պետրոսյանը Ա.,** 2006a, 21, ծան. 73]:

ջությամբ հնդեվրոպական կազմություն՝ առաջարկելով **dei-* + **subh-* վերլուծումը: Այստեղ առաջին բաղադրիչի տակ նրանք տեսնում են հ.-ե. **dei-*/**doi-*/**di-* «շողալ, պայծառ լինել» (բազմաթիվ լեզուներում «աստված»), իսկ երկրորդի՝ **sewbh-*/**sowbh-*/**subh- ք.* «փոթորկել, կատաղել», գ. «փոթորիկ, կատաղություն» բառարմատները[23]:

Բերված երկու ստուգաբանություններն էլ արված են հնդեվրոպական հիմքի վրա, բայց ամբողջությամբ բացառում են մեկը մյուսին: Իրականում դրանք երկուսն էլ առայժմ հնարավոր է դիտարկել զուտ իբրև վարկած: Մյուս կողմից, համաձայն Միերի Դռան արձանագրության՝ ուր. Teišeba-ի պաշտամունքը սերտորեն առնչվում էր Er(i)dia և Qumi/enu քաղաքների հետ, որոնք, հավանաբար նրա պաշտամունքային հիմնական կենտրոններն էին: Գ.Ջահուկյանը Eridia անունը մեկնում է հհայ. *երիթ* «սեպ» բառով: Նա նաև հնարավոր է համարում, որ վերջինիս *սեպ* «սեպ, ցցված ժայռ, լեռնագագաթ»[24] հոմանիշից է ծագում *Սիփան* լեռնանունը25, որը որոշ մասնագետներ նույնացնում են ասուրական աղբյուրներից մեզ հայտնի Eritia լեռան հետ[26]: Եթե այս ամենը պատահականության արդյունք չէ, ապա չի բացառվում, որ իբրև Ա. Ֆուրնեի և Ա.Բոմհարդի առաջարկի ենթատարբերակ, ուր. Teišeba դիցանվան -šeb-a բաղադրիչի մեջ հնարավոր է տեսնել հհայ. վերոհիշյալ *սեպ* բառարմատը[27]: Այդ դեպքում, նույն արմատն, այլ ձայնավորմամբ, հնարավոր է տեսնել նաև խուռա-խեթական Teššub/p (Te-ššub/p ?) դիցանվան մեջ: Եթե մեր այս դատողությունները ճիշտ են, ապա Teišeba-Teššub/p-ն կապվում է «լեռան, գագաթի, սրածայր ժայռի» գաղափարի հետ: Ուշագրավ է, որ հավանաբար «լեռ» գաղափարի հետ է կապվում նաև ուր. Teišeba-ի կնոջ՝ Baba-ի անունը (տե՛ս ստորև)[28]: Եզրափակելով քննարկումն, այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ Teišeba դիցանվան ստուգաբանման վերոբերյալ բոլոր փորձերն էլ (որոնց հնարավոր է հավելել նաև նորերն) ունեն իրենց ուժեղ և թույլ կողմերը և, մեր կարծիքով, առայժմ մնում են լոկ իբրև վարկածներ:

---

[23] **Fournet A., Bomhard A.,** 2010, 133:

[24] Հ. Աճառյանը այս բառի ծագումը թողնում է անհայտ [**Աճառյան Հ.,** 1979, 201], Գ. Ջահուկյանը կասկածանքով, իրանական միջնորդավորմամբ, բխեցնում է հ.-ե. **k̂ei-po* «ցից, սյուն» նախաձևից՝ համեմատելով հին հնդ. śep(h)a «պոչ, առնի», ալբ. tsep «խայթ, եզր, անկյուն», լատ. cippus «ցից, սրածայր սյուն» ձևերի հետ [**Ջահուկյան Գ.,** 2010, 676]:

[25] **Ջահուկյան Գ.,** 1988, 152:

[26] Տե՛ս **Арутюнян Н.,** 1985, 261 և անդ նշված գրականությունը:

[27] Tei- բաղադրիչի համար, որը հավանաբար ծագում է հ.-ե. **dei* «շողալ, պայծառ լինել» արմատից, հհայ.-ում ունենք նույն արմատից ծագող *տի* «օր», *տիւ* «ցերեկ, օրվա լույս մասը», *տի-* «մեծ», հմմտ. *տի-եզերք* «տիեզերք», *տի-կին* «տիկին», *տի-այր* «տեր» և այլ բառերը:

[28] Թերևս, Teišeba-Teššub/p-ն իբրև արական դից կապվել (ասոցացվել) է՝ սուր լեռնագագաթի, ցցված ժայռի, իսկ Baba դիցուհին՝ կլորավուն լեռան, բլուրի (հմմտ. հհայ. *բաբայ* «բլուր») հետ:

Šiuine[29] (/Siwin/)**:** Ուրարտական դիցարանի երրորդ աստվածն է և Ḫal-Die ու Teišeba-ի հետ կազմում է ուրարտական աստվածների գերագույն եռյակը: Ուրարտական արձանագրություններում Šiuine-ն հիմնականում գրվում է UTU/UD «օր», «արև» շումերոգրամով[30] (համապատասխանում է ասուրա-բաբելական արևի և արդարության Šamaš աստծուն): Վերին Անձավի վերոհիշյալ փահանի վրա պատկերված է արևի սկավառակից ելնող աստծո տեսքով (նկ.1): Šiuine-ի պաշտամունքը առանձնապես մեծ է եղել Վանա լճի մերձակայքում՝ հատկապես նրա արևելյան հատվածում, որտեղ գտնվում էին նրա հիմնական պաշտամունքային կենտրոնները: Այս հատվածից է հայտնաբերված նաև Šiuine-ին ձոնված մեզ հայտնի առայժմ միակ արձանագրությունը (ծան. 30): Վանի արևելյան ափին էր գտնվում նաև թագավորության մայրաքաղաք Ṭušpan (/Tospa/)-ն, որը կրում էր Šiuine-ի կնոջ (իգական զույգի)՝ Ṭušpue(n)a-ի անունը[31]:

Յ. Ֆրիդրիխը Šiuine-ն առնչում է խուռ. Šimi/egi «արևի աստված» դիցանվան հետ՝ ենթադրելով Šimigi > *Šii̯igi > *Šii̯iyi > *Šiwī անցում[32]: Ի. Դյակոնովը, քննադատելով այդ տեսակետը, այն համեմատում է խեթ. ^{d}Šiuni, ^{d}Šiwanni «աստված» (սկզբնապես «լույսի աստված») դիցանունների հետ և առաջարկում է նրա ծագումը խեթերենին մոտ ինչ-որ անատոլիական լեզվից[33]: Ըստ Վ. Իվանովի՝ ուրարտ. Šiuine-ն ունի հնդեվրոպական ծագում և բխում է հ.-ե *dii̯ «օր», *deu̯ «աստված», «երկինք» արմատից՝ հնագույն նախագրավոր խեթերենի միջնորդավորմամբ (խեթ. ^{d}Šiuni /^{d}Šiwani «աստված, արևի/լույսի աստվածը», պալ. ^{d}Tii̯az «արևի աստված, արև», հհայ. *տիւ* «ցե-

---

[29] Այս անունը նախկինում ընթերցվում էր Ardinine ձևով և համադրվում էր Ուրարտական գլխավոր աստծո պաշտամունքի Ardine (արք. Muṣaṣir) հանրահայտ կենտրոնի անվան հետ: Հետագայում Յ. Ֆրիդրիխի կողմից այն ուղղվեց ներկայիս ձևին [**Friedrich J.**, 1940, 214–6]: Այդ ձևին ենք հետևում նաև մենք: Այնուամենայնիվ հարկ ենք համարում նշել, որ տեքստերի վնասված լինելու պատճառով սույն դիցանվան Šiuine ընթերցումը ամբողջությամբ հուսալի համարել չի կարելի:

[30] Մեզ հասած ուրարտական արձանագրություններում Šiuine-ն վանկագիր ձևով վկայված է միայն երեք անգամ՝ երկու անգամ Մինուայի [CTU A 5-80$_{1,4}$] և մեկ անգամ՝ Արգիշտ II-ի [CTU A 11-1$_{28}$] կողմից թողած կոթողային սյուների վրա: Դրանք երկուսն էլ հայտնաբերվել են Վանա լճի հյուսիս-արևելյան մոտակայքում գտնվող հնավայրերից: Ընդ որում, առաջինը ձոնված է հենց Šiuine-ին:

[31] Šiuine-ի պաշտամունքի, նրա երկրպագման կենտրոնների և միջնադարյան հայկական ավանդություններում նրա արտացոլման մասին տե՛ս **Հմայակյան Ս.**, 1990, 44–6:

[32] **Friedrich J.**, 1940, 217–8: Տե՛ս նաև **Меликишвили Г.,** 1960, 442: **Вильгелм Г.,** 1992, 92–3. **Salvini M.,** 1995, 39, 183f. **Арутюнян Н.,** 2001, 490, և այլն: Հնչյունական առումով նման համեմատումը մեզ քիչ հավանական է թվում: Քննադատաբար նման համադրման համար տե՛ս նաև **Fournet A., Bomhard A.,** 2011, 141. **Kassian A.,** 2010–2011, 417–8: Վերջինումս փորձ է արվում համադրել ուր. Šiuine դիցանունը «երկինք» գաղափարի հյուսիս կովկասյան լեզուների համար վերականգնվող նախաձևի հետ:

[33] **Diakonoff I.,** 1971, 81–2. **Дьяконов И.,** 1988a, 172. 1982, 27, ծան. 52:

րեկ, օրվա լուսավոր մասը» և այլն)[34]: Ս. Պետրոսյանը Šiuine դիցանունը բխեցնում հնդեվրոպական մեկ այլ՝ *k´eu$_2$ «փայլել, լինել պայծառ» արմատից[35]: Ա.Պետրոսյանը Šiuine դիցանունն է տեսնում Մեծ Հայքի *Սիւնի-ք* (նահանգի անվանում) և *Սեւան* (բերդամրոցներ՝ Վանա և Գեղամա լճերի մոտակայքում) տեղանուններում (վերջինս ներկայումս նաև Գեղամա լճի անվանումն է)[36]: Եթե *Šiuine - Սիւնի-ք* նույնացումն իսկապես հավանական է թվում, ապա նույնը չի կարելի պնդել *Սեւան* տեղանվան համար: Մեր կարծիքով՝ վերջինս ավելի շատ հիշեցնում է ուր. Teišeba դիցանվան -šeba տարրը (տե՛ս վերը), իսկ *-ն* մասնիկի հավելումը հայկական տեղանունների վերջում սովորական երևույթ է: Այս վարկածի օգտին է նաև այն փաստը, որ Սևանի (Գեղամա լճի) ավազանում Šiuine-ի պաշտամունքի հետ կապված փաստեր մեզ հայտնի չեն, մինչդեռ Teišeba-ին նվիրված մեզ հայտնի ուրարտական երկու քաղաքներից մեկը գտնվում էր հենց Սևանի ավազանում[37]: Ի հավելումն դրա, համաձայն Sardure II-ի տարեգրության մի դրվագի, Սևանի մերձակայքում գտնվող Bamne և Uškiane լեռները փախած մարդկանց այրում է հենց Teišeba-ն և ոչ թե՝ Šiuine-ն[38]: Չի բացառվում, որ ուր. Šiuine դիցանվան մեջ պետք է տեսնել նաև հհայ. *սիւն* «սյուն» բառը[39]: Իմաստի համար հմմտ. օրինակ եգիպտական պաշտամունքային սյուները (*օբելիսկները*), որոնք նվիրված էին արևի Ռա աստծուն և խորհրդանշում էին արևային լույսը/շողը: Իսկ այդ սյուները նշանակող եգիպտերեն բառը (արտասանվում էր՝ *tekhen*) բացի «սյուն»-ից ուներ նաև «արևային շող/ճառագայթ» իմաստը[40]: Մյուս կողմից «բառգիրք հայոց»-ում ունենք *սոյ*- «լույս» արմատը (*սոյք – լոյսք,* ԲՀ:291): Եթե հաշվի ենք առ-

[34] **Иванов В.,** 1980, 136. 2001, 16–17. **Гамкрелидзе Т., Иванов В.,** 1984, 897.

[35] **Պետրոսյան Ս.,** 2005, 232 և անդ նշված գրականությունը: Մեր կարծիքով ուր. Šiuine (<Šiu=ine) դիցանվան šiu- /siw-/ բառարմատի համար նման ծագումը միանգամայն հնարավոր է, ինչպես՝ հնչյունական, այնպես էլ իմաստային առումով: Սակայն պետք է նկատի ունենալ, որ ուրարտական տեքստերում ^{d}Šiuine դիցանունը արտացոլվում է UTU «օր, ցերեկ» շումերոգրամի միջոցով: Իսկ դա հուշում է, որ ուր. šiu-ի ծագումը հ.-ե. *di̯u «օր» նախաձևից իմաստային առումով ավելի հավանական է: Այս նույն արմատից է ծագում նաև բնիկ հայ. *տիւ* «օր, ցերեկ», բառը, որն ըստ Գ.Վարդումյանի հին հայերի մոտ պաշտամունքի առարկա էր (հմմտ. *տըւնջեան լուսատու* «արև» բառակապակցությունը) [**Վարդումյան Գ.,** 1992, 80]:

[36] **Петросян А.,** 1987, 67–69. **Պետրոսյան Ա.,** 2006b, 46–47, և այլն: Եթե դա իսկապես այդպես է, և ուր. Šiuine դիցանունը արտացոլված է Հայաստանյան վերոհիշյալ տեղանունների մեջ (հատկապես՝ *Սյունիք*-ի), ապա նրա անատոլիական ծագումը քիչ հավանական է թվում:

[37] Խոսքը Rusa I-ի կողմից կառուցված քաղաքի/ամրոցի մասին է:

[38] Տե՛ս КУКН, 241 F$_{26-28}$/CTU A 9-3 VI$_{26-28}$: Այդ լեռների տեղաբաշխման մասին տե՛ս **Арутюнян Н.,** 2001, 500, 530:

[39] Այս բառը համարվում է բնիկ, որը, սակայն, քույր լեզուներում հստակ զուգահեռ ունի միայն ի դեմս հուն. κιων հոմանիշ ձևի (հայ-հունական զուգաբանություն) [**Hübschmann H.,** 1895–1897, 490. **Աճառյան Հ.,** 1979, 221: **Ջահուկյան Գ.,** 2010, 682, և այլն]:

[40] Որոշ գիտնականներ ենթադրում են, որ այս եգիպտական սյուներն առնչվում են արևածագի և մայրամուտի կենդանակերպային լույսի աստղագիտական երևույթի հետ [**Gary P., Talcott R.,** 2006, 62–7]:

նում, որ ուր. /iw/ երկբարբառը (գրում՝ iu, iw, ib/p) հին հայերենում հաճախ ներկայացված է հենց *ոյ* երկբարբառի տեսքով (հմմտ. ուր. Tariune /Dariwnə/- հհայ. *Դարոյն-ք* [Н. Арутюнян, 2001, 524], ուր. -ibti-/-iwti-/ - հհայ. *-ոյթ, -իւ* <*-*իւթի/եւթի* < *eu-ti [S.Ayvazyan, 2008, 139–140] և այլն), ապա ունենում ենք ուր. Šiuine (< Šiu=ine /Siw=in/) «լույսի/արևի աստված» - հհայ. *սոյ-* «լույս» համապատասխանությունը: Ինչ վերաբերում է -ine վերջավորությանը, ապա այն անշուշտ պետք է համադրել ուր. մյուս դիցանուններում (հատկապես արական) վկայված նույնական վերջավորության հետ, ինչպես՝ Baqṭu/Ḫuṭu=ine (հմմտ. baqṭu/ḫuṭu=tuḫe, տե՛ս ստորև), Waruba=(i)ne, Nala=(i)ne, Ala=ine, Dedua=ine, Atb=ine, Ta/ira=ine (հմմտ. ta/ira), Ermuš=ine (կամ Ermu=ši=ne), Alaptuš=ine (կամ Alaptu=ši=ne), Aira=ine, Arṣibe=di=ine և այլն: Հաշվի առնելով վերոհիշյալ փաստերը, մեր կարծիքով, հնագույն խեթերենից փոխառյալ պետք է համարել ոչ թե ուր. Šiuine դիցանունն ամբողջությամբ, այլ šiu- «լույս» բառարմատը (հ.-ե. *di̯u «օր» > հնագույն խեթ. siw/u- > ուր. šiu- /siw-/ «լույս» > հհայ. *սոյ-* «լույս»), որից և, արդեն հայկական հողի վրա, կազմվում է Šiu=ine դիցանունը[41]: Եթե այս ամենը պատահականություն չէ, ապա կարծես թե կասկածի տակ է հայտնվում ուր. Šiuine - հհայ. «Սիւնի-ք» (նահանգի անվանում) և *սիւն* «սյուն» վերոնշյալ համադրումները: Սակայն պետք է նկատի ունենալ, որ հին հայերենին խորթ չէր *իւ/ոյ* հերթագայումը (հմմտ. *թոյն/թիւն*, *դոյր/դիւր*, *թոյր/թիւր*, և այլն), որոնց մեջ նախնական են համարվում հենց *իւ(եւ)*-ով տարբերակները:

Baqṭu=ine (մեկ այլ ընթերցմամբ՝ Ḫuṭu=(i)ne)**:** Ուրարտական դիցարանի չորրորդ աստվածն է: Մեզ հասած ուրարտական տեքստերում այս դիցանունը վկայված է հինգ անգամ (երկուական անգամ՝ Վանի մերձակայքում գտնվող Մհերի Դռան և Minua-ի թողած մի կոթողի վրա, մեկ անգամ՝ Այանիս/Այաց-ում գտնվող Rusa II-ի ընդարձակ արձանագրությունում[42]): Այն սովորաբար նույնացվում է ուրարտական տեքստերից մեզ լավ հայտնի baqṭu/ḫuṭu=tuḫe (վանկ. baq/ḫu-ṭu-tú-(ú-)ḫe) վերացական գոյականի հետ[43]: Եր-

---

[41] Հյուրնկալության հայկական *Վանատուր* աստծո անունը կազմված է իրանական փոխառյալ *վան* «բնակություն» [**Աճառյան Հ.,** 1979:302] և բնիկ հայկական *տուր* «տուր» բառարմատներից:

[42] CTU A 3-1$_{5,37}$; A 5-79$_{1,4}$; A 12-1 I$_{11}$:

[43] Տե՛ս **Меликишвили Г.,** 1960, 397, 430 (իմաստը թողնում է անորոշ); **Мещанинов И.,** 1978, 134–5 (հնարավոր է համարում նույնությունն ուր. ḫuti- բայի հետ, որը նա թարգմանում է «դիմել, հայցել, աղերսել (աստծուն)» իմաստով: Ըստ այդմ, նա, ḫuṭu=tuḫe վերացական գոյականի համար առաջարկում է «օրհնություն» իմաստը): Ի. Դյակոնովը [**Дьяконов И.,** 1963, 88] համադրում է խուռ. ḫut-an- ձևի հետ՝ թարգմանելով «հաջողություն»: Մ. Սալվինին ուր. ḫuṭu=tuḫe գոյականը հարցականով թարգմանում է «ուժ, դիմացկանություն» (?) [**Salvini M.,** 2008, 343, 414], իսկ Ḫuṭu=ine դիցանվանը վերագրում «հաջողության (հաղթական) ուժ» (?) իմաստը [**Salvini M.,** 1994, 206], ավելի ուշ նա ուրարտերենում առանձնացնում է ḫuṭ-

կու բառաձևերում էլ առաջին սեպանշանը ավանդաբար ընթերցվում է ḫu, իսկ բառերն ամբողջությամբ համապատասխանաբար՝ ḫuṭu=ine (վանկ. ḫu-ṭu-(i-)né) և ḫuṭu=tuḫe (վանկ. ḫu-ṭu-tú-(ú-)ḫe): Սակայն, նկատի առնելով, որ վերոհիշյալ երկու բառաձևերի համար էլ ուր. տեքստերում բացակայում է *ḫu/baq-u/ú-ṭu- վանկագիր ձևը՝ baq-ṭu- տարբերակը մեզ միանգամայն հավանական է թվում:

Այս բառերի այլընտրանքային հնարավոր ընթերցման մասին առաջինը խոսել է Ա. Դավթյանը: Նկատել տալով, որ ḫu նշանը ունի նաև մեկ այլ՝ bag ընթերցումը (աքքադական գրում՝ համապատասխանաբար, ըստ կանոնի, նաև՝ bag/k/q/, pag/k/q և baḫ), նա հնարավոր է համարում ḫu-ṭu-ի փոխարեն baḫ-ṭu- ընթերցումը՝ վերջինիս մեջ տեսնելով հին հայերենի բախտ *բառը*[44]*: Չբացառելով նման ընթերցումն, այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ հհայ.* բախտ, -ոյ *«բախտ, հաջողություն» բառաձևը համարվում է իրանական փոխառություն: Հաշվի առնելով այս ամենը՝ մեզ առավել հավանական է թվում այս դիցանվան baq/k-ṭu-ընթերցումն: Այդ դեպքում այն իր հնչյունական կերպարանքով և իմաստով ամբողջությամբ կհամապատասխանի հին հայերենի համար վերականգնվող* *բակտ, -ոյ *«բախտ, հաջողություն» ձևին, որը, ինչպես և իրանական համարվող* բախտ *տարբերակը, ծագում են հ.-ե. նույն *bhag-to (< *bhag- «բաժանել») նախաձևից:*

Հաշվի առնելով սույն դիցանվան ընթերցման մեջ առկա երկակիությունը՝ քննարկենք երկու հնարավոր տարբերակներն էլ: Եթե ճիշտ է baq-ṭu- ընթերցումն, ապա այն, անկասկած, պետք է համարել հին հայերենում չպահպանված **բակտ, -ոյ* «բախտ, հաջողություն» վերականգնվող բառաձևի վկայությունը ուրարտական տեքստերում: Միևնույն ժամանակ չպետք է բացառել նաև baḫ-ṭu ընթերցումը, իհարկե, եթե հնարավոր է, որ հհայ. *բախտ, -ոյ* բառը ոչ թե իրանական փոխառություն է այլ անմիջապես բխում հ.-ե. *bhag-to-ից, որը մեզ անհայտ ինչ-որ պատճառով ստացել է նման տեսք (սպասվելիք *կ* փոխարեն առկա է *խ*):

Ինչ վերաբերում է ḫuṭu- տարբերակին, ապա, նման ընթերցմամբ, մասնագետները սույն դիցանունը, որպես կանոն, կապում են խուռական ^{d}Ḫudena և ^{d}Ḫudellura իգական աստվածությունների և/կամ ḫud/t- բայահիմքի հետ: Այսպես, օրինակ, Մ.Ռիմշնայդերն, ուր. ḫuṭuine-ն առնչելով վերոհիշյալ խուռական աստվածությունների հետ, նրան նույնպես վերագրում է իգական սկիզբ՝ չբացառելով, որ նա իր որոշ հատկանիշներով կարող էր լինել Ḫaldi-ի կինը[45]: Նման կապը չի բացառում նաև Ս.Հմայակյանը[46]: Չնայած իր կողմից արված դիտարկմանն (տե՛ս վերը), Ա.Դավթյանը սույն դիցանվան մեջ ḫu-ի

«մեծարել, գովաբանել» (‘erhöhen, priesen’) և ḫut- «աղոթել, գովաբանել» (‘beten, priesen’) բայերը [**Salvini M., Wegner I.,** 2014, 110]:

44 **Դավթյան Ա.,** 2004, 62 (էջատակի ծանոթագրությունը):

45 **Riemschneider M.,** 1963, 154.

46 **Հմայակյան Ս.,** 1990, 481.

փոխարեն baḫ (bag/q/k) ընթերցման հնարավորության հարցը թողնում է բաց, կենտրոնանալով ḫu-ṭu տարբերակի վրա: Ըստ այդմ, նա նույնպես ḫu-ṭu-ն համադրում է խուռական վերոհիշյալ դիցուհիների հետ՝ կապ տեսնելով վերջիններիս՝ հույն դիցաբանությունից մեզ հայտնի «Պլեադներ»-ի, որոնք յոթն են, և հհայ. *Խոյթ* «Աղկիոն (Պլեադներից մեկն է)» անվան միջև[47]: Իսպառ չբացառելով վերոհիշյալ խուռ. դիցուհիների և ուր. Ḫuṭuine/Baqṭuine դիցի համադրման հնարավորությունը, այնուամենայնիվ հարկ ենք համարում նշել, որ խուռական այս դիցուհիները. 1) վկայված են նաև հավելյալ u-ով (Ḫu-u-te-n, ^{d}Ḫu-(u)-te-na, ^{d}Ḫu-(u)-te-el-lu-ur-ra)[48] ի հակադրություն ուրարտ. baqṭu/ḫuṭu բառարմատի, որը միշտ գրվում է baq/ḫu-ṭu- ձևով՝ առանց հավելյալ u-ի, 2) հոգնակի են (ներկայացնում են յոթնյակ դիցուհիներից բաղկացած խումբ), ունեն իգական սկիզբ և առնչվում են մայրության (արգանդի) և երեխաների ծննդի (մանկաբարձության) հետ[49]: Մինչդեռ ուրարտ. ḫuṭuine-ն, նախ, արական դից է, և երկրորդ՝ եզակի է: Բացի այդ, 3) ուրարտ. ḫuṭu=tuḫe վերացական գոյականի առկայությունը ^{d}Ḫaldie աստծո կողմից ուրարտական արքաներին տրվող շնորհների թվում[50]՝ քիչ հավանական է դարձնում վերջինիս իմաստային կապը՝ մայրության, երեխաների ծննդօգնության և մանկաբարձության հետ սերտորեն առնչվող խուռ. դիցուհիների հետ: Ի. Դյակոնովը, իր հերթին, ուր. ḫuṭu-tuḫe բառաձևը՝ «հաջողություն» թարգմանությամբ կապում է խուռ. ḫut-an- «հաջող ճակատագիր որոշել» (թարգմանությունը Ի.Դյակոնովի՝ հղումով Է.Լարոշի վրա) բառահիմքի հետ[51], ըստ այդմ, փաստորեն, ḫuṭu=ine-ն համարելով «հաջողության» ուրարտական աստվածը: Ինչ վերաբերում է խուռ. ḫut/d- բայարմատին, ապա այն տարբեր հեղինակների մոտ ստանում է տարբեր մեկնաբանություններ[52]: Մասնագետները այն գերազանցապես թարգմանում են «աղոթել; գովաբանել, մեծարել»[53], ինչը մեծ դժվարությամբ է հնարա-

---

[47] **Դավթյան Ա.,** 2004, 62: Եթե հաշվի առնենք, որ թե՛ խուռական վերոհիշյալ դիցուհիների, թե՛ հունական «Պլեադներ»-ի դեպքում գործ ունենք խմբակային (յոթնյակ) դիցուհիների հետ, ապա նման կապը նրանց միջև մեզ նույնպես միանգամայն հնարավոր է թվում:

[48] **Laroche E.,** 1980, 111.

[49] Մանրամասն խուռական այս աստվածությունների մասին՝ **Archi A.,** 2013, 13–5, 17–8:

[50] Տե՛ս կաղապարային բանաձևը՝ usḫ=an=u=me ^{d}Ḫaldi=še EN-še (usḫ=an=u=ne ^{d}Ḫaldi=š=me) baqṭu=tuḫe (կամ ḫuṭu=tuḫe) gunu=še (ewe ^{LÚ}ipšu=še ŠÚ-inei urinei) «առաքեց-ինձ Հալդին՝ տերը (առաքեց Հալդին-ինձ) հաջողություն (?), մարտունակություն (կամ՝ մարտիկներ) և հյուսնություն (կամ՝ հյուսներ) ամեն տեղ» [CTU A 14-1 Ro.$_{13-15}$/14-2 Ro$_{12-14}$/11-1$_{23-25}$/8-3 V$_{15-16}$,…]:

[51] **Дьяконов И.,** 1963, 88, **Diakonoff I.,** 1971, 76 (հմմտ. **Хачикян М.,** 1985, 47):

[52] Ինչպես՝ «(նախանշել) ճակատագիրը, բախտը» (“chance”) (?) [**Laroche E.,** 1948, 125–6], «գրել» [**В. Иванов,** 1992, 591], «նպաստել, բարեհաճ լինել» (“to favour”) [**Archi A.,** 2013, 13–15, 17–18 (հղումով Է. Լարոշի վրա)], «աղոթել, գովաբանել, մեծարել» (“to praise, to magnify”) [**Salvini M.,** 1988, 169f; **Fournet A., Bomhard A.,** 2010, 89; **Wegner I.,** 2007, 261 (‘preisen, beten, erhöhen’)] և այլն: Տե՛ս նաև ծան. 43:

[53] Տե՛ս նախորդը:

վոր կապել «ճակատագիր, հաջողություն» իմաստի հետ: Ըստ այդմ էլ, Մ. Սալվինին և Ի. Վեգները, փորձելով խուռ. ḫut/d- բայարմատը կապել ուրարտերենի տվյալների հետ, առանձնացնում են ուր. ḫuṭ- «մեծարել, գովաբանել» և ḫut- «աղոթել, գովաբանել») բայերը (տե՛ս ծան. 43): Իրականում, սակայն, ուր. ḫut(i)- բայը գրվում է այլ կերպ (ḫu-(ú-)ti/tú-), գործածված է բոլորովին այլ համատեքստում և որևէ կապ ḫuṭu- բառարմատի հետ չունի: Այն բազմիցս վկայված է *ḫut=ia=de* ^{d}*Ḫaldi(e)=ede EN-de* ^{d}*IM-de* ^{d}*UTU-ne-ede DIĜIR*^{MEŠ}*-a=šte* ^{KUR}*Biain=a=šte* ... «ḫut- եդա (դեպի/առ) ^{d}Ḫaldie-ն՝ տերը, Teišeba-ն, Šiuine-ն, Biaine=le-ի աստվածները ... » կաղապարային արտահայտությունում: Գ. Մելիքիշվիլին և Ն. Հարությունյանը ուր. այս ḫut(i)- բայի համար առաջարկում են «աղաչել, մուրալ, հայցել» (‘взмолиться’) թարգմանությունը[54]: Իսկ Մ. Սալվինին և Ի. Վեգները, ինչպես արդեն նշվեց, «աղոթել, գովաբանել»: Վերջիններս նման թարգմանության համար անկասկած, հիմնվում են նաև խուռ. ḫut/d- բայաձևի համար առաջարկվող «աղոթել, մեծարել, գովաբանել» իմաստի վրա: Մեր կարծիքով, ուր. ḫut(i)- բայարմատը պետք է համադրել միջին հայերենի *խուտ-ել* «երդվել, ուխտել» [Ռ.Ղազարյան, Մ.Ավետիսյան, 2009:334] բայաձևի հետ: Ըստ այդմ, վերոհիշյալ արտահայտությունը հնարավոր է թարգմանել «ուխտ արեցի/երդում տվեցի (դեպի/առ) ^{d}Ḫaldie-ն՝ տերը, Teišeba-ն ...»: Նկատի ունենալով խուռ. ḫut/d- բայաձևի «աղոթել, մեծարել, գովաբանել» թարգմանության ենթադրական, մոտավոր (ըստ համատեքստի) լինելը, չի բացառվում վերջինիս կապը նաև միջին հայերեն վերոնշյալ բայաձևի հետ:

Դիցուհիներ

Waruba(i)ne (Waruba=(i)n): Համաձայն Մհերի Դռան արձանագրության՝ ուրարտական դիցարանի գլխավոր դիցուհին է, Ḫaldie-ի կինը[55]: Վկայված է նաև մի շարք այլ արձանագրություններում: Ակնհայտորեն այս դիցանվան հիմքից է կազմված ^{md}Waruba արական անունը, որը մեկ անգամ վկայված է ուրարտական մի ուլունքահատիկի վրա[56]: Հենվելով ուրարտական պատկերագրությունում Waruba(i)ne-ին ավանդաբար վերագրվող կանանց պատկերների (ձեռքին ճյուղ բռնած կին/աղջիկ[57]) և այլ տվյալների վրա, որոշ հետազոտողներ նրան վերագրում են պտղաբերության և բուսականության (այգեգոր-

---

[54] **Меликишвили Г.,** 1960, 397; **Арутюнян Н.,** 2001, 447:

[55] **Меликишвили Г.,** 1954, 161, 371–2; **Melikišvili G.,** 1965, 441–5; **Пиотровский Б.,** 1959, 223; **Грантовский Э.,** 1970, 302–5. **Биягов Л.,** 1974, 99. **Հմայակյան Ս.,** 1990, 38–41: **Վարդումյան Գ.,** 1992, 78–9: **Арутюнян Н.,** 2001, 57 ծան. 8, և այլն:

[56] Գրված է ^{ID}Sardure հայտնի անվան հետ միասին՝ ^{ID}Ú-a-ru-ba-a ^{ID}Sar$_{5}$!-du-re [C. Walker, 1978:234, 241 նկ. C]: Երկուսն էլ արական անուններ են՝ կազմված համապատասխանաբար Waruba=(i)ne և Sarde դիցուհիների անուններից:

[57] Waruba(i)ne-ին հաճախ պատկերվում է նաև այծերի/ուլերի ընկերակցությամբ:

ծության) հովանավոր աստվածուհու գործառույթ[58]: Ասորեստանի արքա Sargon II-ի անունից Aššur աստծուն ուղղված ընդարձակ մի «նամակում» (Լուվրյան աղյուսակ. պարունակում է Sargon II-ի հանրահայտ VIII արշավանքի մանրամասն նկարագրությունը) Bagmastu (կամ Bagbartu, վանկագիր՝ Ba-ag-mas/bar-tu/i) դիցուհին ներկայացվում է իբրև Մուծածիրի գերագույն աստվածուհի և Ḫaldia-ի (ուր. Ḫaldie) կին[59]: Այս հանգամանքը բազմաթիվ հետազոտողների համար հիմք է հանդիսացել Bagmastu-ին Waruba(i)ne-ի հետ նույնացնելու կամ նրա մուծածիրյան կերպավորումը համարելու համար[60]: Ոմանք, սակայն, ենթադրում են, որ Bagmastu-ի պաշտամունքը ունեցել է տեղային՝ Մուծածիրյան (Արդինյան) բնույթ, ի հակադրություն Waruba(i)ne-ի, ում պաշտամունքը համաուրարտական էր, հետևաբար՝ այդ դիցուհիներին առնվազն չի կարելի ամբողջությամբ նույնացնել[61]: Համաձայն այդ նույն «նամակ»-ի՝ Մուծածիրում պահվում էր «կնիքով ոսկե մատանի՝ նախատեսված հաստատելու Bagmastu-ի՝ Ḫaldia-ի կնոջ որոշումները»[62]: Սա վկայում է տաճարական գուշակությունների հետ Bagmastu-ի հնարավոր կապի մասին (տե՛ս ստորև): Եթե իսկապես Bagmastu-ին պետք է վերագրել նաև «գուշակության» ֆունկցիա, իսկ նրա կերպարը նույնացնել Waruba(i)ne-ի հետ՝ իբրև բուսականության հովանավոր (տե՛ս վերը), ապա նա, թերևս, պետք է աղերսվի հենց բույսերի (ծառերի, ճյուղերի) միջոցով կատարվող գուշակություններին[63]:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Օձասարի արձանագրության հետևյալ տողերը՝ *... ter=u=ne a[rdi=še ^{GUD}GUD ?] ^{d}Ḫaldi=e urb=ul=i=ne ^{GUD}ÁB ^{d}Ḫaldi[=i=ne=e] (վանկագիր՝ ^{d}Ḫal-di-[né])*[64] *silai=e ^{KUR}P[uluadi-x?] [КУКН 39a/CTU A 3-8$_{3-4}$] «... (նա) դրեց կ[արգ՝ ցուլ ?] ^{d}Ḫaldie-ին որպեսզի զոհաբերվի, կով՝ ^{d}Ḫaldie-ի կնոջը (երկիր) P[uluadi-x?]»:* Այստեղ, փաստորեն ուրարտական աստվածուհու անվան փոխարեն գրված է

[58] **Лосева И.,** 1962, 307–10. **Հմայակյան Ս.,** 1990, 38–9: **Վարդումյան Գ.,** 1992, 79, և այլն:

[59] **Luckenbill D.,** II, 1927, 96–99 (p. 173, 176):

[60] **Биягов Л.,** 1974, 98–101; **Barnett R.,** 2008, 338; **Zimansky P.,** 1988, 87; **Grekyan Y.,** 2006, 162, և այլն:

[61] **Меликишвили Г.,** 1954, 160–2; **Пиотровский Б.,** 1959, 223; **Лосева И.,** 1962, 309; **Բաղալյան Մ.,** 2012, 23–39; 2015, 58:

[62] Այս մասին տե՛ս **Пиотровский Б.,** 1959, 223: **Գրեկյան Ե.,** 2004, 326; **Բաղալյան Մ.,** 2012, 35:

[63] Հին Հայաստանում նման մի հնագույն ավանդույթի մասին հաղորդում է Մովսես Խորենացին (խոսքը սոսիների տերևների շարժմամբ գուշակության սովորության մասին է) [Մովսես Խորենացի, Գիրք Ա, Գլուխ Ի(Ա)]:

[64] Ն. Հարությունյանը և Մ. Սալվինին այս հատվածը ընթերցում են՝ ^{d}Ḫaldi[i] silaie կամ ^{d}Ḫaldi $^{[SAL]}$silaie ձևով: Սակայն դա հակասում է ուրարտերենի քերականական կանոններին, ըստ որոնց հատկացուցիչը հոլովով և թվով պետք է համաձայնի հատկացյալի հետ՝ -ne- մասնիկի միջնորդմամբ, եթե հատկացյալը դրված չէ բացարձակ եզակիով [**Вильгелм Г.,** 1988, 102–103]: Հնարավոր է նաև ^{d}Ḫaldi[x]silai=e «Հալդի[x]կնոջ» ընթերցումն՝ իբրև մեկ բառ:

«^{d}Ḫaldie-ի կին», պետք է ենթադրել, որ խոսքը հենց Waruba(i)ne-ի մասին է[65]: Որոշ ուսումնասիրողներ ուր. Waruba(i)ne անունը ծագումաբանորեն կապում են հին հնդկական Վարունա դիցանվան հետ: Այդ տեսակետը հիմնվում է՝ 1) այս երկու դիցանունների հնչյունական կերպարանքի ակնհայտ նմանության, 2) մի կողմից՝ Վարունա – Միթրա, մյուս կողմից՝ ^{d}Ḫaldie - Միհր (Միթրա) դիցաբանական առկա կապերի վրա[66]: Եթե բառասկզբի ուր. u/w նշանը նախորդում է ձայնավորին, ապա, որպես կանոն, հին հայերենում այն տալիս է *գ*[67]: Ըստ այդմ, ուր. waruba(i)ne-ն hհայ.-ում պետք է տար **գարուա(յ)ն* (< **գարո(ւ)ւա(հ)ն < waruba(i)ne*[68]): Այդ դեպքում հնարավոր է դառնում ուր. Waruba(i)ne - hհայ. *գարուն* (*գար- h.-ե.* < *uesr) «գարուն» համապատասխանությունը (**գարուան* > *գարուն* անցումը, թերևս, կարելի է համարել*աշուն* «աշուն» բառի հետ համաբանության արդյունք)[69]: Այս համապատասխանությունն հավանական է դառնում, եթե ընդունում ենք, որ Waruba(i)ne-ն պտղաբերության և բուսականության աստվածուհին էր (տե՛ս վերը):

Ինչ վերաբերում է Bagmastu (Bagbartu)-ին, ապա ըստ հետազոտողների մեծ մասի՝ այն իրանական ծագում ունի, որի bag- բաղադրիչի մեջ պետք է տեսնել իրան. bag «բաժին» կամ baga «աստված» (< *bag «բաժին) բառերը[70]: Ս. Պետրոսյանը ենթադրում է թրակա-փռյուգական ծագում՝ նրա մեջ առանձնացնելով նույն bag- տարրը՝ «աստված» իմաստով (bag- «աստված» + հուն. mastos «կուրծք, բլրակ, կլորավուն բարձունք)»[71]: Ա.Մնացականյանը Bagmastu-ի մեջ տեսնում է hհայ. *մաստ* «հաստ, ամուր» բառը՝ կապելով այն Արամազդ դիցանվան հետ[72]:

---

[65] **Salvini M.,** 1998, 98:

[66] Մանրամասն հիմնավորումները տե՛ս **Հմայակյան Ս.,** 1990, 110–1, ծան. 87; **Амаякян С.,** 1990, 48–9: **Петросян А.,** 2004, 42–60; **Petrosyan A.,** 2006, 227–33, 231 ծան. 39; 2002, 92, 126, և այլն:

[67] Օրինակների համար տե՛ս **Այվազյան Ս.,** 2014, 209–10 և անդ նշված գրականությունը:

[68] Միջձայնավորային դիրքում ուր. *b* - hհայ. *ւ* համապատասխանությունը կանոնավոր բնույթ է կրում:

[69] Այս բառից ունենք՝ *Գարուն* և *Գարունդուխտ* (*Գարուն* + իրան. *դուխտ* «դուստր», վկայված է 10-րդ դարից) իգական անձնունները [**Աճառյան Հ.,** 1942, 450]:

[70] Տե՛ս **Капанцян Г.,** 1947, 3–4 (իրան. *bag(a)bar(a)- «բաժին բերնող»՝ իբրև < bag «բաժին» + bar «բերել, կրել» + ածք. -tu «իգական սեռի վերջնամասնիկ»); **Меликишвили Г.,** 1954, 161 ծան 3, 372 (իրան. bag+mazda «աստված+իմաստուն»); **Грантовский Э.,** 1970, 302; **Биягов Л.,** 1974, 100 («պտղաբերության աստվածուհի» < իրան. bag «աստված» + bar «բերք» + ածք. -tu «իգական սեռի վերջնամասնիկ»):

[71] **Պետրոսյան Ս.,** 1979, 52–3 ծան. 46:

[72] **Մնացականյան Ա.,** 1979, 81–93: Նշենք, որ Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում hհայ.՝ *մաստ* «հաստ, ամուր, թանձր», *մաստ* «ածիկ» և *մաստ* «բողբոջած գարի» բառերի ծագումը h.-ե. *mad- («թաց, պարարտ») նախարմատից [**Ջահուկյանը Գ.,** 2010, 512]: Եթե դա իրոք այդպես է, ապա դրանով կապ է ստեղծվում ^{d}Bagmastu (=^{d}Bakmastu) դիցանվան և Waruba(i)ne-ին վերագրվող պտղաբերության և բուսականության հովանավորի կերպարի միջև:

Baba: Այս դիցանունը, որը մինչ Այանիս հնավայրի հայտնաբերումը հայտնի էր միայն Մհերի Դռան հանրահայտ արձանագրությունից, մասնագետները կարդում էին հենց այսպես՝ Baba (Ba-ba): Ավելի ուշ Գ.Մելիքիշվիլին առաջարկում է Ḫuba (Ḫu-ba) ընթերցումը[73]: Նրան հետևում են նաև մի շարք այլ ուրարտագետներ՝ համեմատելով այն խուռ. Ḫebat-ի հետ[74]: Հետագայում Մ. Սալվինին, աչքի տակ ունենալով Այանիսի արձանագրության տվյալներն, իսկ մինչ այդ նաև Ն.Հարությունյանը, ոչ առանց հիմքի, նորից պնդեցին նախկին ընթերցման վրա[75], ինչին հետևում ենք նաև մենք: Ս.Հմայակյանը՝ անդրադառնալով խուռական Teššub-ին և նրա կնոջը՝ Ḫebat-ին, նկատում է, որ ամենուր չէ, որ Teššub-ի պաշտամունքն առնչվել է Ḫebat-ի հետ: Զարգացնելով իր այս միտքը և ելնելով ասուրական աղբյուրներում պահպանված որոշ տեղեկություններից, նա Šubria (Սասուն) երկրի գլխավոր աստված է համարում Teššub-ին: Իսկ նույն աղբյուրներում հիշատակվող «մեծ տիկին» և «էգ առյուծ» տիտղոսը կրող Šubria-ական դիցուհուն նա համարում է Teššub-ի կինը՝ նույնացնելով նրան խուռա-լուվական Kubaba (> ? Kibele[76]) դիցուհու հետ[77]: Եթե դա իրոք այդպես է, ապա, նկատի ունենալով նաև Ուրարտուի և Šubria-ի սերտ կապերը, չի բացառվում, որ ուրարտական Baba դիցուհին աղերսվում է հենց վերոհիշյալ Kubaba-ի հետ: Այդ դեպքում, հաշվի առնելով նաև անունների ակնհայտ նմանությունը[78], միանգամայն հավանական է դառնում Kubaba և Baba դիցուհիների ընդհանրությունը[79]: Այս ամենից հստակ երևում է ուր. Baba, փոքրասիական (խուռա-լուվական) Kubaba (Kibele) և, թերևս, նաև անտիկ հայկական Անահիտ դիցուհիների կապը[80]: Չի բացառվում նաև ուր. Baba-ի կապը շումերական համանուն դիցուհու հետ[81]: Շումերական այս հնագույն դիցուհին մարդկանց և կենդանիների արգասավորության հովանավորն էր («արգասավորության տիրուհին») և կոչվում էր նաև «մայր աստվա-

---

[73] **Меликишвили Г.,** 1960, 144, 148 ծան. 1:

[74] Տե՛ս օրինակ, **Пиотровский Б.,** 1959, 225; 1992, 550; **Հմայակյան Ս.,** 1990, 42, և այլն:

[75] **Арутюнян Н.,** 1991, 126; 2001, 50, ծան. 28, 480; **Salvini M.,** 2008, 126:

[76] Հարցը՝ թե արդյո՞ք Kubaba և Kibele դիցուհիները կապված են ոչ միայն կերպարներով այլև անուններով, մասնագետների մոտ մնում է բաց: Մանրամասն մեկնաբանությունների և հղումների համար տե՛ս **Dexter M.,** 2009, 64–5, n. 43:

[77] **Հմայակյան Ս.,** 1990, 42–4:

[78] Այս առումով ուշագրավ է Ու.Օլբրայթի առաջարկը Kubaba դիցանունը ստուգաբանել Kú. Baba «սրբազան Baba», այս մասին տե՛ս **Иванов В.,** 1992, 20, ինչը, կարծես թե, հաստատվում է ուրարտերենի տվյալներով:

[79] Ուշագրավ է նաև այս դիցանուն(ներ)ի և բալթո-սլավոնական baba «ծեր կին, մայր, մեծ մայր, տատմեր» [**Berneker E.,** 1924, 36; **Pokorny J.,** 1959, 91–92] բառերի նմանությունը:

[80] Անահիտի և Kubaba/Kibele դիցուհիների պաշտամունքներում նկատվող ընդհանրությունների մասին տե՛ս **Հմայակյան Ս.,** 1990, 44:

[81] Այս մասին տե՛ս **Salvini M.,** 1995, 187; **Պետրոսյան Ա.,** 2002, 254; 2006a, 19, ծան. 68; **Դավթյան Ա.,** 2004, 121–2, և այլն:

ծուհի»: Իսկ նրա ամուսինը՝ Ningirsu-ն, իր մի շարք հատկանիշներով (առյուծ, փոթորիկ, զինվոր)[82] աղերսվում է ուր. Teišeba-ի հետ:

Ուրարտերենում ունենք babane «լեռ, բլուր» (հմմտ. նաև խուռ. pabani (p/ba-(a)-p/ba-n-, wa_a-a-wa_a-nV-, ուգ. [pbn]) «սար»[83] և հհայ. *բարձր* «բլուր»[84]: Առաջին հայացքից, կարծես թե, «արգասավորության և առատության մայր աստվածուհի» և «լեռ, բլուր» իմաստները դժվար է կապել միմյանց[85]: Եթե, այնուամենայնիվ, նման կապ կա, ապա այն պետք է փնտրել այլ աղբյուրներում, քանզի ուրարտական սկզբնաղբյուրները գրեթե ոչինչ չեն հաղորդում Baba դիցուհու կերպարի մասին: Այս տեսանկյունից ուշագրավ է Ա.Դավթյանի այն դիտարկումը, համաձայն որի ուրարտական դից(ուհին)երը պետք է որ ունենան իրենց արտացոլումն երկնքում՝ ի դեմս աստղերի և համաստեղությունների: Իսկ այդ դիցերի դասավորությունը (հերթականությունը) Մհերի դռան արձանագրությունում պետք է համապատասխանի MUL.APIN-ում թվարկված աստղերի կարգին: Հենվելով իր կողմից առաջ քաշված այս դրույթի վրա՝ նա ուր. Baba-ն համապատասխանեցնում է շում. LU.LIM «եղջյուր» - հուն. Կասիոպեա համաստեղությանը: Եթե իրոք այդպես է, ապա իբրև baba «լեռ, բլուր» բառի և Baba դիցանվան կապի բանալի կարող է ծառայել կելտական արգասավորության Anu մայր դիցուհին («աստվածների մայրը»), որը նաև աղերսվում էր «մայր հողի» գաղափարի հետ: Նա կելտական ավանդապատումներում նույնացվում է հենց Կասիոպեայի հետ, իսկ նրա պաշտամունքը անքակտելիորեն կապվում է սրբազան զույգ բլուրների հետ, որոնք ընկալվում են նաև իբրև Anu-ի կրծքեր (Paps of Anu)[86]: Եթե այս ամենը պատահականություն չէ, ապա պետք է ընդունել, որ Baba դիցուհու անունը ծագում է «բլուր/լեռ» գաղափարից: Ուշագրավ է, որ տարերքի աստվածը, ով Baba-ի ամուսին էր, հին միջագետքյան պատկերացումներում ընկալվել է նաև իբրև զույգ լեռների վրա կանգնած դից[87]:

---

[82] Ningirsu-ի մասին համառոտ տե՛ս **Leick G.**, 2003, 23:

[83] **Laroche E.**, 1980, 190–1: Ըստ Ֆուրնեի հնարավոր է, որ ծագում է հնդեվրոպական < *bhen- ‘mountain’ (Celtic *benn-, Greek (Cyrenean) βουνός) նախաձևից [**Fournet A.**, 2010, 6]:

[84] Վկայված է միայն ԲՀ-ում [**Ամալյան Հ.**, 1975, 45], տե՛ս նաև **Ջահուկյան Գ.**, 2010, 109 և այլն:

[85] Ա. Պետրոսյանը փորձում նման մի կապ տեսնել «լեռան» և Teišeba միջև՝ նշելով, որ այն «լավագույնս է համապատասխանում ամպրոպի աստծո՝ լեռանը, ժայռին հարվածելով բեղմնավորելու պատկերացմանը» [**Պետրոսյան Ա.**, 2006a, 19, ծան. 68]: Իսկ Մ. Բաղդալյանը չի բացառում «լեռան, ժայռի» կապը Ḫaldie-ի հետ, իբրև «ժայռից ելնող՝ մեռնող-հառնող աստվածություն» [**Բաղդալյան Մ.**, 2015, 136]:

[86] **Monaghan P.**, 2004, 20, 375; **Knight S.**, 2002, 120: Հենվելով Կասիոպեա համաստեղության M-աձև տեսքի և որոշ այլ տվյալների վրա՝ Baba դիցուհու և «զույգ լեռներ»-ի միջև առկա հնարավոր կապի եզրակացության է գալիս նաև [**Դավթյանը Ա.** 2004, 121–2]:

[87] **Dijkstra M.**, 1991:

Ṭušpu(n)ea: Համաձայն Մհերի Դռան արձանագրության ուրարտական դիցարանի երրորդ դիցուհին է, արևի և լույսի աստված Šiuine (/Siwin/)-ի կինը: Նա այսպես է կոչվել Ուրարտուի մայրաքաղաք Ṭušpa /Tospa/ (հհայ. *Տոսպ*, սեռ. *Տոսպա-յ*)-ի անունով: Հավանաբար հենց Ṭušpa-ն էլ հանդիսացել է Ṭušpu(n)ea-ի պաշտամունքի կենտրոնը: Ուշագրավ է, որ Ṭušpa մայրաքաղաքն Ասուրական տեքստերում վկայված է Ṭurušpa ձևով, սակայն պարզ չէ, թե արդյո՞ք սա Ṭušpa/Tospa/ անվան աղավաղված ձևն է, թե՞ առավել հին տարբերակ, որը պահպանվել է ասուրերենում: Եթե մտածենք, որ դա առավել հին՝ նախնական ձևն է, ապա պետք է ենթադրել /Tor(u)spa/ > /Tospa/ անցում, ինչի համար հմմտ. օրինակ, ուր. taršu=ane /darsu=an/ «մարդկանց խումբ» - հհայ. *դա(ր)ս, -ու* «նույնը» (*ր*-ով տարբերակը պահպանվել է միայն բարբառներում): Երկու դեպքում էլ մենք դժվարանում ենք որևէ հուսալի ստուգաբանություն տալ այս անվանը: Պարզ չէ նաև Ṭušpu(n)ea-ի կերպարը[88]:

Aui: Վկայված է միայն Մհերի Դռան արձանագրությունում՝ չորրորդը աստվածուհիների շարքում: Ըստ այդմ էլ համարվում է ուրարտական դիցարանի չորրորդ դիցուհին՝ Baqṭu(i)ne/Ḫuṭu(i)ne-ի կինը: Այլ տեղեկություններ այս դիցուհու մասին ուրարտական աղբյուրները չեն պարունակում:

Ի.Մեշչանինովն ուր. Aui դիցանունը կապում է անեծքի բանաձևերը հաճախ եզրափակող «auie ueulie» բառակապակցության առաջին բառի հետ: Միևնույն ժամանակ նա նշում է, որ վերջինս անեծքի բանաձևերում երբեմն փոխարինվում է «qiuraide kulitune» բանաձևով, որը նա թարգմանում է «գետինն ուղարկել»: Ըստ այդմ, նա auie-ի համար առաջարկում է «ստորգետնյա աշխարհ» իմաստը[89]: Հարցը քննարկելու համար բերենք վերոհիշյալ բառակապակցությունները պարունակող ուրարտական անեծքի բանաձևերը՝ ընդհանրական տեսքով, բաժանված ըստ խմբերի (A և B):

A: *turinine ^{d}Ḫaldiše [(այլ դիցեր)] mani [(tine) (armuzi armuzige) armuzi] ^{d}UTU-ne pei(ne) [mi arḫe uruliane mi inaine mi ^{LÚ}nara auie ululie] «թող ոչնչացնեն (հատեն) Ḫaldie-ն [մյուս աստվածները]՝ նրան, (նրա) անունը, (նրա) զարմը, (նրա) զարմի ? զարմը, արևի տակից, ... auie ululie»:*

B: *(mi-ni) ^{d}Ḫaldi=še [(այլ դիցեր)] mi tine (mi armuzi) mi zelbe qi(u)raide kuletune «... Ḫaldie-ն [մյուս աստվածները]՝ ոչ (նրա) անունը, ոչ (նրա) զարմը, ոչ (նրա) ցեղը, թող չթողնեն (?) գետնի վրա»:*

---

[88] Բ. Պիոտրովսկին ենթադրում է, որ ուրարտական պատկերագրությունում երբեմն հանդիպող՝ արևի սկավառակը թևերի միջև պահող կանացիակերպ թռչունը հենց Ṭušpuea-ն է [**Пиотровский Б.,** 1959, 225; 1992, 550]: Ա.Պետրոսյանը կարծում է, որ Ṭušpu(n)ea-ի հատկանիշները պետք է պահպանված լինեն Շամիրամի կերպարում [**Պետրոսյան Ա.,** 2006b, 21, 136–7]:

[89] **Мещанинов И.,** 1978, 71–72: Հղում անելով վերջինիս վրա՝ նույնը կրկնում է Ա. Պետրոսյանը [**Петросян А.,** 1988, 56–63: **Պետրոսյան Ա.,** 2002, 246–247]:

Ինչպես տեսնում ենք, բերված բանաձևերում առկա է միայն «թող ոչնչացնեն (հատեն) աստվածները ՛այսինչին, այնինչին՛ արևի տակից» - «... աստվածները ՛ոչ այսինչին՛, ոչ ՛այնինչին՛ թող չթողնեն (?) գետնի վրա» հակադրությունը: Իսկ դրանից ամենևին էլ չի բխում, որ «qiuraide kuletune»-ն համարժեք է (փոխարինում է) «auie ululie» անհասկանալի բառակապակցությանը: Հետևաբար, Մեշչանինովի կողմից ուր. auie բառաձևի համար առաջարկվող «ստորգետնյա աշխարհ» թարգմանությունը ոչնչով հիմնավորված չէ:

Գ. Ջահուկյանը՝ անդրադառնալով Aui դիցանվանը, հիմնվելով միայն հնչյունական կերպարանքների համապատասխանության վրա, հնարավոր է համարում, որ վերջինիս մեջ կարելի է տեսնել հհայ. *հաւ* «պապ» բառը[90]: Ա. Դավթյանը նկատել է տալիս, որ ուր. Aui-ն իգական է և, ըստ այդմ, բացառում է նման համապատասխանությունը: Հղում անելով ուրարտական պատկերագրության մեջ պահպանված կիսով չափ թռչուն, կիսով չափ կին դիցաբանական կերպարի վրա (նկ. 2), նա, իր հերթին, առաջարկում է ուր. Aui - հայ. *հաւ* «թռչուն» (< հ.-ե. *Hauei «թռչուն») համադրումը[91]:



Նկար 2. Թռչնակերպ կնոջ ուրարտական արձանիկ

Ինչ վերաբերում է ուր. Aui - հհայ. *հաւ* «թռչուն» համեմատությունը, ապա այն մեզ նույնպես հավանական է թվում[92], հատկապես եթե ընդունում ենք, որ Baqṭu(i)ne /Ḫuṭu(i)ne-ն բախտի և հաջողության ուրարտական

[90] **Ջահուկյան Գ.**, 1987, 444:

[91] **Դավթյան Ա.**, 2004, 128–9:

[92] Սակայն, մյուս կողմից ուր. տեքստերում վկայված ^{KUR}Abuni երկրամասը մասնագետները նույնացնում են հայկական *Հաւունիք* գավառի հետ [**Арутюнян Н.**, 1985, 9–10; 2001, 492 և այլն]: Այս գավառի անունը իր հերթին առնչվում է հայկական *Հաւունի* նախարարական տոհմի հետ, որը Մովսես Խորենացին կապում է *հաւ* «թռչուն» բառի հետ (տե՛ս Խորենացու հետևյալ տողերը՝ «ասեմ և զՍպանդունիսդ ի վերայ զենարանաց, և զՀաւունիսդ բազէակիրս և բազէակալս, յաղագս ի մայրիս բնակելոյ» [**Մովսես Խորենացի,** Գիրք Բ, Գլուխ է]: Իսկ դա նշանակում է, որ եթե ուր. Aui դիցանունն իսկապես կապ ունի հհայ. *հաւ* «թռչուն» բառի հետ, ապա սպասելի էր, որ այն, հավանաբար պետք է գրվեր Abi կամ Api ձևով:

աստվածն է: Նկատի ունենք այն, որ հնում թռչունների թռիչքով գուշակություններ էին կատարվում, և բախտը հաճախ առնչվում էր հենց թռչնի կերպարի հետ:

Եթե ամփոփենք այս ողջ շարադրանքը, ապա ուրարտական դիցարանի առաջին քառյակի (դիցերի և դիցուհիների) անունների հնարավոր ծագումնաբանության համար ի հայտ է գալիս հետևյալ պատկերը:

(Ḫ)al=Die /Hal-Diə/ - hhայ. *հալ «արև» + դի «աստված»): Սույն ստուգաբանությունը հիմնված է հետևյալ կռվանների վրա. 1. Ḫaldie-ն ունի արևային/կրակե բնույթ, արևի աստվածն է, 2. հստակ երևում է Ḫaldie - Միհր/Միթրա - Հելիոս ընդհանրությունը, 3. անվան Ḫal-Die վերլուծումն միանգամայն հնարավոր է և լրացուցիչ հիմնավորվում է Միերի Դռան արձանագրությունում Ḫaldi- փոխարեն Di- տարբերակի առկայությամբ, 4. առկա է ուր. (Ḫ)al-Die - hhայ. *հալ «արև» + դի «աստված» լիակատար հնչյունական և իմաստային համապատասխանություն: Ուստի, կարծում ենք, որ բավարար աստիճանի համոզվածությամբ կարելի է պնդել սույն ստուգաբանության վրա:

Teišeba (խուռ. Teššub/p): Ուրարտ. Teišeba-ի և խուրա-խեթական Teššub/p-ի ծագումնաբանական կապը կասկած չի հարուցում: Այս երկու դիցանուններն էլ ստուգաբանական վարկածների պակաս չեն զգում: Ուշագրավ է, որ դրանք իբրև կանոն արված են հնդեվրոպական հիմքի վրա: Այնուամենայնիվ, չնայած դրան, առայժմ դժվար է եղած ստուգաբանություններից առանձնացնել որևէ մեկը: Ակնհայտ է, որ առկա է լրացուցիչ կռվանների կարիք՝ եղած տարբերակներից որևէ մեկին նախապատվություն տալու, կամ, միգուցե, նորերը առաջ քաշելու համար: Մյուս կողմից, նկատի առնելով Teišeba-Teššub/p-ի պաշտամունքի վաղնջականությունը, չի բացառվում, որ նրանց անունները նույնպես ունեն հնագույն ծագում, որոնց արմատները ժամանակի ընթացքում մթագնել են:

Šiu=ine: Այս դիցանվան ստուգաբանության առկա երկու հիմնական վարկածներից ներկայումս մասնագետների մեծամասնությունը (Ի.Դյակոնով, Վ.Իվանով, Ս.Հմայակյան, Ա.Պետրոսյան և այլն) նախապատվությունը տալիս են վերջինիս խեթական (կամ մերձխեթական) ծագմանը (խեթ. ^{d}Šiuni, ^{d}Šiwanni «լույսի աստված» < h.-ե. *di̯u (*dei) «փայլել, օր, արև, աստված»): Մենք նույնպես կարծում ենք, որ դա առավել հավանական տարբերակն է: Այս տարբերակի հետ շատ լավ խոսում է հին հայերենում պահպանված *սոյ-* (< *սիւ-) «լույս» բառարմատը: Չի բացառվում նաև ուր. Šiuine կապը հայկական *Սիւնի-ք* նահանգի անվանման հետ (Ա.Պետրոսյան): Հավանական է նաև մեր կողմից առաջարկվող ուր. Šiuine - hhայ. *սիւն* «սյուն» (իբրև՝ լույսե սյուն/շող) կապը: Սրա օգտին են խոսում եգիպտական արևի աստված Ռային նվիրված պաշտամունքային սյուները (*օբելիսկները*), որոնք խորհրդանշում էին լույսե

շողը: Ինչ վերաբերում է ուր. Šiuine-ի և խուռ. Šimi/egi «արևի դից»-ի հնարավոր կապին, ապա հնչյունական անհամապատասխանության պատճառով այն առայժմ մնում է խնդրահարույց:

Baqṭu/Ḫuṭu=(i)ne: Սեպանշանների բազմարժեքությամբ պայմանավորված հնարավոր է այս դիցանվան երկու՝ Baqṭu=(i)ne կամ Ḫuṭu=(i)ne ընթերցումներ: Baqṭu տարբերակի դեպքում այն ակնհայտորեն պետք է կապել հավանաբար իրանական ծագում ունեցող հհայ. *բախտ, -ոյ* «բախտ» բառաձևի հետ (Ա.Դավթյան), որի բնիկ ձևը պետք է լիներ **բակտո*-ն՝ ինչը և, մեր կարծիքով, վկայված է ուր. տեքստերում: Իսկ Ḫuṭu=(i)ne ընթերցման դեպքում նրա ծագումնաբանությունը մնում է անորոշ: Կարծում ենք, որ վերջինիս և խուռական ᵈḪudena և ᵈḪudellura իգական դիցուհիների հետ համապատասխանեցման փորձերը (Մ.Ռիմշնայդեր և այլք) անընդունելի են իմաստի առումով (հատկապես եթե հաշվի ենք առնում նույն արմատից կազմված ուր. ḫuṭu=tuḫe վերացական գոյականի հնարավոր իմաստները): Ուր. ḫuṭu=tuḫe - խուռ. ḫud/t- բայահիմքի համադրման հարցը նույնպես առայժմ մնում է բաց, քանզի թե՛ մեկը, թե՛ մյուսը չունեն հուսալի թարգմանություն:

Waruba=(i)ne: Ըստ մասնագիտական գրականությունում առկա ստուգաբանական մի վարկածի սյուն դիցանունը պետք է համադրել հին հնդ. Waruna արական դիցանվան հետ (Ս.Հմայակյան, Ա.Պետրոսյան): Սրա հիմնական կռվաններն են. 1) նշված դիցանունների ակնհայտ հնչյունական նմանությունը, 2) մի կողմից ᵈḪaldie - Waruba=(i)ne զույգի ամուսնական կապը, իսկ մյուս կողմից՝ Միթրա -Waruna փոխկապակցվածությունը: Բնականաբար նկատի է առնվում նաև ᵈḪaldie - Միհր/Միթրա հաստատված ընդհանրությունը: Այս վարկածի խնդրահարույց կողմը, թերևս, հին հնդ. Waruna-ի արական բնույթն է, ի հակադրություն ուր. Waruba=(i)ne-ի: Անսովոր է նաև հին հնդկական դիցանվան հավանական վկայությունը ուրարտական դիցարանում, որում ի հակադրություն խուռաական դիցարանի նման օրինակներ չկան: Մեր կարծիքով ուր. Waruba=(i)ne-ի մեջ կարելի է տեսնել հհայ. *գարուն* «գարուն» բառը: Մեր այս առաջարկը հիմնված է՝ 1) սույն բառերի հնչյունական նմանության և 2) ուր. Waruba=(i)ne-ի նաև բուսականության հովանավոր լինելու հավանականության վրա (նա բազմիցս պատկերված է ձեռքին ունենալով բույս /ճյուղ): Իբրև լրացուցիչ փաստարկ կարելի է ներկայացնել նաև հայ. *գարուն* բառով կազմվող անձնանունների առկայությունը: Թերևս, այս երկու ստուգաբանությունններն էլ ունեն որոշակի հիմք, բայց դեռևս մնում են իբրև վարկածներ:

Baba: Այս դիցուհին, ըստ երևույթին, պետք է համապատասխանեցնել խուռա-լուվական Kubaba (> Kibele ?)-ի (Ս.Հմայակյան) և շում. Baba-ի (Ա. Դավթյան) հետ: Կարծում ենք, որ Kubaba (< Ku-baba ?) և Baba անունները կապված են նաև ծագումնաբանորեն: Մասնագետները նաև մատնանշում են

ուր. Baba դիցուհու և baba «լեռ, բլուր» գոյականի ակնհայտ հնչյունական նույնությունը, որոնց իմաստային կապը ապահովելու համար բերում են տարբեր մեկնաբանություններ (Ա.Պետրոսյան, Մ.Բաղալյան): Մեր կարծիքով իբրև նման իմաստային կապի օրինակ կարող է ծառայել վաղնջական կելտական Anu (Ana, Anann) մայր դիցուհու կերպարը, որը սերտորեն առնչվում է զույգ լեռների (բլուրների) պաշտամունքի հետ: Այս կապն ավելի հավանական է դառնում, եթե հաշվի ենք առնում, որ Baba-ի ամուսինը (արական զույգը) ընկալվել է նաև, իբրև զույգ լեռների վրա կանգնած աստված: Իբրե նման իմաստային կապի հիմնավորում նշվում է նաև ուր. Baba դիցուհու հնարավոր աստղագիտական կապը Կասիոպեա համաստեղության հետ (Ա. Դավթյան): Նկատի է առնվում, որ վերջինս ունի M-աձև տեսք և հիշեցնում է երկգագաթ լեռ:

Ṭušpu(n)ea: Ուրարտական այս դիցուհու անունն է կրում Ուրարտուի մայրաքաղաք Ṭušpa /Tospa/-ն, որն աքքադական աղբյուրներում վկայվում է Ṭurušpa ձևով: Թե՛ առաջինը, թե՛ երկրորդն առայժմ որևէ քիչ թե շատ արժանահավատ ստուգաբանություն չունեն:

Aui: Որոշ հետազոտողներ սույն դիցուհու անվան մեջ տեսնում են «անդրաշխարհ» իմաստը (Ի.Մեշչանինով, Ա.Պետրոսյան): Սակայն նման թարգմանությունը ենթադրական է և ոչնչով չի հիմնավորվում: Ըստ մեկ այլ մեկնաբանության (Ա.Դավթյան) Aui-ն պետք է համադրել հհայ. *հաւ* «(էգ) թռչուն» բառի հետ: Մեր կարծիքով, այս վերջին ստուգաբանությունը ավելի հավանական է, հատկապես, եթե ընդունենք, որ Aui-ի ամուսինը (արական զույգը) բախտի և ճակատագրի աստվածն էր: Իսկ հնում թռչունների թռիչքով հաճախ գուշակություններ էին կատարվում: Ամեն դեպքում վերջնական պատասխան առայժմ դժվար է տալ և առաջարկված ստուգաբանությունները լրացուցիչ հիմնավորումների կարիք ունեն:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. I, Երևան, 1942: հ. IV, Երևան, 1979:

Ամալյան Հ., Բառգիրք հայոց, Երևան, 1975:

Գրաբարում **գուբ-**ը ունեցել է «հոր, փոս, ջրհոր, վիհ, խորխորատ, «բջիջք», «ագուգայք» (հոգնակի իմաստով) իմաստները[8]: Եթե նկատի ունենանք, որ այստեղ, ինչպես նկարագրում են Գորիսի, Վերիշենի և Ակների տարեց բնակիչները, գոյություն են ունեցել փոսեր, դամբարաններ, նույնիսկ ջրհորներ, ապա պետք է հնարավոր համարել **Կʲո̈ւփեր** տեղանվան համար հենց այս բառը՝ **գուբ**, որը ստացել է բարբառային տեսք՝ **գ>գʲ>կʲ**, վերջինիս ազդեցությամբ **ու**-ն նույնպես քմայնացել է, իսկ **բ/բբ (gub/gubb)** հնչյունները բարբառում հայտնի ձայնեղների խլացման օրենքով դարձել է **փ**: Հավանաբար ձևիմաստային հենց այս իրողությունն էլ նկատի են ունեցել, որ վարչական նոր թղթերում բնիկ ձևը դարձրել են **Գուբեր**[9]**:** Հր. Աճառյանը **գուբ** բառահոդվածի տակ նշում է «հոր, փոս» իմաստները, տալիս բառի ասորական փոխառություն լինելը՝ **gubb, gubba՝** «գուբ, փոս, ջրհոր, բանտ» իմաստներով: Տրված են նաև զուգահեռները այլ լեզուներում՝ ասորերեն, եբրայերեն և այլն[10]: Մյուսների համեմատությամբ այս բառին մոտ է **Կʲո̈ւփեր** տեղանունը, որի շուրջ փորձենք անցկացնել ընդհանրական քննություն: Այս մասում մեզ մնում է հանգել այն տեսակետին, որ **Կʲո̈ւփերը** կամ բարբառներին անցած հնագույն փոխառությունից է՝ **gubb, gubba՝ «գուբ, փոս, ջրհոր, բանտ»** իմաստներով, որ հետագայում հոգնակիություն է ստացել՝ **-եր՝ «փոսեր, գուբեր»**[11]**,** կամ գործ ունենք **gubb, gubba** բառերին համաձև հ.-ե. մի շատ հին արմատի հետ՝ ***qeup/*****qeub**, որ ունեն պարսկերենը եւ քրդերենը[12]: Գ. Ջահուկյանը բարբառային հայերենի սեմական փոխառությունների տակ է դնում «գուբ»-ը՝ «հոր, փոս, բջիջ, փողրակ» և հարցականով տալիս հ.-ե. ***gupā** «փոս, հոր»՝ որպես սեմական հեռա-

---

[6] **Մարգարյան Ալ.,** 1975, 421:

[7] Նույն տեղում, 379: Այս բառի շրջանակներում ստուգեցինք նաև արմատը փոխառություններում. առկա էին **«ղափաղ-կափարիչ, ղափուլ-qâfil**-1.անգետ, անզգույշ, 2. Հանկարծ, անսպասելիորեն» /տե´ս հեղինակի նշվ. աշխ., 523/:

[8] **Ղազարյան Ռ.,** 197:

[9] Տե´ս ՀՀ կառավարության արձանագրային որոշումը Գորիս քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագիծը և քաղաքի պատմական տարածքի, նրա առանձին հատվածների վերակառուցման և օգտագործման հայեցակարգը հաստատելու մասին /նախագիծ, 2012 թ./:

[10] ՀԱԲ, h. 1, 586

[11] Չենք կարծում, որ **-եր**-ը հնուց է կցված տեղանվանը՝ որպես հին հայերենի սեռական: Այդ հիմունքով նկատելի է, որ **գաբ/կյափ**-ը –**եր** ստացել է հետագայում՝ թերևս 13-րդ դարից հետո, երբ **-եր**-ը գործածություն է ստացել որպես հոգնակերտ մասինկ:

[12] Տե´ս ՀԱԲ, h. 1, 586:

վոր զուգաբանություն[13]: Հր. Աճառյանը նշում է, որ ***gupā*** բառը՝ «հողե մեծ աման» նշանակությամբ, հ.-ե. լեզվաընտանիքի ոչ բոլոր խմբերին է անցել: **Կ'ոփեր** հնագույն բնակատեղիում, որ գտնվում է Վերիշենի հարավարևմտյան մասում, Վարարակնի 3-րդ դարավանդի վրա, հայտնաբերվել են քարարկղային դամբարաններ, պահպանվել են կիկլոպյան բերդի մնացորդներ[14]: Օ. Խնկիկյանը **Կ'ոփերին** հարակից Ակներ գյուղում ուսումնասիրած մի դամբարանի մասին նշում է, որ քարարկղային այս դամբարանում գտնված նյութերը թվագրվում են Ք.ա. II–I դդ.[15]: Գուցե հենց այս քարարկղային դամբարանները հնում նույնացվել են «հողե մեծ ամանի» (***qeup/*qeub)** հետ, և հետո երևույթի անհետացման հետ մեկտեղ մթագնվել է բառի բուն իմաստը: Ասվածը հավաստվում է նաև նրանով, որ **կուպ/կոպ/կյուփ** ձևերը «գերեզման» իմաստներով պահպանված են որոշ լեզուներում[16]:

Ոմանք այն կարծիքին են, որ **Կ'ոփեր** տեղանվան հիմքում ընկած է **կափ,** բարբառում՝ **կ'ափ** բառը[17]: Նոր հայկազյան բառարանը **կափ**՝ «կափարիչ, ջրհորի կամ գերեզմանի կափարիչ, գերեզմանի քարե կափարիչ», արմատով կազմված բաղադրություններ նույնպես ունի: Ընդ որում՝ բառի այս իմաստի գործածությամբ Տաթևի խոսվածքում առկա է **խոփեր** «հողից դուրս պրծած քարեղեն և հողեղեն խութեր» ձևը, նաև **Խփփեր[18] բնակավայր,** իսկ Գորիսի բոլոր խոսվածքներում տարածված է **ղըփի-խկըփի** «կափարիչ» բառը, որն անշուշտ առնչություն ունի «փակել» բառի իմաստի հետ: **«Կափարումք»** բառահոդվածի տակ ՆՀԲ-ն նշում է «գերեզմանք, շիրիմ, տապան քարեղեն», «կափաւոր-որ ունի և վարէ զգործի կափիչ», «կափուլ-տեղի՝ ուր լինի կափուցանիլ ուլամբ կամ փակիլ, խփանիլ»[19], այսպես և՝ «**կափումն**-փակումն, **կափուցանեմ**-փակել, պնդացնել, **կափչիմ**-միանալ, ձուլվել» և այլն[20]: Եթե հետևենք նշյալ իմաստներին ու համեմատենք **Կ'ոփերի** տեղանքում կամ մոտ վայրերում տարածված գերեզմանաթմբերի գոյությանը, կստացվի, որ վայրը այդ անունը ստացել է ժողովրդի խոսքում տարածված «**Գյավուրի բներ**»-ից՝ հին գերեզմանատեղի, որ քիչ հավանական է, քանի որ, ինչպես նշում են, դրանք

---

[13] **Ջահուկյան Գ.,** 1987, 456:

[14] http://www.sarc.am/ Վերիշենի և հարակից տարածքների բառարան: Հեղինակ՝ Ա. Բաբայան:

[15] **Խնկիկյան Օ.,** 1981, № 4, 312–313:

[16] Հր. Աճառյանը նշում է, որ այս բառը հայերենին անցած ձևեր ունի կովկասյան լեզուներում՝ «ջրի փոս, թումբ» և այլ բառեր /տե՛ս ՀԱԲ, հ. 1, 586: **Կուբի**՝ դագաղ իմաստով գործածական է նաև Կարնո բարբառում: Տե՛ս ՀԼԲԲ, 2004, հ. 3, 199:

[17] Այս մասին տե՛ս www.sarc.am-ի «Վերիշենի և հարակից տարածքների բառարան» աշխատանքի մեջ:

[18] Տե՛ս **Պողոսյան Ս.,** 2007, 156:

[19] Այս բառահոդվածի տակ նշվում է, որ լծորդված է թուրքերենից՝ **գափան, գափանճա, լատ. Գափիօ**:

[20] ՆՀԲ, հ. Ա-Կ, 1079–1080:

իրարից հեռու են[21] և աշխարհագրական դիրքով էլ տարբերվում են[22]: ՆՀԲ-ն ունի նաև «կոփ-կոպ, կոփած-կոփվածք»[23] բառերը, որ քիչ հավանական է սրանց տեղանվանը կցելը, քանի որ տեղանքը հարթ է, ոչ լեռնային[24]: Եվ վերջապես, որ առավել կարևոր է, առկա է հնչյունական փոփոխությունների գրեթե անհնարինություն՝ **ա**-ի քմային **ու**-ի վերածվելը:

Տեղանվան ստուգաբանության շրջանակներում քննության ենթակա է նաև **կյափ/կ'ա̈փ** բառը՝ «**Կյափ**-բեռ կապելու գործիք, ծնկի և աճուկի միջև եղած մսեղեն մասը»[25]: Հետաքրքրականն այն է, որ տարածքը իսկապես նման է «**կյափ**»-ի՝ «ծնկի և աճուկի միջև եղած մասի», որի նմանությամբ, հնարավոր է, ժողովուրդն անվանել է տեղանքը: Կարծում ենք, որ մարմնի մասերից առաջացած տեղանունները իրենց իմաստում պահպանում են զուտ համեմատության մասը, որից բառերը բազմիմաստություն են ստանում և երբեմն շատ հեռանում նախնական իմաստից: Այսինքն՝ բառը նախնական իմաստից հեռանալուց հետո կարող էր տրվել բնակավայրին, կամ տեղանքին տրվող իմաստից բառը կարող էր նոր նշանակություն ստանալ, ինչպես՝ **գլուխ, կատար** և այլն: Ասվածը, իհարկե, չափանիշ չէ, կարող են լինել բացառություններ, բայց կան օրինակներ, որ խոսում են մեր սահմանումի օգտնին, ինչպես՝ **Բռուն** «քիթ», որի այլաբանական իմաստներից են «ծայր, կախված մաս» և այլն, այլև՝ **Կոռն/ի ձոր/, Ծնկատափ:**

Կ'ո̈ւփեր տեղանվանը նմանություն ունեն բարբառներում տարածված մի շարք բառեր: Հայոց լեզվի բարբառային բառարանում առկա են՝«**կյափ, կյեփ**-Արց. «կանթանման երկճյուղ փայտիկ՝ թոկի ծայրին կապվող, կեռ», **գափ**-Արց. «զվարճախոսություն», «**գափ**-Արց. «սրունքի միսը, ազդր, սրունքի հաստ ոսկորը», «**կյուփ**-Վն. «խիտ», «**կուփն/ի**- Արց. «հրել, բոթել», «**կուփել**-Մղր. «սպանել, հարվածել», «**կուփի-կուփի**-Ար. «արագ, շտապ», «**կուփիճ**-Արց. «կիպ, մոտ, նաև՝ գորգագործական երկաթե գործիք՝ ծեծելու համար»[26]: Սրանցից քննվող տեղանվանը առնչակից կարող են լինել **կուփիճ** «մոտ»**, կյեփ** «երկճյուղ փայտիկ» բառերը: Վերջինը հավանաբար հենց **կյափ** «ծնկի և աճուկի միջև եղած մասի» բառի իմաստից է առաջացել, իսկ մյուսը՝ «մոտ» իմաստով, թերևս ավելի հավանական է՝ կազմելու տեղանվան բաղադրիչ. **վեր, վար, ներքև** ձևերից սովորաբար առաջանում են տեղանուններ, ինչպես՝

---

[21] Վերին Ծեն բնակավայրից մոտ 1,3 կմ:

[22] ՀՀ Մշակույթի նախարարության հուշարձանների տեղեկատվական շտեմարանում «**Գյավուրի բները**» նշված է որպես ուշ միջնադարի գյուղատեղի 8.96.4 թվի տակ, և զբաղեցնում է 0.4 հա տարածք, որտեղ պահպանվել են կողոպտված դամբարաններ:

[23] ՆՀԲ, հ. Ա-Կ, 1126:

[24] Տե՛ս **Ղարագյոզյան Ա.,** 1985, թիվ 1, 60:

[25] Նույն տեղում, 411:

[26] Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Գ, 2004, 219–221:

Վերին Ծնն և այլ: Այս դեպքում էլ, ենթադրելի է, որ պետք է գործ ունենայինք մի հարադրության կամ թերևս բարդ բառի հետ, որ, ինչպես նկատելի է, գրեթե բացառվում է քննվող բառում:

Հայերենում առկա ձևերի կողքին հարկ է ստուգել բառի ձևերը փոխատու այլ լեզուներում:

Թուրքերենում այս բառի արմատին մոտ ձևեր առանձնապես առկա չեն: Թուրքերենում կա **güpegündüz-** «օրը ցերեկով»`[27] güpe-gün-düz: **Güpe** արմատով առանձի բառ չկա թուրքերենում, և այս արմատը միայն հանդիպում է նշված բաղադրյալ կազմության մեջ: Թուրք. **gabi**-«հիմար, ապուշ, տխմար» բառը փոխառված է արաբ. **غـبي** /gabi/ նույն իմաստով ձևից, և կարծում ենք, - առնչություն չունի քննվող բառի հետ: Նույնիսկ ժողովրդի մեջ կա տեսակետ, որ **Կʼուփեր-ը գյավուր** բառի փոփոխված ձևն է, որ տրվել է տեղանվանը: Այս շփոթությունը թերևս եկել է «**Գյավուրի բներ**» տեղանքի հետ նույնացումից, որոնք, սակայն, բոլորովին տարբեր վայրեր են, ինչպես հավաստում են տեղաբնիկները: **Գʼավուր** բառը, որ ընդունվում է թյուրքերենից հայերենին անցած փոխառություն, առկա է թուրքերենում տարբեր կազմություններով՝ **gâvur, gâvurca, gâvurluk** «ոչ մուսուլման, անհավատ»[28] և նման իմաստներով: Ընդ որում՝ սա թուրքերենին անցած արաբական փոխառություն է՝ **ركاف** **(gavur),** որ ունի նույն նշանակությունը: Նշենք, որ բառը մահմեդականների կողմից տրվում է քրիստոնյաներին: Թուրք. **küp** արմատն ունի «կավե խոր աման» նշանակությունը, որ ադրբ. դարձել է **габ**՝ նույն իմաստով: Այս լեզուն քննվող տեղանվան մոտ ունի **гэбир, кор*** «գերեզման» բառերը, թուրք.՝ **kabir** արաբ. փոխառություն է՝ **قــبر** **(qabr)** «գերեզման» իմաստով: **Kap/b** արմատով թուրքերենն ունի «աման, կափարիչ», իսկ ադրբ. **kop/kor**/-ի դիմաց չունի «գերեզման» իմաստով բառ: Եթե ընդունում ենք, որ **Կʼուփեր** տեղանունը **գʼավուր** աղավաղված ձևն է, ապա պետք է անցած լինի արաբերենից, որովհետև մեր տարածքի բարբառներում, այդ թվում՝ Ար., Թբ., Արց., Սս., Վն, Կր. և այլն, այն գործածվում է **գ**-ով[29], ինչպես փոխատու լեզուներում: Բացի այդ, **գʼավուր** բառի մեջ **վ**-ն դժվար տար **փ**: Այնպես որ, ինչպես շատ երկար ժամանակ կարծել են, տեղանունը կապ չունի **գʼավուր** բառի հետ: Թերևս մոտ է արաբերենի **قــبر** **(qabr)** «գերեզման» բառին, քան արաբերենից անցած թուրքերեն ձևին՝ **kabir**, որովհետև **qabr** բառի վերջադիր հորանջը՝ **qab-r**, որ արտահայտվում է **ը**-ով, օրինակ, Գորիսի բարբառում կարող է տալ **օ, ը, ու, է||ու**, բայց ոչ **ի**: Սյունիք-Արցախ բարբառային տարածքում ինչպես բարբա-

[27] Турецко-русский словарь, 1945, 222:
[28] Նույն տեղում, 199:
* Նայել հավելվածը:
[29] Այս մասին տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Ա, 2001, 260:

ռային, այնպես էլ փոխառյալ ձևերի հետ **ր**-ով, **ռ**-ով, **ղ**ով վերջավորվող բառերում առկա **ը**-ն կարող է դառնալ՝ **բարձր-պարցուր||պէրցուր**, **ճիպռ-ճէպուռ||ճեպռ**, **ոսկոր-վօսկէռ||վէսկէռ||վօսկուռ** և այլն[30]: Իսկ բարբառում թուրք. **ա/a/** կամ ադրբ. **ə**-ն **ու**-ի վերածվելը համարյա բացառված է: Բարբառում առկա է **ա>ու** անցումը հազվադեպ դեպքերում, երբ բառը բուն ձևից շատ է հեռանում, օր.՝ **երնջակ-ըռէշնուկ**: Այնպես որ, ինչպես քննությունը ցույց տվեց, **Կ'ռւփեր** անվան նույնացնելը թուրքերեն, ադրբեջաներեն և նույնիսկ արաբերեն ձևերի հետ բավականին դժվար է հնչյունների անհամատեղելի փոփոխությունների պատճառով:

Հիշենք, որ վերևում բերված բառերը, նրանց իմաստային, հնչյունական ձևերի վերլուծությունը բերված են զուտ այն նպատակով, որպեսզի տեսնենք՝ արդյոք կարո՞ղ են կազմել **Կ'ռւփեր** տեղանվան հիմքը: Եվ վերջապես՝ դրանցից ո՞րը կարող է լինել **Կ'ռւփեր-ի** սկզբնաձևը:

Այսպիսով՝ մեզ մնում է հանգել այն տեսակետին, որ **Կ'ռւփերը** կամ բարբառում եղած հնագույն փոխառությունից է՝ **gubb, gubba «գուբ, փոս, ջրհոր, բանտ»** իմաստներով, որ հետագայում հոգնակիություն է ստացել՝ **-եր**՝ **«փոսեր, գուբեր»,** կամ հ.-ե. ***qeup/*qeub** արմատն է: Մենք հակված ենք առաջին ձևին՝ որպես հնագույն փոխառություն, որ գործածական է եղել հայերենում ու նրա տարբերակներում:

2. Ըղվերձ-Ըղվերծ

Չլուծված է մնում այն հարցը, թե **Կ'ռւփեր** տեղամասում որ բնակավայրն է եղել: Մինչև 19-րդ դարը **Կ'ռւփեր** վայրը չի նշվում: Հետագա նշումներում հղումը տրվում է բանավոր զրույցներին: Այս տարածքը, ըստ էության, համընկնում է Ս. Օրբելյանի Հաբանդ գավառի հարկացուցակում նշված Ակներին[31] հարակից **Ըղվերձ** բնակավայրին, որ 12 միավոր հարկ է վճարել Տաթևին: Ինչպես նկատում ենք, բնակավայրը փոքր չի եղել և «Սյունիքի պատմության» հարկացուցակում ընկած է **Ականա**, այժմյա **Ակներ** գյուղից առաջ՝ **Բորոտանից** հետո[32]: Տեղանվան արտաքին տեսքից երևում է, որ բարբառային հնչեղություն ունի առաջին բաղադրիչում՝ **ըղու/վ**, որով ուրիշ գյուղ կա Սյունիքի Հաբանդ գավառի Ծղուկում՝[33] **Ըղուերծ**[34]**:** Ստ. Օրբելյանը մի կտակի վկ-

---

[30] Այս մասին տե՛ս **Մարգարյան Ալ.,** Գորիսի բարբառ:

[31] Ճիշտ են նկատել հին բնակատեղիները ուսումնասիրող հեղինակները, որ **Ակները** նույն **Ակն /Բռուն/** գյուղն է, որի կողքին նշված գյուղերի գտնվելու վայրը ցայսօր գրեթե անհայտ է:

[32] Ըստ **Օրբելյանի Ս.,** 1986:

[33] Ըղվերձը համարում են Սիսիանի Դարաբաս գյուղի հին անունը. «Նախկինում գյուղի անունն Ըղվերձ է եղել, հետո գյուղը վերանվանվել է Դարբաս: Գյուղի նոր անվան առաջացման վարկածները երկուսն են. նախ՝ որ այդ ուղղությամբ գտնվող գյուղերի համար դարբաս է հանդիսանում, և երկրորդ՝ որ թուրքերը չեն կարողացել ներս մտնել ու ասել են՝ «Դարանը բաստ

պյության մեջ նշում է «Ըղվերծի երեց՝ Մխիթարի որդի Սաղոկի»-ն: «Պատմության» տարբեր հրատարակություններում ինչ-որ շփոթություն կա. «Ըղվերծի երեց»-ը ո՞ր գավառից էր՝ Ծղուկի՞ց, թե՞ Հաբանդից /Ըղվ/ու/երծ/ձ/ի/: Կարծում ենք խոսքը Հաբանդի **Ըղվերձի** մասին է, որ ավելի մեծ էր, քան Ծղուկինը (վերջինս Տաթևին տալիս էր 10 միավոր հարկ):* Հիմա դժվար է որոշելը, թե Տաթև տարվող ջրի ակունքը Ականայի՞ սահմանում է եղել, թե՞ Ըղվերծ/ձ-ի: Հեղինակները նշում են Ականայի ջրամբար՝ թվագրելով 1294 թ.[35], հավանաբար այն պատճառով, որ որոշակիացված չի եղել **Ըղվերձի** վայրը:

Ըղվերձ-Ըղուերծ-Ըղվերծ ձևերը, ակնհայտ է, նույն բառի գրավոր տարբերակներն են: Բոլորն էլ կան Ստ. Օրբելյանի պատմության մեջ: Բառի կազմության համար դրվում է երկու ձև՝ **աղու-երծ** կամ **աղ-որձ՝** իրենց հնարավոր փոփոխություններով:

Աղու-երծ: **Աղ-ու** բառը հայերենի տարբերակներում հիմնականում տրվում է «աղի» իմաստով: Սրանից բացի մեր լեզվում կա նաև հ.-ե. լեզվից **աղու** բառի «քաղց, անուշ, մեղմ» իմաստները, որ նշվում է նաև մատենագրության մեջ: Այդ մակդիրը տրվել է Սիսակին[36], և հավանական է կարծել, որ գործուն է եղել հայերենում: Այդ իմաստով շատ բառեր կան՝ հմմտ. **Աղուանք, Աղվերան, աղալեզու, աղվամազ** և այլն[37]: Պոկոռնին բառի ձևիմաստային զուգահեռները նշում է բալթ.-սլավ. լեզուներում՝ **sald-to-, saldu-, salds , saldùs**՝ «քաղցր, անուշ»[38]:

Երծ արմատը առանձին քիչ է պատահում հայերենում: Այն հանդիպում է **զ+երծ** բառում, որ նշանակում է «ազատ, ապահով, անվտանգ»: Գրաբարում կա **զերծիլ** «փրկել, ազատել»: Հր. Աճառյանը այն դնում է բնիկ բառերի տակ, որ զուգահեռներն ունի այս իմաստով հնդիրանական լեզվախմբում՝ պահլ. **hizr**,

---

է», այսինքն՝ «Զորը լիքն է», և հնարավոր չէ մտնել»: Աղբյուրը՝ 168.am-ում /«Դարբաս գյուղը դատարկվել է»/ հոդվածի մեջ: Իհարկե, սա ժողովրդական ստուգաբանություն է. Դարբ/պ/աս անունով շատ տեղանուններ կան:

34 **Օրբելյան Ստ.,** 1986, 394: Այս գյուղը գտնվում է Ծղուկ գավառում:

* Չնայած չենք կարող անտեսել այն կարծիքները, որ Ծղուկի Ըղվերծը կամ Աղվերծը երբեմն կոչել են ավան կամ գյուղաքաղաք: Նույնիսկ նշում են, որ **Աղվերծը /այժմ՝ Դարբաս/** եղել է պատմական Ծղուկ գավառի նշանավոր ավանների շարքում՝ Անգեղակոթ, Շաղատ, Շաքի, Ակունք (Բազարչայ), Սյունի (արդի Սիսիան), Աղուդի, Սիսական (նախկինում՝ Սիսիան, այժմ՝ Հացավան), Որոտան, Տաթև, Վաղադի, Բռնակոթ, **Աղվերծ**: Այդ ավաններից հատկապես Աղիտուն (Աղուդին), Անգեղակոթը, Տաթևը, Վաղադին, Ակունքը և **Աղվերծ** կամ **Ըղվերծը** նաև ձեռագիր գրքեր գրելու վայրեր են եղել: XVII դարում գրքեր են գրվել, արտագրվել նաև Գետաթաղ և Լոր գյուղերում: Պատահական չէ նաև, որ այդ նույն XVII դարի 60-ական թվականներին այս երկու գյուղերում վերակառուցվել են ժամանակի Սյունիքի լավագույն եկեղեցիներից երկուսը /այս կարծիքին է Մ. Հասրաթյանը/:

35 **Григорян Г.,** 1990, 230.

36 Տե՛ս **Խորենացի Մ.,** 1968, 113:

37 Այս մասին մանրամասն տե՛ս **Աղաբեկյան Մ.,** 1990, թիվ 1, 168–171:

38 **Pokorny J.,** 1959, 878–879.

սանսկ. **sarĵ** և այլն, որ բոլորն ունեն ***serg´, *sr̥g´**[39]: **Զ+երծ** ածականը գրաբարում ունի նաև «ազատ, արձակ, անարգել, ապահով, անվտանգ» իմաստները, ուր **զ**-ն, ինչպես նկատելի է, առանձնակի իմաստ չի հաղորդում բառին, քանի որ «զ-ն շատ հաճախ նախածանց է, որ դրվում է ամեն մի որոշյալ հայցականից առաջ»[40], այսինքն՝ **երծ**-ը պահպանում է իր իմաստը քննվող բառում որպես ածական: Պետք է ունենանք այսպես ասած երկու ածականից կազմված բառ՝ **մեղմ և ազատ**, թերևս՝ **անուշ և ապահով մի վայր**, որից էլ սերել է տեղանունը:

Է. Աղայանը «աղունք/աղն, եղծ, աղէտ, աղճատ»[41] բառերի տակ դնում է հ.-ե. ձևը՝ ***el, *ol**՝ «փչացնել, ապականել, ոչնչացնել, կործանել» իմաստներով: Հենց այդ արմատից էլ հանում է հայերենի եղեռն բառը: Նույն արմատից է հանում նաև **եղծ**-ը՝ «տձև, վատ, պակասավոր, փչացած» իմաստներով՝ **ըղվ/ու/երծ/ձ**/: Այս արմատի համար վերջադիր **ծ**-ն դնում է **որպես *g´** աճականի՝ ***elg´**[42]**:** Ստացվում է, որ գործ ունենք նույն արմատի կրկնությամբ ձևավորված մի տեղանվան հետ, որտեղ **աղ**-ի նախադիր **ա**-ն Գորիսի բարբառում կարող է դառնալ **ը**, ինչպես՝ **աղվես-ըղվես, աղաջուր-ըղաճուր** և այլն, **ու**-ն կարող է լինել սեռականի մասնիկ, որ շեշտազուրկ դիրքում կարող է **վ**-ի փոխվել՝ **ըղվեսահաչ, ըղվէսինք** և այլն, կամ լինել **ու** շաղկապ, որ շեշտից զրկված **ու>վ** համաբանությամբ դառնա **վ**: Իսկ ինչ վերաբերում է **եղծ/ել-ծ>երծ**[43] անցմանը, ապա պետք է նշել, որ հնդեվրոպական նախալեզվի **լ**-ն/**l**/ «արիականի մեջ շփոթվում է **r**-ի հետ»[44]: Ուրեմն կստացվի, որ այս տեղանվան **երծ**-ը իրանական ճյուղից փոխառություն է, որ չի պահպանել հայերենի համար **ղ**-ն՝ **եղ/ծ**/: Այսպես՝ ի մի բերելով տեղանվան արմատների հնչյունական դասավորությունը և իմաստները՝ ստացվում է, որ **Ըղվերձ/ծ-**ը «ապականված, կործանված, տձև նշանակությունն» ունի, որ կարող էր ստանալ մի դեպքում՝ Վարարակնի ափամերձ տարածքների մի ժամանակ ճահճոտ և անպիտան լինելուց, մյուս դեպքում՝ շատ հնուց ավերված, կործանված բնակավայր լինելուց:

Ըղվերձ բառի երկրորդ բաղադրիչը համանուն ունի բարբառներում՝ **որձ/վօրց/վըէրց**՝ «արու, արու կենդանի»: Բառի այս իմաստներից համաբանությամբ սերված են **վօրցակ** «աքաղաղ», **վըրցատու** «դախացած բույս, չբեր բույս, կոշտ, կոպիտ, ժամանակն անցած» կազմությունները: **Աղ/ու** արմատի

---

39 Տե՛ս ՀԱԲ, 92–93:

40 **Մեյե Ա.,** 1978, 142:

41 **Աղայան Է.,** 1774, 17–18:

42 **Աղայան Է.,** նույն տեղում:

43 Գ. Ջահուկյանը ***selg´, *serg´** հ.-ե. ձևերի տակ դնում է **զ-երծ**-անիմ:

44 **Աճառյան Հր.,** հ. VI, 1971, 499:

վերոնշյալ իմաստները **որձ**-ին չեն զուգակցվում, ուստի չենք քննում **Ըղվերձ**-ը **աղու** և **որձ** բաղադրության շրջանակներում:

Ստ. Օրբելյանի նշած **Ըղուերձ**-ը, ենթադրում ենք, համապատասխանում է առաջինի նշանակությանը՝ **անուշ և ապահով մի վայր:**

3. Բնակավայրի տեղադրության որոշման փորձ

Տեսնում ենք, որ **Ըղվերձ** տեղանվան բացահայտման երկու փորձերն էլ չեն համընկնում հետագայում **Կ՚ուփեր** կոչված բառին ո՛չ ձևով և ո՛չ իմաստով: Հենց այս առումով դժվարություն է ստեղծվում հնավայր **Ըղվերձի** տեղադրման համար: Մենք այսօր գիտենք **Կ՚ուփեր** հին բնակատեղին[45], իսկ **Ըղվերձի** համար տեղեկություն չունենք անգամ տեղանունների համեմատությունից: Պետք է նշել, որ Ստ. Օրբելյանի Տաթևի հին հարկացուցակում ընդգրկված գյուղերի հերթականությունը խաբուսիկ է: Կարծում ենք, գրչագրումներից խախտվել են տեղերը, կամ հեղինակը զուտ պատահականությամբ է դասավորել: Իրարից տարբեր են նաև Ստ. Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» աշխատության հրատարակությունները[46]: Այնուամենայնիվ, կան գյուղեր, որոնց հերթականությունը ինչ-որ կերպ համընկնում է: Օրինակ՝ եթե նշված հարկացուցակին հետևենք, ապա **Կ՚ուփերը** և **Ըղվերձը** հարևան բնակավայրեր են եղել: Իսկ եթե բառի արմատական նշանակությունը դիտարկենք, ապա **Կ՚ուփերից** մոտ 1 կմ հյուսիս-արևելք՝ ալպյան բաց, ազատ տարածության վրա պետք է ընկած լիներ **Ըղվերձը**, ինչպես նշվում է բառի առաջին բացատրության մեջ: Ստ. Օրբելյանի՝ Տաթևի հին հարկացուցակի այս մասում, կարծես, տեղագրական որոշակի համապատասխանություն կա՝ **Ըղվերձ**, դրանից հարավ-արևելք՝ **Ականա**, սրանից հարավ արևմուտք՝ **Պետրոսկա վանք**՝ ներկայիս Վերիշե՞ն, վերջինից արևելք՝ **Աղոջրիկ**: Ըստ այս դասավորության՝ **Կյուփերը** պիտի համապատասխանի **Բորոտան / Քարոտան** գյուղին, որ հավանաբար ընկած է եղել **Պետրոսկա վանքից** արևելք և **Ականայից** հարավ-արևելք[47]: Սակայն նույն աշխատության՝ Մոսկվայի 1861թ. հրատարակության մեջ այսպիսինն են հերթականությունն ու գյուղերի անվանումները՝ **Բողեան, Ցօղունի (Ցատղոնի), Բորոտան (Քարոտան), Ագա-**

---

[45] **Կյուփերի** գտնվելու վայրը այսպիսին է. այն Վարարակն գետի աջ մասում է, շրջակա սարահարթից ցածր, ձախափնյա տեղանք-բնակավայրերից բարձր դիրքի վրա: Մինչ այստեղ շինարարական աշխատանքներ ձեռնարկելը, հիշում են, որ եղել են բնակավայրեր և նույնիսկ հին վանքի սրբատաշ պատեր: Տեղանքը հարմար է եղել վարուցանքի համար: Նրա վերին լանջերը անտառապատ են:

[46] Մենք համեմատել ենք նույն աշխատության Մոսկվայի՝ 1861 թ., Թիֆլիսի՝ 1910 թ. և Փարիզի՝ 1861 թ. հրատարակությունները: Սրանց վերաբերյալ շտկումները ամբողջացած են 1986 թ. երևանյան հրատարակության մեջ:

[47] **Օրբելյան Ստ.,** նշվ. աշխ., 400:

րակ, Ըղուերձ, Անձկայք, Ականա, Զագաձոր, Պետրոսկայ վանք, Նախանձոր (Նախանձփոր), Աղնոյ ջրիկ: Այստեղ **Ըղվերձից** հարավ-արևմուտք ընկած գյուղը՝ Ագարակը, համապատասխանում է **Կ'ռւփերին**, իսկ Ըղվերձը մնում է մեր նշած նույն տեղում: **Կ'ռւփերի** տարածքը իսկապես բարեբեր է՝ գետի ափին, արևկող, անտառի հարևանությամբ: Բայց ե՞րբ և ինչո՞ւ է այն անվանել **Կ'ռւփեր**, հայտնի չէ: Իհարկե, չենք բացառում, որ վայրի անունը մյուսների պես աղավաղված լինի քոչվորական ցեղերի առկայության հետևանքով: Չնայած շարունակում ենք մնալ այն կարծիքին, որ հին հարկացուցակում նշված տեղանունների հերթականությանը հետևելիս սխալները անխուսափելի են, այնուամենայնիվ փորձեցինք անունների ստուգաբանության և տեղանքի աշխարհագրական-պատմական նկարագրի զուգադրությամբ գտնել բնակավայրերի գտնվելու վայրը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աղաբեկյան Մ., Ստուգաբանական դիտողություններ «Աղուանք» տեղանվան վերաբերյալ, ՊԲՀ, թիվ 1, 1990, 168–171:

Աղայան Է., Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1774:

Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. VI, Ե., 1971:

Լալաեան Ե., Ազգագրական հանդէս, Դ. Գիրք, թիվ 2, Շուշի, 1898:

Խնկիկյան Օ., Նորահայտ հուշարձան Գորիսում. ՊԲՀ, 1981, № 4, էջ 312–313:

Խորենացի Մ., Պատմություն հայոց, Ե., 1968:

Հայ-ադրբեջաներեն բառարան, Ե., 1978:

Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Երևան, 1977:

Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Գ, Ե., 2004:

Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Ա, Ե., 2001:

Ղազարյան Ռ., Գրաբարի հոմանիշների բառարան, Ե., 2006:

Ղարագյոզյան Ա., Սագաձորի տեղադրությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1985, թիվ 1, էջ 60:

Մարգարյան Ալ., Գորիսի բարբառը, Ե., 1975:

Մեյե Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978:

Պողոսյան Ս., Տաթևի համառոտ պատմություն, Ե., 2007:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային շրջան, Ե., 1987:

Օրբելյան Ստ., Սյունիքի պատմություն, Ե., 1986:

Григорян Г., Очерки истории Сюника IX–XV вв., Е., 1990.

Турецко-русский словарь, М., 1945.

Pokorny J., Indogermanisches-etymologisches Wörterbuch, bern-München, 1959, p. 878–879.

MHER KUMUNTS
PhD in Philological Sciences
prof1972@mail.ru

ON THE ETYMOLOGY OF THE TOPONYMS *Küper (Կʼո̈ւփեր)* and *Yghverdz (Ըղվերձ)*

SUMMARY

Finding out the meaning of the word *Küper (Կʼո̈ւփեր)* is important for clarifying a number of questions. The most important of them is first of all the fact that the given name has so far been wrongfully considered to be a variant of the toponym *Goris (Գորիս)*. Besides, the etymological study of the name under investigation can serve as a key to revealing the residence which was located in the place of *Küper* noted by S. Orbelyan in the old Tatev tariff list. And at last, several words borrowed by the Azerbaijani language from Armenian also emerge in the etymological framework of the word *Küper*. This toponym either comes form the Semitic *gubb, gubba* meaning *«գուբ, փոս, ջրհոր, քանտ»* which later obtained their plural forms as *«փոսեր, գուբեր»,* or from the Indo-European root **qeup/*qeub*. Our research allows us to think that *Küper* coincides with the name *Borotan (Բորոտան)*, which was near *Yghverdz (Ըղվերձ)*. The research also avails us of the opportunity to clarify the origin of the toponym *Yghverdz* as well as its geographical location. The fact that the *word kujr (կույր) – kor (ք ոռ)* passed from Armenian to Azerbaijani is also established.

МГЕР КУМУНЦ
кандидат филологических наук
prof1972@mail.ru

ЭТИМОЛОГИЯ ТОПОНИМОВ
Кюпер (Կʼո̈ւփեր) и *Әхвердз (Ըղվերձ)*

РЕЗЮМЕ

Выяснение значения топонима *Кюпер (Կʼո̈ւփեր)* важно для прояснения нескольких вопросов. Самым важным из них является то, что слово по ошибке рассматривалось как искаженный вариант названия Գորիս. Кроме того, этимология топонима *Кюпер* является ключевым фактором для локализации населённого пункта *Кюпер*. Село упоминается в податных книгах старого Татева. И, наконец, в рамках исследования этимологии слова были обнаружены заимствования, вошедшие в азербайджанский язык из армянского. Название *Кюпер* происходит либо от семитского слова gubb, gubba со значением «գուբ, փոս, ջրհոր, բանտ» («яма», «колодец», «тюрьма»), которые впоследствии приобрели форму множественного числа — «փոսեր, գուբեր», либо от индоевропейского корня *qeup/*qeub. Мы считаем, что расположение села *Кюпер* совпадает с находившимся близ села *Әхвердз (Ըղվերձ)* селом *Боротан (Բորոտան)*. Определение происхождения названия *Әхвердз* и его локализация также стали следствием исследования этимологии слова *Кюпер*, как и то, что слово կույր-քոռ-kor было вошедшим в азербайджанский язык заимствованием из армянского.

ԱՐՏՈՒՇ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
artush-mkrtumyan@hotmail.com

ԱՆԹԱՐԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍԵՐԸ»

Բանալի բառեր. *Սենկովսկի, Համիլտոն, բեդվին, փերի, Գյուլ-Նազար, Պալմիրա, անապատ, քարավան, ավերակներ, ցունաշար, ապարանք:*

Մինչև վենետիկյան շրջանը՝ 1921 թ. «Լիլիթը» գրելը, Իսահակյանը սիրո թեմային նույն պատկերավորումներով անդրադարձել է արևելյան մի այլ՝ «Հավերժական սերը ավանդազրույցում: Երկու ստեղծագործություններով Իսահակյանն ասես ցանկացել է ընդգծել այն միտքը, որ ոչ թե սերն է ներդաշնակեցվում բնության գեղեցկությանը, այլ հակառակը՝ սիրո վայելքն է իր գեղեցկությունը փոխանցում բնությանը:

«Լիլիթի» նման «Հավերժական սերը» ևս ունի իր արևելյան տարբերակները: Այն նաև ավելի պատմականացված է և կապվում է «արաբական Հոմերոսի»՝ Անթարի կամ Անդարի հետ, ով համարվում է արաբական գրականության նախաիսլամական շրջանի մեծագույն բանաստեղծը, ընդ որում ռազմիկ բանաստեղծ, անապատի բեդվինների պաշտպանը և առաջնորդը: Անթար Իբն Շադդադին (525–615 թթ.) ո՛չ միայն ինքն է մի շարք ստեղծագործություններ գրել, այլև նրա մասին են դյուցազնավեպեր հյուսվել, որոնք 19-րդ դարում թարգմանվել են նաև ռուսերեն և հայերեն: 1833 թ. հրատարակված «Новоселье» ժողովածուի մեջ տեղ է գտել О. Ի Սենկովսկու «Անթար» վեպը, որն այնուհետև հայերենի է փոխադրել Գ. Պախալյանը: Այն տպագրվել է «Հյուսիսափայլի» առաջին համարում:

Սենկովսկու գրածի համեմատությունը Իսահակյանի «Հավերժական սեր» ստեղծագործության հետ ակնհայտորեն ցույց է տալիս, որ այն պետք է նախօրինակ է ծառայած լինի Վարպետի համար:

Մ. Մխիթարյանը Գ. Պախալյանի փոխադրության մասին գրելիս, սակայն հետևյալ կարևոր պարզաբանումն է տալիս. «Հայ մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանի «Հավերժական սեր» լեգենդը շատ հիշեցնում է վերոհիշյալ ստեղծագործությունը: Չհաշված սյուժետային փոքրիկ տարբերությունները, այդ երկու գործերի ոգին գրեթե նույնն է: Վարպետի հետ ունեցած մեր զրույցից պարզվեց, որ նա այդ լեգենդի գրության համար իբրև հիմք ըն-

դունել է «Անթարի երգեր» վերնագրով տարածված արաբական զրույցը և ժամանակին ծանոթ չի եղել սակայն Պախալյանի փոխադրությանը»:

«Բազմավեպի» 1858 թ. տարբեր համարներում «Անդար, արաբացի քերթուած» խորագրի ներքո լույս է տեսնում Անթարի քաջագործությունների տարբեր դրվագները ներկայացնող մի շարք, որին նախորդող առաջաբանում նախաիսլամական շրջանի արաբական բանաստեղծության ընդհանուր շրջագծում ներկայացվում է Անթարի կյանքը, ռազմական սխրագործությունները, գրած ստեղծագործությունները, ինչպես նաև իրեն ձոնվածները:

Սենկովսկու վեպը ըստ այդմ և հայերեն փոխադրությունը սիրո գերբնական, հրաշապատում բնույթ ունեն: Սիրո հավերժականությունը շարունակվում է ոչ թե իրական, այլ ոգեղեն աշխարհում:

«Անթարի» պատմության և նրա վերջաբանի վրա է հիմնված Իսահակյանի «Հավիտենական սերը»: Վեպի բուն պատմությունից Իսահակյանը վերցրել է Պալմիրայի կամ Թադմորի մի քանի գեղեցիկ նկարագրություններ, որոնք սակայն անհամեմատ դժգույն են Իսահակյանի ստեղծած պատկերների առջև:

Իսահակյանը պատմության վերջնամասը փոխել ու ներկայացրել է նոր մեկնաբանմամբ:

Սենկովսկին Անթարի մասին հերոսական և որոշակիորեն պատմական միջավայրում՝ արաբական ցեղերի շրջանակում գոյություն ունեցող այս պատմությունները կենտրոնացրել և կապել էր Պալմիրայի ավերակների հետ, ներկայացնելով արևելյան հրաշալիքների և «հազար ու մի գիշերների» ոգով գրված ստեղծագործություն:

Անթարի դյուցազնավեպի սիրիական կրճատ տարբերակը տարածված էր ողջ արևելքում և սիրված պատմություն էր հասարակական բոլոր շերտերի կողմից:

Սենկովսկին լինելով ոչ միայն գրող, այլև արևելագետ, 1819թ. ճանապարհվում է Արևելք:

Նույն թվականին Լոնդոնում լույս է տեսնում Թ. Համիլտոնի «Antar, a Bedoueen Romance, translated from the Arabie» գիրքը: Շնորհիվ այս հրատարակության Անթարի կերպարը հայտնի է դառնում եվրոպական ընթերցողին: Գրքի առաջաբանում Համիլտոնը գրում է, որ ինքը Անթարի մասին ոչ միայն գրական ստեղծագործություն է գրել, այլև ցանկացել է ազգագրական գիտելիքներ և նկարագրություններ տալ Արևելքի մասին:

Համիլտոնի ստեղծագործությամբ, ինչպես նշում է Պ. Ալեքսեևը, ռազմիկբանաստեղծ Անթարի մասին պատմությունն իր նոր ինքնուրույն կյանքն է սկսում եվրոպական գրականության մեջ:

Վերը հիշված «Անթար-արաբացի քերթուած» շարքը, որը լույս է տեսել «Բազմավեպում», ունի Համիլտոնի ստեղծագործության սյուժետային ընթացքը: Կա՛մ Համիլտոնի գործից կա՛մ վերջինիցս կատարված մեկ այլ փոխադրությունից է կատարվել հայերեն վերաշարադրանքը:

Արևելյան դյուցազնավեպում Անթարի հավերժական սիրո պատմությունն արտահայտվել է միանգամայն այլ ձևով՝ համահունչ անապատի բեդվինների հերոսական մտածողությանը:

Անթարի արևելյան պատմության մեջ հավերժական սիրո գաղափարը արտահայտվում է կենդանության ժամանակ և անգամ մեռնելուց հետո էլ ձիու վրա սիրած էակին պաշտպանելու բեդվին ցեղերի հերոսական մտածողությամբ: Այն հարազատորեն արտահայտված է նաև Համիլտոնի մոտ:

Անթարին Սենկովսկին հերոսական այս միջավայրից փոխադրել է արևելյան հարեմական և հեքիաթա-ջինային մտածողությանը բնորոշ աշխարհը: Ինչպես գրում է Պ. Ալեքսեևը, Սենկովսկին գիտակցաբար Անթարի մասին մի նոր առասպել է ստեղծել ռուս ընթերցողի համար :

Միևնույն գաղափարը երկու հեղինակների մոտ երկու տարբեր ձևերով է արտահայտվում: Երկու դեպքում էլ մահից հետո Անթարը ծառայում է սիրած էակին: Մի դեպքում ձիու վրա հսկելով, որ նա դուրս գա վտանգից, մյուս դեպքում սիրելիի գրկում: Իմաստային այս վերափոխությունը հանգեցրել է նրա անվան փոփոխության: Արաբական ցեղախմբերի Ապլա անունը դարձել է արևելյան հարեմական միջավայրին բնորոշ վարդ բառով սկսվող Գյուլ-Նազար:

Սիրո՝ մահվանը հաղթելու գաղափարը արևելյան դյուցազնական վեպում եթե արտահայտվում է մահից հետո սիրած էակին պաշտպանելու ձևով, ապա Սենկովսկին ռոմանտիզմի հավերժական սիրո գաղափարն է արտահայտում Գյուլ-Նազարի գրկում առարկայորեն պահպանված աճյունի միջոցով:

Ալեքսեևը նշում է, որ Համիլտոնը արևելյան հերոսական մտածողությանը համահունչ է ներկայացրել անգլիական ջենտլմենությունը՝ Անթարը նստել է ձիուն, ջենտլմենաբար հենված նիզակին և հետապնդողներից պաշտպանում է իր ընտանիքը, այնինչ Սենկովսկին այս պատմության միջոցով արծարծում է սիրո և հավերժության հարցը:

Սենկովսկին Անթարի մասին պատմությունը սկսում է ավազափոշու մեջ կորած Պալմիրայի ռոմանտիկական էլեգիայով: Համաձայն արաբական ավանդազրույցների, Թադմորի կամ Պալմիրայի գեղեցկուհի փերիներից էր նաև Լիլիթը: Նրա հետ է համեմատվում անգամ Անթարի հավատարիմ նժույգը, որը համարվում է Լիլիթի կենդանական փոխակերպումներից մեկը: Ըստ արաբական ավանդությունների Լիլիթի գերեզմանը գտնվում է սիրիական

Թադմորում: Արևելյան հիշյալ ավանդազրույցներին քաջածանոթ Իսահակյանը անհնար է, որ չիմանար նաև այս մասին:

«Հավերժական սերը» ստեղծագործության արձակ (1911 թ.) և չափածո (1914 թ.) տարբերակներից հետո 1921 թ. «Լիլիթը» գրելիս, Իսահակյանը փերիների պարզված հավերժական սերը փոխարինել է փերիների մի տարատեսակը եղող Լիլիթի՝ Ադամին պատճառած անհաս սիրո հավերժական տառապանքով, հիմնվելով թերևս նաև Լիլիթի ավանդազրույցների Պալմիրայի հետ կապված տարբերակների վրա:

Ինչպես որ Սենկովսկին Անթարի մասին պատմությունների հիման վրա միանգամայն նոր մեկնաբանությամբ նոր ստեղծագործություն է գրել, նույն ձևով Իսահակյանը մի շարք դեպքերում գրեթե բառացի հետևելով Սենկովսկուն, կատարել է նոր ընդհանրացում, առավել խտացնելով հավարժական սիրո գաղափարը, այն ազատելով արկածային վիպական բոլոր մանրամասներից՝ գործողությունները կենտրոնացնելով Թադմորի ապարանքում, որտեղ սկսվում, բայց չի ավարտվում նրանց սերը: Անապատը և ժամանակի մոռացության ավերիչ փոշին պատում են հիասքանչ քաղաքը, այն վերածում ավերակների կմախքի, սակայն աննվաճ են մնում հավարժական սիրո առջև:

Ինչպես գրում է Գ. Հովհաննիսյանը, սիրո «անպարտելիության ուժը բանաստեղծը բացահայտում է սերը աստիճան առ աստիճան օղակելով մահվան տիրական շնչով»:

Ավանդության արձակ վերամշակումը չափածո դարձնելով, Իսահակյանը միայն բանաստեղծական վերաշարադրանքի չի, որ ենթարկել է այն, այլև գեղարվեստական վերացարկմամբ մի քայլով ևս հեռացրել Սենկովսկու ստեղծագործությունից: Արձակում առանձին տեղերում եթե երևում են ռուս գրողի «Անթարի» հետքերը, ապա դրանք լիովին ջնջված են չափածոյում: Վերջինս կրել է նաև իմաստային կարևոր մի շրջափոխություն կապված երկու սիրահարների հետ:

Սենկովսկին մի կողմ է թողել Անթարի կյանքի սխրագործությունները, դրանց մասին հիշատակելով հերոսի մի քանի հետահայաց խորհրդածություններում: Նրա բազմաթիվ արշավանքները փոխարինվել են վրեժխնդրության և իշխանության հետ կապված սյուժետային երկու դրվագներով, որոնցից դուրս ներկայացվում է նրա կյանքը, կամ ավելի ճիշտ սերը Թադմորի ապարանքում մինչև մարմնի փոշու վերածվելը ու մի անգամ ևս սիրո վայելքը զգալը իր աճյունափոշուն Գյուլ-Նազարի արցունքի միախառնմամբ:

Անթարի մասին Սենկովսկու պատմությունը եթե կենտրոնացած էր Գյուլ-Նազարի շուրջը, ապա Իսահակյանի մոտ այն ընդհանրապես հանգում է արաբ ռազմիկի ամբողջապես սիրուն տրվելուն: Իսահակյանի մոտ արաբական անապատում որևէ գործողություն չի կատարվում: Անապատն ինքն է

հարաբերվում Պալմիրայի հետ: Նշանավոր ռազմիկ Անթարի սխրանքների մասին որևէ հիշատակություն չկա: Անթարը միանգամից պատկերվում է ընկղմված սիրո հավերժական և անսահման ընթացքի մեջ: Ըստ այսմ Իսահակյանի գրական վերամշակումը հիմնված է Սենկովսկու «Անթարի» առաջին մի քանի տողերի վրա, ուր ներկայացվում է Թադմոր-Պալմիրան և ապա վերջին այն հատվածի, ուր առաջին երկու դրվագներից հետո ետ վերադարձած Անթարը տրվում է հավերժագեղ փերուն: Ընդ որում դուրս է թողնված նաև Անթարի պայմանադրությունը, որ երբ իր սերը մարի, Գյուլ-Նազարն առնի նրա հոգին:

Անթարի պատմության Սենկովսկու մշակումը այժմ համեմատենք «Հավերժական սերը» ստեղծագործության արձակ տարբերակի հետ, իսկ վերջինս՝ նրա չափածոյի հետ: Կարելի է ասել, որ եթե արձակ տարբերակը Սենկովսկու «Անթարի» մշակումն է, ապա չափածո տարբերակը նույն այս ստեղծագործության արձակ տարբերակի մշակումն է:

Արձակ տարբերակն սկսվում է հետևյալ նախադասությամբ. «Քնքուշ գլուխդ դի՛ր կրծքիս, իմ նազելիս, ես քեզ պիտի պատմեմ ոսկի հեքիաթներ…» : Այն բացակայում է Սենկովսկու մոտ: Այստեղ Իսահակյանը հետևել է արևելյան հեքիաթների և մասնավորապես «Հազար ու մի գիշերի» սկսվող հեքիաթների մուտքի խոսքերի պատմելաոճին.

Անթար՝ «Հյուսիսափայլ»- Գեղեցիկ է Շամ անապատը. գեղեցիկ են Շամ անապատի մեջ կախարդական Թադմորի ավերակները: Ո՞վ է կառուցել այս հոյակապ ապարանքի մեջ… Որի համար կառուցած են այս տաճարները … Ո՞վ է շինել այս երկար ու ձիգ, սիւնազարդ փողոցները …»:

Антар «Прекрасна Шамская пустыня; прекрасны в Шамской пустыне развалины волшебного Тедмора. Кто жил в этих огромных чертогах?.. Кому воздвигнуты эти храмы?.. Кем построены эти длинные улицы столбов?»

Իսահակյան. «Շքեղ են և հոյակապ Թաթմորի արքայական ապարանքները, պորփյուրե աստիճաններով բարձրադիր պատվանդանի վրա խոյանում են յոթն հարյուր մարմարյա սյուներ, որոնց վրա հանգչում է ապարանքի չքնաղակերտ առաստաղը երկնասլաց աշտարակով» (5, էջ 156):

Իսահակյանը շքեղության նոր փայլ է հաղորդել Պալմիրայի ավերակների նկարագրությանը, որով սկսվում է Անթարի պատմությունը: Սյունազարդ ավերակնրի քաղաքի նկարագրության մեջ նա հիշում է 700 մարմարիոնյա սյուներ: Նաև ավելացրել է հեքիաթային պատմություններին բնորոշ սիրո աշտարակը:

Սենկովսկու մոտ ասվում է. «Воздух был напитан свежестью и раскошным запахом алоя»: Ռուսերեն բնագրին համահունչ հայերեն թարգմանությունում ասվում է. «Օդը լցուած էր զովութեամբ և հալուէի զեղխ

անուշահոտութեամբ»: Իսահակյանի մոտ այն արտահայտվել է հետևյալ ձևով. «Ապարանքի եբենոսյա դռներից արաբական զմուռսների բույրն է բխում գիշեր ու ցերեկ»:

Իսահակյանի մոտ թե՛ արձակ և թե՛ չափածո տարբերակներում այնուհետև անցում է կատարվում «Անթարի» վերջին հատվածին, ուր երկու սիրահարներն արդեն վայելում են սիրո քաղցրությունը: Գյուլնազարն արձակում և չափածոյում անվանվում է Բամբիշ, իսկ Անթարը չափածոյում վերանվանվել է Էլ-Սանա:

Իսահակյանական շքեղ նկարագրությունները չկան Սենկովսկու մոտ: Դրանք Վարպետի ստեղծագործական երևակայության արգասիքն են՝ հիմնված Արևելքի ու արևելյան պատկերների նրա քաջիմացության վրա:

Այս ստեղծագործության մեջ տեղ գտած արևելյան նկարագրությունների մասին Ա. Ղանալանյանը գրում է. «Լեգենդն աչքի է ընկնում իր արևելյան երանգավորումով, գունեղ ու ճոխ լեզվով, գեղարվեստական սքանչելի նկարագրություններով, բանաստեղծական վառ ու ինքնատիպ պատկերներով, որոնք հոյակապ քանդակների նման զարդարում են գրվածքի ողջ շենքը»:

«Անթարը» գրելիս Իսահակյանը զուգահեռ ընթանալով տեքստին ոչ թե լեզվաոճական փոփոխություններ է կատարել, այլ սյուժետային փոփոխության է ենթարկել:

Ոչ միայն Անթարի պայմանի մասին որևէ հիշատակություն չկա, այլև Բամբիշն է մահանում Անթարի գրկում և ոչ թե հակառակը(5, էջ 157):

Իսահակյանը կիրառել է մարդկային հոգեվիճակի և բնության պատկերների զուգահեռականության սկզբունքը (պարալլելիզմը): Բնությունը ոչ թե ինքնին գեղեցիկ է, այլ արձագանքում է մարդկային հոգեվիճակներին: Նույն իրավիճակը տեսնում ենք նաև «Լիլիթում», ուր Լիլիթն իր ներկայությամբ հրեղեն հմայք է հաղորդում դրախտի կանոնիկ այն գեղեցկությանը, որը հետո ձանձրացնելու էր նաև Ադամին:

Հավերժական սերը երկու դեպքում էլ արտահայտվում է դիմացինին սիրո շունչը ներարկելու փորձով: Կյանքի հեռանալու այդ պահը թեև պատկերային որոշակի տարբերություններով, սակայն հոգեբանական նույն վիճակի արտահայտությամբ են ներկայացրել երկու գրողները.

Սենկովսկի. «Հավատարիմ փերին բաց չէ թողնում նորան իւր գրկից: Նա սիրավառ սեղմում է իւր սիրականի սառն դիակը, ողողելով նորան ջերմաջերմ արտասուքով: Նորա ջերմութիւնը տաքացնում է մարմարինեայ մարմինը Անթարի և սառն դիակը դեռևս զգում է սիրո քաղցրութիւնը իւր մակերևույթի վերայ»:

Իսահակյան. «Եվ ամուր գրկել է Անթարը մեռնող, դժգունող բամբիշին, բոցավառ համբույրներով հպել է նրա կարկամած, սառած շրթունքներին և իր ջերմ, հրեղեն շունչն է ներարկում» (5, էջ 157):

Արևելյան ավանդությունները և Սեկովսկու «Անթարը» այն ենթախորքն են, որ հասկանալի են դարձնում Իսահակյանի համանուն ստեղծագործության հերոսի պայքարը մահվան դեմ, որպես հավերժական սիրո հաղթանակի: Սենկովսկու մոտ քանի որ Գյուլ-Նազարն է ողջ մնում և նա փերի է, ով մահ չունի, հավերժական ընթացով է գրկում Անթարին, ապա և նրա աճյունափոշին: Իսահակյանի մոտ երկու սիրահարներն էլ հողեղեն են և երկուսն էլ դատապարտված են երկրային քայքայմանը, ուստի նրանց մարմիններից հետո նրանց սերն է, որ շարունակվում է. «Անցնում են տարիներ, և նորից տարիներ. Բամբիշը վաղուց հյուծվել է, քայքայվել, և դեղին ոսկորներն են սահավոր շողում լուսնկայի դժգույն ցոլքերի տակ» (5, էջ 158):

Բնության փոխվելը նրանց մարմինների քայքայմանը զուգընթաց ավելի ցայտուն է երևում չափածո տարբերակում, ուր բնության զուգահեռականությունը արտահայտվում է բանաստեղծական յուրաքանչյուր քառատողում, որտեղ չորս տողերից երկուսը վերաբերում են սիրահարներին, իսկ մյուս երկուսը՝ բնության ու ապարանքի նկարագրությանը.

Մահկանացու Անթար և մշտակենդան փերի հակադրությունը պայմանավորել է նաև երկու ստեղծագործությունների վերջին պարբերությունը և երկու ստեղծագործությունների դրանցում խտացած մեկնաբանությունը:

Սենկովսկու մոտ եթե փերին մի անգամ ևս Անթարին հաղորդում է սիրո քաղցրությունը, ապա Իսահակյանի մոտ, պայմանավորված երկու սիրահարների մահկանացու լինելով, բնությունն ու երբեմնի շքեղ ապարանքի աշտարակն են շարունակում պատմել հավերժական սիրո մասին. «Չորացել են ու չքացել արմավենիները, և անապատը իր դեղին քղանցքն է փռել Թաթմորի չքնաղակերտ ապարանքների վրա, ծածկել, անհետացրել է նրանց, միայն երկնասլաց աշտարակն է մնացել ավազուտ դամբարանի վրա կանգուն եւ անխորտակելի՝ հեռուներից եկող եւ դեպի հեռուները չքվող քարավաններին պատմելու Անթարի հզոր եւ հավաերժական սերը…»:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Սենկովսկու «Անթար» ստեղծագործությունն օգնում է ճիշտ հասկանալու հավերժական սիրո մասին հին արեւելյան ավանդազրույցի Իսահակյանի նորովի մեկնաբանությունը:

ARTUSH MKRTUMYAN
M. Abeghian Institute of Literature of NAS of RA
artush-mkrtumyan@hotmail.com

THE ARABIC TRADITION ABOUT ANTAR AND THE "EVERLASTING LOVE" BY ISAHAKYAN

SUMMARY

Avetik Isahakyan wrote his work "Everlasting Love" in a poetic version in 1911 and in a prose version – in 1914.

It has eastern prototypes and is related to the "Arabic Homer", i.e. Antar Ibn Shaddad (525–615), who is considered to be one of the greatest poets of the Arabic pre-Islamic literature. He was also the defender and leader of the desert Bedouins. Epics were created about him, which were translated into Russian and Armenian in the 19th century. In 1833, a novel entitled "Antar" by I.O. Senekovsky was published in Russian, the Armenian translation of which was published in 1859. The comparison of Senekovsky's writing with the work "Everlasting Love" shows that Isahakyan followed Senekovsky during the literary elaboration of this legend.

Isahakyan condensed the idea of the everlasting love existing in eastern tradition liberating it from all the adventurous epic details and concentrating the acts in the court of Palmyra Tadmor, in which their love initiated, but not ended. The time and the ruining dust of the oblivion in the course of time embrace the wonderful city, converting it to ruins, where, however, Antar's love continued.

There is no reference to the feats of the famous warrior Antar in Isahakyan's work. The famous warrior is directly portrayed submerged into the everlasting and infinite course of love.

The eastern traditions and Senekovsky's "Antar" are the bases that make the struggle of the hero comprehensible in Isahakyan's work which is against death, and a triumph of everlasting love.

АРТУШ МКРТУМЯН
Институт литературы им М. Абегяна НАН РА
artush-mkrtumyan@hotmail.com

АРАБСКОЕ ПРЕДАНИЕ ОБ АНТАРЕ И ПРОИЗВЕДЕНИЕ ИСААКЯНА «ВЕЧНАЯ ЛЮБОВЬ»

РЕЗЮМЕ

Произведение «Вечная любовь» было написано Ав. Исаакяном в 1911 г. в стихах, а в 1914 г. – в прозе. Прообразом героя является историческая личность – Антар Ибн Шаддадин (525–615 гг.). Он был величайшим поэтом арабской литературы доисламского периода, которого называли «Гомером Востока». На протяжении веков об Антаре слогались эпические повествования, в 19-ом веке переведенные на русский и армянские языки.

Статья посвящена сравнительному анализу романа Сенковского «Антар» (1833 г.) его армянского перевода (1859 г.) и произведения Исаакяна «Вечная любовь».

В произведении поэт более развивает присутствующую в восточных приданиях тему вечной любви, освобождая ее от всех подробностей приключенческого романа и сосредоточивая действие во дворце Тадмор в Пальмире. Здесь зарождается, но не заканчивается любовь героя.

Восточные придания и роман Сенковского «Антар» помогают нам воспринимать борьбу героя произведения Исаакяна против смерти как победу в вечной любви.

REPORTS
ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԴԵՐԵՆԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ
«Ալիք» օրաթերթ

XX ԴԱՐԱՍԿԶԲԻ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ (ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ)

Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքում 1636 թ. Խաչատուր վարդապետ Կեսարացու կողմից հիմնւած տպարանի[1] խափանւելուց յետոյ, պարսկահայ տպագրությունը շուրջ երկու դար իսպառ լռում է: Ջուղայեցիները շարունակում են ցուցաբերել տպագրական բեղուն գործունէութիւն արտասահմանեան գաղութներում: Ցիրաւի, ջուղայեցիների կամ Հնդկաստանում եւ Եւրոպայում վերընձիւղւած նրանց անմիջական սերունդների ջանքերով եւ նիւթական օժանդակութեամբ է, որ առաջին հայկական տպարանները հաստատւեցին Լիվոռնոյում, Ամստերդամում, Մարսէյլում, Էջմիածնում, Ս. Պետերբուրգում, Մադրասում, Կալկաթայում եւ մի շարք այլ հայաշատ կենտրոններում[2]:

Պարսկահայ տպագրութեան նոր շրջանի պատմութիւնը սկսւում է 1872 թւին, երբ Ս. Ամենափրկչեան վանքի առաջնորդ Գրիգորիս արք. Յովհաննիսեանի ջանքերով կարգի է բերւում անգործութեան մատնւած տպարանը, եւ յաջորդաբար լոյս են ընծայւում նրա հեղինակած «**Այբբենարան**»-ն (1872 թ.) ու «**Հեգարան**»-ը (1873 թ.):

Այս շրջանի պարսկահայ երկրորդ տպարանը հիմնւում է Թաւրիզի «Արամեան» դպրոցում 1888 թւին Ատրպատականի հայոց առաջնորդ Ստեփանոս արք. Մխիթարեանի նախաձեռնութեամբ եւ մոսկւաբնակ Աղա Յովհաննէս Ս. Յովնանեանցի բարերարութեամբ: Այդ տպարանում 1889 թ. հրատարակւում է «Ստորագրութիւն Ս. Գէորգայ (Մուղնի)» անունով մի գիրք:

[1] Առաջին տպարանի հիմնադրման թւական են նշում նաեւ այլ աղբիւրներ, որոնք դա համարում են 1641 թիւը, երբ տպագրւում է իրանահայոց առաջին գիրքը՝ «Հարանց վարք»-ը: Տպարանը դադարում է գործելուց 1646–ին, երբ մահանում է Խաչատուր Կեսարացի վարդապետը:

[2] **Պօղոսեան Տ.,** Բ տարի, 1970, 277:

Թաւրիզից յետոյ իրանահայ երրորդ տպարանը հաստատւում է Թեհրանում 1890-ական թւականների սկզբին:

Տպագրական վերոգրեալ աշխատանքներին յաջորդում է իրանահայ առաջին պարբերականի հրատարակումը՝ Թեհրանում 1894 թւին, որն էր «**Ծաւիղ**» անունով շաբաթաթերթը, որի առաջին համարը լոյս է տեսել նոյն թւի յունւարի 1-ին եւ տպագրւել մինչեւ 1897 թ.:

Թեհրանում տպագրւած յաջորդ թերթը կոչւել է «**Աստղ Արեւելեան**», որի հրատարակութիւնն սկսւել է 1896-ին:

1903 թ. Թաւրիզում հրատարակւել է XX դարասկզբի իրանահայ մամուլի առաջնեկը, որը կրել է «**Գործ**» անունը: Ոչ հաւաստի են այն նշումները, թէ իբր նախքան «**Ծաւիղ**»-ը եւ «**Աստղ Արեւելեան**»-ը, 1880-ական թւականների սկզբներում Իրանի Ռաշտ քաղաքում տպագրւել են «**Համայնք**» եւ «**Նշտրակ**» պարբերականները: Հաւանաբար դրանք եղել են խմորատիպ կամ ձեռագրային տեսքով և, իրականում, տպագիր հրատարակման չեն ենթարկւել: Ըստ 1924 թ. եւ 1975 թւականի Վիեննայի ցուցակների ևս, այդ անւամբ պարբերականներ նշւած չեն եղել:

Պարագան նոյնն է նաեւ Պոլսում նոյն ժամանակաշրջանին հրատարակւող «**Ծարժում**» պարբերականի դեպքում, որի վերաբերեալ սխալմամբ նշւել է, թէ իբր տպագրւել է Թեհրանում:

«**Րաֆֆի տարեգիրք**»-ում (էջ 284–285) այդ ոչհաւաստի վկայութիւնների մասին ասւած է. «Այժմ գանք պարսկահայ լրագրութեան առաջնութեան հարցին: Մինչեւ 1934 թիւն առաջնութեան պատիւն անվերապահօրէն պատկանում էր «**Ծաւիղ**»-ին: Յայտնի չէ ինչ աղբիւրի հիման վրայ Գարեգին Լեւոնեանի «**Հայոց պարբերական մամուլը**» կոթողական աշխատութեան մէջ 1880-ին սկսւած պարբերականների շարքում յիշատակւում է «**Համայնք**» անունով մի թերթ, իբր թէ հրատարակւած Ռաշտում, Ալեքսանդր Աթաբէկեանի խմբագրութեամբ»:

«Կատարեալ շփոթութեան մէջ է Գարեգին Լեւոնեանը պարսկահայ առաջին պարբերականի կապակցութեամբ: 1894 թւին գրւած իր «**Հայոց պարբերական մամուլը**» (Ալեքսանդրապոլ, 1895) ընդարձակ աշխատութեան մէջ պարսկահայ որեւէ լրագիր չի յիշատակւում: 1934 թւին հրատարակւած «**Հայոց պարբերական մամուլը**» աշխատութեան բուն ցանկում «**Համայնք**»-ը դնում է 1880 թւի տակ (էջ 22), նոյն գրքում հրատարակութեան վայրերի ցուցակում որոշակի 1880 թ. փոխում է անորոշ 1880-ականի (էջ 188), տպարանների ցանկում Ռաշտը բոլորովին զանց է առնում (էջ 208), պարբերականների այբբենական ցուցակում վերահաստատում է 1880 թ. (էջ 217), իսկ «**Հայ գիրք**»-ը եւ «**Տպագրութեան արւեստը**» գրքում (Բ տպ. 1958, էջ 236) 1880 թ. փոխարինում է 1883 թւականով:

Հաւանաբար Գարեգին Լեւոնեանին հետեւելով՝ «**Համայնք**»-ը (Ռաշտ, 1880) յիշատակում է նաեւ Յովի. Պետրոսեանն իր «**Հայ մամուլի բիբլիոգ-րաֆիա**» աշխատութեան մէջ (Երեւան, 1956, էջ 379) առանց որեւէ լրացուցիչ տեղեկութեան:

Հաշվի առնելով ունեցած դերակատարությունը, հարկ է հակիրճ անդրա-դառնալ իրանահայ մամուլի առաջնեկներին՝ «**Շաւիղ**»-ին ու «**Աստղ Արեւե-լեան**»-ին, որոնք լոյս աշխարհ են եկել ընդամէնը 4–6 տարիներ նախքան 20-րդ դարասկիզբը:

Այդ ժամանակահատուածը համընկնում է Իրանում Ղաջարական մենա-տիրական համակարգի դէմ ազատախոհական խմորումների ձեւաւորման եւ դրա արդիւնքում՝ սկսեալ 1905–6 թթ.-ից, Սահմանադրական շարժմանը, որում իրանահայութիւնը եւ առաւել եւս՝ թաւրիզահայութիւնը, հայ ազգային կուսակցութիւնների գլխաւորութեամբ ներգրաււում է շարժմանը: Իսկ նոյն թւականներին էլ հանդիպում ենք իրանահայ քաղաքական-կուսակցական (հիմնականում ՀՅԴ-ի եւ Հնչակեան) ուղղութիւններ որդեգրած մամուլի հրատարակութիւնների, որոնք առաջնորդող ու մեկնաբանող հանգամանք էին զբաղեցնում հայ հասարակութեան կեանքում՝ երկրի քաղաքական խոշոր իրադարձութիւններին զուգահեռ:

1-«ՇԱՒԻՂ» (1894–1897) Թեհրան

Իրանահայ մամուլի անդրանիկ պարբերական «**ՇԱՒԻՂ**» շաբաթաթեր-թը սկսել է հրատարակւել 1894 թ. Թեհրանում, «Ջաւահայ» տպարանում (1880-ականներին Ջաւայի հայութեան կողմից նւիրաբերւած) եւ շարունակել է տպագրւել մինչեւ 1897 թւականը՝ շօշափելով ազգային, գրական, քաղաքա-կան թեմաներ: Արտօնատէրն է եղել Անդրէաս Բեգնազարեանը:

Գլխ. խմբագրի պաշտօնը զբաղեցրել է վաստակաւոր թարգմանիչ եւ գրականագէտ ու ազգային-հասարակական գործիչ Յովհաննէս Խան Մասե-հեանը՝ 1894-ի յունւարից մինչեւ հոկտ. 18-ը, իսկ նոյն թւականի դեկտեմբերից մինչեւ 1896 թ. յունւար՝ խմբագրութիւնը գլխաւորել է անւանի գրող, հրապա-րակագիր եւ մշակութային գործիչ Վրթանէս Փափազեանը[3]:

«**Բազմավէպ**»-ում հրատարակւած Հ.Մ. Պոտուրեանի «Հայ մամուլը տասնհինգ տարուան մէջ» աշխատութիւնում (1909 թ. թիւ 12, էջ 540) «**ՇԱՒԻՂ**»-ի վերաբերեալ մասնաւորապէս գրւած է.

[3] «Շաւիղ» շաբաթաթերթը Անդրէաս Բեկնազարեանի անձնական թերթն էր: Սկզբի շրջա-նում հրատարակւում է Յովի. Մասեհեանի խմբագրութեամբ: Նա չի կարողանում հանդուրժել թերթի տիրոջ վատ բնաւորութիւնը եւ հեռանում է թերթից: Յետոյ նրան փոխարինում է գրա-գէտ Վ. Փափազեանը, որ այդ թւականներին «Հայկազեան» դպրոցի ուսուցիչ էր. բայց սա էլ ընդհարում է ունենում Բեկնազարեանի հետ եւ հեռանում: «Շաւիղ»-ը դադարում է 1897 թւին: «Շաւիղ»-ի հրատարակութիւնից հազիւ մի տարի յետոյ լոյս է տեսնում «Աստղ Արեւելեան» շաբաթաթերթը:

«**Ծաւիղ**»-ը իր առաջին իսկ համարով գրաւում է պարսկահայ ինտելիգենցիայի ուշադրութիւնը: Թէ՛ կենտրոններում, եւ թէ՛ գաւառական խուլ անկիւններում, արթնանում է մի ուժեղ հետաքրքրութիւն դէպի պարսկահայ պարբերական մամուլի այդ անդրանիկ օրգանը, եւ ահա երկրի ամէն կողմերից տեղում են թղթակցութիւններ ու զանազան յօդուածներ»:

«**Ծաւիղ**»-ի մասին հետաքրքիր տեղեկութիւններ են տրուած 1994 թ. Թեհրանի Հայ համալսարականների ընդհ. միութեան կողմից կեանքի կոչւած «յանձնախմբի» պատրաստած-հաւաքագրած «Հայ մամուլի 200-ամեակ (1794–1994) գրքոյկում. «....Ծարունակելով «**Ծաւիղ**»-ի ընթացքը, Փափազեանը սկսեց յաւելեալ աշխուժութիւն մտցնել իրանահայութեան կրթական, մշակութային, հասարակական կեանքում՝ իր խմբագրած շաբաթաթերթում մեծ տեղ տալով քննադատական եւ տեղեկատու յօդուածների: Թերթը կարեւորութեամբ առաջին տեղն է դասել իրանահայ գիւղաբնակ տարբեր համայնքներին՝ Ղարաղան, Ղարադաղ, Սոլդուզ-Սաւուջբոլաղ եւ այլն, որտեղ էին կենտրոնացած ժամանակին իրանահայ բնակչութեան հոծ զանգւածները՝ գերակշռելով քաղաքաբնակ հայերի թւին»:

«**Ծաւիղ**»-ը կապ էր պահում նաեւ հայկական այլ գաղթավայրերի հետ: Ունէր աշխատակիցներ, որոնք թղթակցութիւններ էին ուղարկում թերթին՝ տարբեր երկրներից: 1895 թ. հայկական կոտորածներին թերթը կանոնաւորաբար անդրադառնում է՝ արտատպելով պարսկական, թուրքական եւ եւրոպական մամուլից լուրեր եւ հաղորդագրութիւններ:

2- «ԱՍՏՂ ԱՐԵՒԵԼԵԱՆ» (1896) Թեհրան

Իրանահայ մամուլի երկրորդ ներկայացուցիչը հանդիսանում է «**ԱՍՏՂ ԱՐԵՒԵԼԵԱՆ**» շաբաթաթերթը, որը եւ «**ԾԱՒԻՂ**»-ի նման տպագրւել է Թեհրանում՝ Անդրէաս Բեգնազարեանի «Ջաւահյ» տպարանում: Թերթի խմբագիրն անւանապէս եղել է Մակար Մակարեանը, որը միաժամանակ եղել է նաեւ թերթի արտօնատէրը, իսկ բուն խմբագիրն է եղել Սոկրատ Խան Գելոֆեանցը: «**Աստղ Արեւելեան**»-ը լոյս է ընծայւել միայն 26 համար:

3- «ԳՈՐԾ» (1903) Թաւրիզ

20-րդ դարասկզբում իրանահայ մամուլի առաջնեկը եղել է Թաւրիզում հրատարակւող «**Գործ**» շաբաթաթերթը: Որպէս գրական, գիտական եւ առեւտրական ուղղւածութիւն որդեգրած շաբաթաթերթ՝ «**Գործ**»-ը լոյս է ընծայւած իր միակ համարով: 1903-ի օգոստոսի 10-ի հրատարակւածը լոկ միակն է, որն էլ տպագրւել է վիպասան Ատրպետի տնօրինութեամբ, Ատրպատականի հայոց թեմական տպարանում, որն այսօր էլ գոյութիւն ունի եւ կոչւում է նոյն անւամբ: «**Գործ**»-ը խմբագրել է թեմակալ Եղիշէ ծ. վարդապետ Մուրադեանը:

4- «ԱԶԴԱՐԱՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ» (1904-1905) Թաւրիզ

Թաւրիզում տպագրւող 20-րդ դարասկզբի իրանահայ 2-րդ պարբերականն է: Շաբաթաթերթը հրատարակել է 34 համար՝ խմբագրութեամբ առաջնորդական տեղապահ Մաշտոց վարդապետ Փափազեանի:

5- «ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԼՐԱԲԵՐ» (1904-1908)

20-րդ դարասկզբին Ն. Ջուղայում տպագրւած առաջին պարբերականն է (ամսաթերթ): Խմբագիրն է եղել Իրանա-Հնդկաստանի թեմի (այժմ Սպահանի հայոց թեմ) ժամանակի առաջնորդական տեղապահ Բագրատ վարդապետ Վարդազարեանը: Տպագրւել է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի տպարանում: Բանասէր Լ.Գ. Մինասեանի «Իրանահայ պարբերական մամուլը» աշխատութեան մէջ յիշատակւած են Նոր Ջուղայում լոյս տեսած եւս երկու պարբերականներ՝ «Բրիտանական եւ արտաքին Աստւածաշնչի ընկերութեան շաբաթաթերթ»-ը, որը տպագրւել է վանքի տպարանում 1908-1911 թթ., իսկ միւսն էլ՝ «Ընկեր» ամսագիրը, որ լոյս է տեսել 1920թ.՝ որպէս օրգան Հայ սկաուտական կազմակերպութեան՝ խմբագրութեամբ սկաուտապետ Յովսէփ Աբգարեանի:

6-«ԱՌԱՒՕՏ» (1909-1911) Թաւրիզ

Սկզբում շաբաթաթերթ, ապա 1911-ի յուլիսից՝ եռօրեայ:

Եղել է իրանահայ առաջին կուսակցական (Հ.Յ.Դ.) թերթը եւ հրատարակւել է Թաւրիզում, որն այդ ժամանակահատւածում կիզակէտն էր իրանական Սահմանադրական շարժման, որին ակտիւօրէն մասնակից էին հայ ազատախոհները՝ Հ.Յ.Դ.-ի եւ Եփրեմ խանի (Դաւթեան) գլխաւորութեամբ:

«**Առաւօտ**»-ի խմբագիրն է եղել սկզբնական շրջանում Յովսէփ Յովհաննիսեանը (Յ. Էլմար), որը նոյնպէս եղել է Եփրեմի զինակիցը եւ մասնակցել Իրանի Սահմանադրական շարժմանը: Հետագային հեղինակել է նոյն «Եփրեմ» անւամբ կոթողական գիրքը:

«**Առաւօտ**»-ը կանոնաւոր կերպով հրատարակւելով՝ մօտ տարի ու կէս մեծ դեր կատարեց մի կողմից Հ.Յ.Դ. գաղափարն ու սկզբունքները ժողովրդականացնելու, միւս կողմից Սահմանադրութեան եւ ժողովրդավարական տեսակէտները տարածելու, երրորդ կողմից՝ մեր ժողովրդին լրագրի հետ կապելու գործերում: «**Առաւօտ**»-ը Թաւրիզի առաջին թերթն էր եւ միաժամանակ առաջին պարսկահայ դաշնակցական օրգանը, իր այդ հանգամանքով նա նախակարապետը հանդիսացաւ պարսկահայ քաղաքական մամուլի:[4]

---

[4] 1894 թ.-ից Թեհրանում հրատարակւել է «**Շաւիղ**» շաբաթաթերթը, բայց նրան հազիւ թէ կարելի է քաղաքական թերթ համարել: Նրա դադարելուց յետոյ, մօտ 15 տարի որեւէ պարբերաթերթ լոյս չտեսաւ իրանահայութեան մէջ. մինչդեռ «**Առաւօտ**»-ին յաջորդեց անմիջապէս «**Արշալոյս**»-ը՝ Թեհրան, յետոյ «**Այգ**»-ը՝ Թաւրիզ, Թեհրանի «**Առաւօտ**»-ը, ապա՝ «**Նոր կեանք**»-ը՝ Թեհ-

«**Առաւօտ**»-ը դադարեց 1911 թ.-ի դեկտ. 10-ին՝ ռուս պատժիչ արշաւախմբի Թաւրիզ ներխուժման հետեւանքով:

7-«ԶԱՆԳ» (1910-1922) Թաւրիզ

Այս շաբաթաթերթը հրատարակուել է Թաւրիզում՝ որպէս օրգան Հնչակեան կուսակցութեան, որն էլ սկզբնական շրջաններում ներգրաւուած է եղել իրանական Սահմանադրական շարժման մէջ: Խմբագիրն է եղել Ալեքսանդր Տէր-Վարդանեանը: «**Զանգ**»-ը եղել է քաղաքական, տնտեսական, հասարակական եւ գրական շաբաթաթերթ, տպագրուել է «**Փարոս**» տպարանում:

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան պատմագրութեան Կենտր. յանձնախմբի հրատարակած «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան» գրքի Ա հատորի (Բէյրութ, 1962 թ.) 403-րդ էջում գրուած է. «1911-ին Աստրախանէն Թաւրիզ կերթայ վեթերան հնչակեան Վահան Մարսեան, իսկ. անունով՝ Ղուկասեան, որ տեղւոյն մասնաճիւղի օժանդակութեամբ կը սկսի «Զանգ»-ի հրատարակութեան ... Թերթը կունենայ իր խմբ. կազմը՝ գլխաւորութեամբ Ալ. Տէր-Վարդանեանի: Քանի մը առիթներով թերթը հրատարակուած է ուրիշ ընկերներու խմբագրութեամբ՝ Լուդիկ Տատեան, Առաքել Պատմագրեան, Սեդրակ Աւագեան եւ այլն»:

8-«ԹԱՒՐԻԶԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ» (1910-1912)

Սոյն պարբերաթերթի խմբագիրը եղել է նոյն թւականների թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեանը, իսկ տպագրման վայրը՝ Ատրպատականի հայոց թեմականի տպարանն է եղել:

9-«ԱՂԱՂԱՆ» («Ղարաղաղ») (1912-1914) Թաւրիզ

Պարբերականը (երկամսաթերթ) լոյս է ընծայել ընդամէնը 4 թիւ: Խմբագիրն է եղել Վաղինակ Սարգսեանը՝ «Իրանեան» գրչանունով: Տպագրուել է Թաւրիզում՝ «**Փարոս**» տպարանում: «**Աղաղան**»-ը հետագային վերանուանուել է «**Ղարաղաղ**», որն էլ շարունակուել է մինչեւ 1914 թւականը՝ լինելով նախ ամսաթերթ, ապա՝ երկշաբաթաթերթ:

10-«ԱՅԳ» (1914-1922) Թաւրիզ

«**Այգ**»-ը եղել է Հ.Յ.Դ. Ատրպատականի Կ. կոմիտէի օրգանը: Առաջին համարը լոյս է տեսել 1914-ի օգոստ. 10-ին, այդպիսով՝ հանդիսացել է «**Ղարաղաղ**»-ի շարունակող թերթը: Սկզբում հրատարակուել է որպէս շաբաթա-

---

րան, եւ վերջապէս «**Ալիք**»-ը՝ Թեհրան: «**Ղարաղան**», «**Ղարաղաղ**»՝ Թաւրիզ, հնչակեան թերթերը՝ «**Զանգ**», «**Միտք**»՝ Թաւրիզ, ապա պատանի-երիտասարդական եւ դպրոցական մի շարք տպագիր կամ խմորատիպ թերթերը թէ՛ Թաւրիզում, եւ թէ՛ Թեհրանում՝ «**Բոբոխ**», «**Վերածնունդ**», «**Բանւոր**», «**Իրանի աշխատաւոր**», «**Ռանչբարը Իրան**», «**Հորիզոն**», «**Արուսեակ**» եւ այլն:

թերթ, ապա՝ եռօրեայ: Խմբագիրները՝ Մկրտում Սահակեան եւ ապա՝ Գասպար Յակոբեան:

11-«ԱՐՇԱԼՈՅՍ» (1912) Թեհրան

Հ.Յ.Դաշնակցութեան առաջին օրգանը՝ Թեհրանում, որն օժտուած է եղել խմբագրական մարմնով՝ Զօրա Սագինեանի եւ Յովսէփ Յովհաննիսեանի (Յ. Էլմար) գլխաւորութեամբ:

Արտօնատէրն է եղել Արսէն խան Միքայէլեանը եւ հրատարակւել է երկշաբաթեայ պարբերականութեամբ:

Թերթին բարոյական եւ մասամբ էլ նիւթական աջակցութիւն էր ցոյց տալիս տպարանատէր Համբ. Բազիլը, գրասէր եւ զարգացած մի անձ, բուն նորջուղայեցի, որ անգլիական կրթութիւն էր ստացել: Նա մի քանի ժամանակ առաջ յանձնառու էր եղել հոգալու պարսիկ Դեմոկրատ կուսակց. օրգան «**Իրանէ նօ**»-ի հրատարակութեան ծախսերը: Այս թերթը խմբագրում էր Ռասուլզադէի ձեռքով,- յետոյ Ադրբեջանի «**Մուսաւաթ**» կուսակցութեան ղեկավար:

12-«ՄԻՏՔ» (1912-1914) Թաւրիզ

Այս շաբաթաթերթը (ազգային, հասարակական, գրական, քաղաքական) եւս խմբագրւել է հնչակեան «**Զանգ**»-ի խմբագիր Ալ. Տէր-Վարդանեանի միջոցով եւ տպագրւել է Թաւրիզում՝ Ատրպ. հայոց թեմի տպարանում:

«**Միտք**»-ը թերեւս ծառայել է որպէս լրացուցիչ կամ յաւելւածային պարբերական՝ «**Զանգ**»-ին զուգահեռ: Կարելի է ենթադրել, որ նոյն թւականներին, երբ Թաւրիզում ցարական ուժերի ճնշումներ էր դիմակայում նաեւ Հնչակեան կուսակցութիւնը եւ հիւպատոս Միլլերի կողմից դադարեցւում է «**Զանգ**»-ի գործունէութիւնը, «**Միտք**»-ը ժամանակաւորապէս փոխարինել է նոյն կուսակցութեան օրգանին:

13-«ԽՕՍՔ» (1913) Թաւրիզ

Հրատարակւել է որպէս գրական երկամսեայ թերթ, Թաւրիզում, խմբագրութեամբ Հրանտ Ղարիբեանի: Տպագրւել է Ատրպ. Հ. թեմական տպարանում եւ որպէս ժողովածու՝ լոյս է ընծայել ընդամէնը 2 թիւ:

14-«ՊԱՅՔԱՐ» (1918-1919) Թաւրիզ

Հրատարակւել է Թաւրիզում, «**Փարոս**» տպարանում: հանդիսացել է Հնչակեան կուսակցութեան Թաւրիզի Երիտ. միութեան օրգան, ունեցել է խմբագրական կոլեգիա եւ խմբագիր:

15-«ԱՐՇԱԼՈՅՍ» (1918-1919) Թաւրիզ

1912-ի թեհրանեան նոյնանուն շաբաթաթերթը վեց տարի անց՝ 1918 թ.-ին, այս անգամ Թաւրիզում է լոյս ընծայւում, սկզբում խմբագրակազմի, իսկ

1919 թ.-ի յունիսից՝ Թբիլիսիից վերադարձած Անդրէ Տէր-Օհանեանի (Ամուրեան) խմբագրութեամբ:

«**Արշալոյս**»-ը եղել է Հ.Յ.Դ. Թաւրիզի Պատանեկան, ապա՝ Ուսանողական միութեան օրգանը եւ ունեցել է շատ նշանակալից դեր՝ նոր սերունդի ինքնազարգացման ու քաղաքական դաստիարակութեան մարզերում:

Շաբաթաթերթը սկզբնական շրջանում հրատարակւել է ձեռագիր, ապա՝ խմորատիպ կերպով:

«Հիմնադիրն եղել է «Գէորգեան» ճեմարանի ուսանողներից Հայկ Իսախանեանը, որը 1918 թ.-ի յունւարի առաջին օրերին,- ճեմարանի հարկադրական փակումից յետոյ,- վերադառնալով իր ծննդավայրը, մեծ խանդավառութեամբ նւիրւել է մշակութային ու կուսակցական եռանդուն գործունէութեան, հանդիսանալով Հ.Յ.Դ. Թաւրիզի Աշակերտական ու Պատանեկան միութիւնների կազմակերպիչը... »[5]:

16-«ԱՌԱՒՕՏ» (1919) Թեհրան

1912-ին հրատարակւած «**Արշալոյս**»-ից յետոյ, սոյն «**Առաւօտ**»-ը հանդիսացել է Թեհրանի (Հ.Յ.Դ. Շահստանի շրջան) Կ.Կ.-ի 2-րդ օրգանը: Լոյս է ընծայւել 1919-ին, շաբաթական պարբերականութեամբ, շուրջ 70 թւով եւ դադարել 1920-ին:

«**Արշալոյս**»-ի (Թեհրանի Հ.Յ.Դ. Կ.Կ.-ի առաջին օրգան), ինչպէս 1909-ի Թաւրիզում լոյս տեսած «**Առաւօտ**»-ի նման, 1919-ի այս «**Առաւօտ**»-ի խմբագիրն է եղել Յովսէփ Յովհաննիսեանը:

17-«ԲՈԲՈԽ» (1920) Թեհրան

Երգիծական երկշաբաթաթերթ, ապա՝ շաբաթաթերթ, որի խմբագիրն է եղել Հայկ Գարագաշը:

Թերթի շապիկի վրայ յիշատակւած է եղել՝ «Ազգային-հասարակական, սոցիալ-դեմոկրատական, Դաշնակցական, Հնչակեան, Կադետական, Ժողովրդական եւ ... չէզոքական», իսկ աշխատակիցների անունները՝ Ղամիշ, Ընկեր Կուլտուր, Զուռնա, Բիզ, Կոտող եւ ... ծածկանուններ են ու յիշատակւած իբրեւ երգիծանք:

18-«ՀՈՐԻԶՈՆ» (1920) Թեհրան

Միեւնոյն «Ձախ հոսանք»-ի 2-րդ պարբերաթերթն էր, արտօնատէրութեամբ Յ. Պետրոսեանի ու խմբագրութեամբ Սիմոն Սիմոնեանի եւ տպագրւել է «**Բոբոխ**» տպարանում:

19-«ԸՆԿԵՐ» (1920) Նոր Ջուղա

---

[5] **Պօղոսեան Ց.**, 1976:

Նոր Ջուղայի 2-րդ թերթն է, որ տպագրուել է Ս. Ամենափրկչեան վանքի տպարանում, 1920-ին, որպէս ամսագիր եւ հրատարակել է միայն 3 թիւ:

Խմբագիրն է եղել Յովսէփ Ե. Աբգարեանը, որի հիմնադրած «Բոյ սկաուտ» միութեան օրգանն է հանդիսացել:

20-«ԻՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՒՈՐ» (1920-1921) Թեհրան

Սկզբում շաբաթաթերթ, ապա՝ եռօրեայ: Արտօնատէրն է եղել Յարութիւն Պետրոսեանը եւ տպագրուել «Բոսֆոր» տպարանում: Թերթը պատկանել է Թեհրանի հայկական «Ձախ հոսանք» խմբակցութեանը:

21-«ՌԱՆՋԲԱՐ ԻՐԱՆԻ» (1921-23) Թեհրան

Ահա, նոյն «**Հոսանք**»-ի 3-րդ թերթը եւ միեւնոյն «**Իրանի աշխատաւոր**»-ի պարսկ. թարգմանական անունը: Արտօնատէրն է եղել Վահան Մեսրոպեանը եւ տպագրուել «Բոսֆոր» տպարանում:

22-«ՆՈՐ ԿԵԱՆՔ» (1922-27) Թեհրան

Սկզբում՝ շաբաթաթերթ, ապա՝ եռօրեայ, արտօնատիրութեամբ Ստեփան Խանբաբեանի եւ ապա՝ դոկտ. Վարդան Յովհաննիսեանի:

Խմբագիրն է եղել Օննիկ Մխիթարեանը: «**Նոր կեանք**»-ը հանդիսացել է Հ.Յ.Դ. Ճահստանի (Թեհրան) Կ.Կ.-ի 3-րդ օրգանը՝ 1912-ի «**Արշալոյս**»-ից ու 1919-ի «**Առաւօտ**»-ից յետոյ:

Այսպիսով, իրանահայ մամուլը, 20-րդ դարասկզբի կտրուածքով, ներառում է դարաշրջանի առաջին երկտասնամեան, որի ընթացքում էլ իրանահայերը հասարակա-քաղաքական բախտորոշ պահեր են ապրել, երբ նկատի ունենանք դարասկզբի Պարսկաստանի Սահմանադրական շարժումը, որին զուգահեռ էլ մէկը միւսին յաջորդելով՝ սկսել են հրատարակուել ինչպէս կուսակցական-քաղաքական, այնպէս էլ հասարակական - մշակութային կեանքը զարգացնելու նպատակով զանազան պարբերաթերթեր, որոնց կիզակէտն էլ, ինչպէս ցոյց տուեց այս վիճակագրական աշխատութիւնը, հանդիսացել են առաւելաբար 2 հայկ. կենտրոններ՝ Թաւրիզն ու Թեհրանը:

Անշուշտ, եղել են մի քանի անուն թերթեր-պարբերականներ եւս, որոնք ներառուած չեն սոյն ցանկում՝ հետեւեալ երկու պատճառներով՝.

ա-Եղել են ձեռագիր կամ խմորատիպ եւ կամ՝ տպագրուել են շատ սահմանափակ թւով ու կարճատեւ ժամանակաշրջանում.

բ-Վաւերական չի եղել դրանց հրատարակութիւնն ու գոյութիւնը՝ իրանահայ համայնքում: Օրօրինակ՝ Պոլսում հրատարակուած «Ճարժում» անւամբ թերթը համարուել է թեհրանեան թերթ եւ կամ ինչպէս «Համայնք»-ի դէպքում էր, դա սխալմամբ վերագրուել է նրան, որ Ռաշտում է տպագրուել եւ որ արտառոց է հնչել՝ դա համարուել է իրանահայ առաջին պարբերական:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ

«**Իրանահայ պարբերական մամուլը (1894–1994)**», Լ.Գ. Մինասեան, Նոր Ջուղա, տպարան Ս. Ամենափրկիչ վանքի, 1994 թ.:

«**Հայ մամուլի 200-ամեակ (1794–1994)**», Հայ համալսարանականների ընդհանուր միութիւն, Թեհրան, 1994 թ.:

«Կարեւոր ճշտումներ եւ յաւելումներ. «Ալիք»-ի մէջ տպագրուած «Իրանահայ մամուլը» ցուցակի առթիւ», Պօղոսեան Տ., «Ալիք» օրաթերթ, Թեհրան, հոկտ. 1976:

Պօղոսեան Տ., «**Րաֆֆի տարեգիրք**», Բ տարի, 1970 թ., տպ. «Մոդեռն», Թեհրան:

Յովհաննիսեան Յ., «Յուշեր», Երեւան,տպ. «Ապոլոն» 1995 թ.:

«Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան» (1887–1962), Ա հատոր, տպ. «Շիրակ», Բէյրութ, 1962 թ.:

Այւազեան Յ. եւ խմբ. յանձնաժողով, «Հայ սփիւռք» հանրագիտարան, հրատ. «Հայկական հանրագիտարան հրատարակչութեան», տպ. «Տիգրան Մեծ հրատարակչութիւն», Երեւան, 2003 թ.:

Պարսկերէն.

Ռաբինօ Հ.Լ., «Իրանի օրաթերթերը», (թարգմ. Ջաֆար Խոմամիզադէ), «Էթթելաաթ» հրատ. Թեհրան, 1993 թ.:

Ղասեմի Ս.Ֆ., Իրանի մամուլի ուղեցոյց (Ղաջարական ժամանակաշրջան), հրատ. հաղորդացանցերի, ուսումնասիրման եւ հետազօտման կենտրոն, Թեհրան, 1993 թ.:

«Փէյման» (Պայման) մշակութային պարբերական, թիւ 5–6, 1997 թ., հրատ. Հայկ. հարցերի ուսումն. կենտրոն (ՀՈՒՍԿ), տպ. «Ալիք», Թեհրան:

DERENIK MELIKYAN
«Aliq» Daily

THE ARMENIAN PRESS OF IRAN IN THE EARLY 20th CENTURY (a review)

SUMMARY

The 20th century Iranian-Armenian press is distinguished mainly in the first two decades of the century. In this time span the Iranian-Armenians were living critical moments particularly during the Persian Constitutional Revolution (1905–1912), when numerous consecutive reviews were being published, shedding light on the political as well as cultural-social aspects of life. The origins of this revival, as presented in this statistical research, were mainly two Armenian centers, the cities of Tabriz and Tehran.

Before turning to the main subject it was considered necessary to present a brief introduction on the Iranian-Armenians' printing history, since printing is the foundation and pre-requisite for publishing press, moreover, it is a unique fact that Armenians in New Julfa had been the founders of the printing industry in Iran (as well as in the Middle East).

The first printing house at Armenian St. Savoir cathedral of N. Julfa, established by Khachatur Vartabet Kesaratsi, is mentioned in the Armenian printing history as the first printing house in the entire Persia (1636). It was by the efforts and financial supports of the Armenian community members and their followers in N. Julfa, India and Europe that the first Armenian printing houses were established in Livorno, Amsterdam, Marseille, Echmiadzin, St. Petersburg, Madras, Calcutta, and other Armenian populated centers.

The new era of the Iranian-Armenian printing history dates back to some 30 years prior to the 20th century, when Archbishop Grigoris Hovhanessian, head of St. Savior cathedral, managed to re-start the activities of the abandoned printing house.

The second Iranian-Armenian printing house of this period was established in Tabriz in 1888 by the efforts of Archbishop Stepanos Mkhitarian, the prelate of the Armenian prelacy of the Iranian Atrpatakan province and Hovanes S. Hovnaniants, an Armenian benefactor from Moscow. In 1889 this printing house published a

book named "Storagrutyun Soorb Georga" / "Moughni" ("Signature of St. George").

The third printing house of the Iranian-Armenians was established in Tehran in the early 1890s, although the efforts to establish a printing house in Tehran were taken long before Tabriz.

The appearance of the first Iranian-Armenian review in Tehran followed the above-mentioned publishing activities. The first Armenian weekly named **"Shavigh**" was published in 1894; its first issue appeared on January 1 and lasted until 1897.

The second periodical called **"Asdgh Arevelyan"** appered in 1896.

The pioneer of Armenian press was **"Gordz"**, published in Tabriz in 1903.

These three pioneers presented in this research appeared 4–6 years before the start of 20th century.

In the succeedging pages of the research, other periodicals of the Iranian-Armenians are presented in a chronological order.

This period of history in Iran is coincidental with the liberation revolts against Qajar tyrannical regime. The outcome was the Constitutional Revolution (1905–6), in which the Iranian-Armenians had their partnership led by the Armenian national parties. By this time we observe the appearance of periodicals marking the crucial events in the country and having a leading role in the life of the Armenian community.

ДЕРЕНИК МЕЛИКЯН
Ежедневник «Алик»

АРМЯНСКАЯ ПРЕССА В ИРАНЕ В НАЧАЛЕ XX ВЕКА (Обзор)

РЕЗЮМЕ

Иранско-армянская пресса особенно выделяется в последние годы XIX и в первые два десятилетия XX века. В это время иранские армяне пережили ряд испытаний (особенно в период Конституционной революции 1905–1912 гг, коснувшихся также и армянской прессы). Публиковались многочисленные последовательные обзоры, проливающие свет на партийно-политические, а также культурно-социальные аспекты жизни. Истоки этого возрождения, были главным образом в двух армянских центрах Тебриза и Тегерана.

Армяне Новой Джульфы были основателями полиграфической отрасли в Иране (как и на всём Ближнем Востоке).

Первой в Иране была типография в армянском соборе Аменапркич (1636), созданная Вартапетом Хачатуром Кесараци. Именно благодаря усилиям и финансовой поддержке членов армянской общины и их последователей в Н. Джульфе, Индии и Европе, первые армянские типографии были созданы в Ливорно, Амстердаме, Марселе, Эчмиадзине, Санкт-Петербурге, Мадрасе, Калькутте и некоторых других Армянонаселенных пунктах.

Новый этап истории ирано-армянской печати восходит к 70-ым годам XIX века, когда начальнику собора Аменапркича архиепископу Григорису Овнанисяну удалось возобновить деятельность заброшенной типографии.

Вторая армянская типография в Иране этого периода была создана в Тебризе в 1888 году усилиями архиепископа Степаноса Мхитаряна, предстоятеля армянской епархии Атрпатакана, и Ованеса С. Овнанянца, благотворителя из Москвы. В 1889 году эта типография издала книгу «Ստորագրութիւն Ս. Գէորգայ (Մուղնի)».

Третья типография иранских армян была создана в Тегеране в начале 1890-х годов, хотя её планировали открыть задолго до создания типографии в Тебризе.

Первый армянский еженедельник «Шавиг» печатался в 1894–1897 годах. Второй периодический журнал, названный «Астх аревелян», появился в 1896 году. Ещё одним изданием армянской прессы был «Горц», основанный в Тебризе в 1903 году.

На страницах исследования в хронологическом порядке представлены также и другие периодические издания иранских армян.

Этот период истории в Иране совпадает с восстанием против тиранического режима Каджаров, результатом которого стала Конституционная революция (1905–1906). К этому периоду относится появление периодических изданий, своевременно отражавших важнейшие события в стране и сыгравших ведущую роль в жизни армянской общины.

ՎԵՐԱ ՍԱՀԱԿՅԱՆ
Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ – Մատենադարան
sahakyanvera@gmail.com

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1915–2016 ԹԹ.)

20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում գործում էին բազմաթիվ տպարաններ ու հրատարակչություններ, տպագրվում էին հարյուրավոր պարբերականներ: 1915–1916 թթ. տեղի ունեցած Հայոց Մեծ Եղեռնի հետևանքով ցեղասպանվեց ու հայրենազրկվեց բնիկ հայ ժողովուրդը, ոչնչացվեց հնագույն, պատկառելի մշակութային մի շերտ: Կայսրության իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետությունում հայկական տպագրությունը շարունակեց աննախընթաց կերպով անկում ապրել:

Այն հարցին, թե ինչո՞ւ էին փակվում հայկական տպարանները, Նեդրեթ Իշլին[1]՝ «Բաբը Ալի (թաղամասի) տպարանները» հոդվածում[2]՝ գրում է. «Բաբը Ալիում թուրք տպագրիչ վաճառողների թիվը գնալով մեծանում էր, հայ տպագրիչների թիվը՝ քչանում: Դրա պատճառը հավանաբար կապված էր նրա հետ, որ շատերը երիտասարդ տարիքում էին մահացել[3]»,- ապա առանց մանրամասնելու երիտասարդ տարիքում մահանալու պատճառները ավելացնում է. «կամ էլ պարզապես նրանք թողնում էին իրենց գործը և զբաղվում այլ գործով: Նրանցից մեկը Գասպար *Էֆենդին* էր, ով թողնելով իր տպարանը բացել էր մի նպարեղենի խանութ»[4]: Իր միտքը հեղինակը շարունակում է այսպես. «Կար նաև այլ օրինակ ևս: Սուհուլեթ գրախանութի և տպարանի անունը՝ օսմանյան շրջանում Լևոն Լյութֆի էր: Հետո նա ընդունելով մահմեդականություն փոխել էր իր անունը Սեմիհ Լյութֆիի: Նա մահացել էր 1940-ականներին, իսկ Սեմիհ Լյութֆի գրախանութը հավանաբար փակվել է 1980-ական թվականներին: Նրա կինը՝ տիկին Ազնիվը, այս գրատունը պահպանել է, սակայն առանց նոր

[1] Էմին, Նեդրեթ Իշլի, գրող, հետազոտող, հնատիպ եւ հազվագյուտ գրքերի գրքահավաք, վաճառող: Ծնվել է 1959-ին, Ստամբուլում: Հեղինակ է բազմաթիվ հոդվածների ու հրապարակումների, հրատարակության է պատրաստել ձեռագրերի եւ հազվագյուտ գրքերի ցուցակ:

[2] Emin Nedret İşli, Ömer Durmaz, **Babıali'de Yayınevleri**, Osmanlı Bankası Arşiv ve Araştırma Merkezi 42. Kütüphane Haftası Etkinlikleri, 2006: http://www.obarsiv.com/nedret_isli.html

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

տպագրությունների և միայն վաճառել է նախկին տպագրվածները»[5]: Այս գրատան մասին հեղինակը հետևյալ կերպ է շարունակում. «Ուսանող էի, հիշում եմ տիկին Ազնիվի մահը: Տունը շատ թանկարժեք էր, դրա համար էլ ոչ ոք մեջի գրքերին ուշադրություն չէր էլ դարձնում: Այստեղ կային չվաճառված տասնյակ հազարարավոր գրքեր: Քուլելիի զինվորական լիցեյին առաջարկվեց գրքերը բաժանել կայազորներին: Մի մասը տարան, բայց, ոչ բոլորը: Հետո հրաման եկավ, որ տունը պետք է շտապ դատարկվի: Գրականության ֆակուլտետին լուր ուղարկեցին: Նրանք մի քանի օր շարունակ տանում էին գրքերը: Տարան այնքան որքան պետք էր իրենց: Այսպես այս գրատան գրքերը ինչքան հնարավոր էր բաժանել՝ բաժանեցին, ինչն էլ հնարավոր չեղավ հանձնեցին թղթի թափոնի անվան տակ»[6]:

Մեկ այլ՝ Կարապետ Քեշիշյանի գրատան պատմությունը եւս նմանօրինակ մի դեպք է: 1896 թ. Կարապետ Քեշիշյանի մահից հետո, 1901թ նրա գրատանը տիրանում է *Թեֆեյյուզ* անունով մեկը, այն վերանվանելով *Թեֆեյյուզի* գրատուն: Գրատունը գործել է մինչեւ 1970-ական թվականները[7]:

Եթե Հանրապետության հռչակումից առաջ հայկական տպարանների նվազ քանակը պայմանավորված էր Ցեղասպանության ընթացքում բազմաթիվ հայ տպարանատերերի նահատակությամբ, ապա հանրապետական շրջանում տպագրության նվազեցման գործընթացը կապված էր Թուրքիան միատարր պետություն դարձնելու ուղղությամբ տարվող աշխատանքների հետ, որի ընթացքում հայկական տպարանների մեծ մասը թուրքացվում էին՝ շարունակելով գործունեությունը որպես թուրքական տպարաններ: Այդպիսի օրինակ է ներկայումս գործող հայկական ամենահին գրատան՝ 1927-հիմնադրված *Ինքըլաբի* պարագան: Գրատան հիմնադիրն է ազգությամբ հայ Կարպիս Ֆիքրին: 1962 թ. միանալով Աքա-էրեն հրատարակչության հետ՝ ստանում է *Ինքըլաբ վե Աքա* անունը: 1971 թ. Կարպիս Ֆիքրիի մահից հետո, 1984-ին Աքա-ն առանձնանում է: Գրատունը շարունակում է իր գործունեությունը «*Ինքըլաբ*» անունով: Այս գրատունը, որտեղ տպագրվում են մեծ մասամբ դպրոցական դասագրքեր, առանձնանում է տպագրության մեծ քանակով: Գրատունը թեպետև հրատարակում է հայ գրականության վերաբերող գրքեր ևս, սակայն միայն թուրքերեն: Պատմական գրքերը արտացոլում են միմիայն Թուրքիայի Հանրապետության պաշտոնական տեսակետը, իսկ 1915 թ. մասին երբևէ արձագանք չի եղել:

Ներկայումս Թուրքիայի Հանրպետությունում գործող հայկական որևէ տպարան գոյություն չունի: Պատկերը Հանրապետության 93 տարիների ըն-

[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում:

թացքում բոլորովին փոխվել է: Թուրքիայի հայկական համայնքը, պատրիարքարանը և հայկական հրատարակչությունները անհրաժեշտ տպագրությունը իրականացնում են այլ տպարաններում: Այլ տպարանների ծառայություններից է օգտվում նաև «Արաս» հրատարակչությունը, երկլեզու Ակօս թերթը, Փարոս ամսագիրը և այլն: Տպագրության խնդիրները յուրովի են լուծում Մարմարա և Ժամանակ հայալեզու թերթերը, որոնք իրենց գրասենյակներում գտնվող փոքրիկ տպիչներով կարողանում են իրականացնել թերթերի տպագրությունը:

Անշուշտ, 21-րդ դարում գուցեև ցավալի չէ բուն հայկական տպարան չունենալու հանգամանքը, քանզի տեխնիկական զարգացման արդի շրջանում ցանկացած վայրում րոպեների ընթացքում կարելի է իրականցնել ցանկացած լեզվով մեծաքանակ տպագրական գործունեություն: Սակայն հարցը այստեղ այն է, թե ինչպե՞ս անհետացան այս հարյուրավոր տպարանները, ինչպե՞ս յուրացվեցին, ի՞նչ եղավ նրանց ճակատագիրն առհասարակ:

Թուրքիայի հանրապետական արխիվի (BCA) փաստաթղթերից մեկն անդրադառնում է Ստամբուլի մասնավոր տպարաններին[8]: Բովանդակությունը վերաբերում է մասնավոր տպարանների միավորման անհրաժեշտությանը՝ որպես երկրի միասնության և բարօրության փրկության երաշխիք[9]: «Ստամբուլում տպագրվող թերթերը և պարբերականները ներառյալ, տպագրության 85 %-ը հայերին են պատկանում, 5 %-ը հույներին, մնացածը թուրքերին»[10]: Փաստաթղթի մեջ բերված են Պոլսի հայ տպարանատերերի, հրատարակիչների և խմբագիրների անուն-ազգանունները և տպարանների հասցեները: Որպես միավորման բուն առիթ և պատճառ է ներկայացված տպարանների ոչ օրինական գործունեությունը, տպագրական արդի սարքավորումների բացակայությունը և այլ «հիմնավորումներ»: Նման «հիմնավորումներով» գրությունը պատրաստողները պահանջում են կասեցնել նման տպարանների գործունեությունը, որովհետև նրանք չեն հարգում ընդունված նոր գրելաձևը և չունեն պաշտոնական թույլտվություն[11]:

Առհասարակ մամուլի գրաքննությունը խստացվել էր դեռևս համիդյան շրջանում, այնուհետև հատկապես խստացվել էր 1909–1913 թթ. ընթացքում: Ոչ միայն փակվել էին մի շարք պարբերականներ, որոնք «խարխլում» էին երկրի արտաքին անվտանգությունը, այլև Առաջին Համաշխարհային պատերազմի մեջ Թուրքիայի մասնակցության հանգամանքը նկատի ունենալով, ընդունվել էր գրաքննության մասին հատուկ հրամանագիր (sansür talimatname)[12], որով կառավարությունը մամուլի նկատմամբ ձեռք էր բերել բացարձակ վե-

---

[8] BCA 030 10 144 11 (71) 5.
[9] Նույն տեղում:
[10] Նույն տեղում:
[11] Նույն տեղում:
[12] Sansür talimatnamesi, Matbaayı Askeriye, Istanbul, 1330.

րահսկողություն: Գրաքննության շարունակական խստացումները պայմանավորված էին «Տպագրության գլխավոր վարչության և Անադոլու գործակալության կազմավորմամբ (Matbuat ve Istihbarat Genel Mudurlugu ve Anadolu Ajansi/)[13], դրան հաջորդած «Հանուն խաղաղության» օրենքի ընդունմամբ (1925 թ., Takrir-i Sükûn Kanunu), ինչպես նաև 1931, 1934, 1935 և 1938 թվականներին ընդունված վերահսկող օրենքներով:

1940-ին ընդունված օրենքի համաձայն գրաքննության վերհսկողությունը այդուհետ պետք է ենթարկվեր ռազմական նախարարությանը (sıkıyonetim komutanlığı): Մինչև 1946 թ. պարբերական մամուլը և առհասարակ տպագիր գրականությունը ամենայն խստությամբ ենթարկվել է գրաքննության: Միայն 1946 թ., Համաշխարհային պատերազմի ավարտով պայմանավորված վերացվեցին կառավարության լայն լիազորությունները պարբերականների փակման առնչությամբ, սակայն գրաքննությունը և պարբերականների փակման իրողությունը շարունակեց մնալ որպես սկզբունքային գործելաոճ:

Հանրապետական Թուրքիայում գրաքննության ուղղությամբ Ազգային Անվտանգության կողմից կատարվել են հետևողական և շատ մանրակրկիտ աշխատանքներ: Թերթերում և ամսագրերում տպագրված հոդվածները թարգմանաբար կից ներկայացնելու հանգամանքը թույլ է տալիս ենթադրելու, որ ազգային անվտանգության և գրաքննիչ աշխատակիցների շրջանում հայերենի իմացությունը պարտադիր պահանջներից մեկն է եղել: Այս գրություններից պարզ է դառնում, որ գրաքննիչների շարքերում քիչ չեն եղել նաև հայերը:[14]

Թուրքահայ մամուլի և տպագրության նվազման պատճառներն ու շրջափուլերը պայմանականորեն բաժանել ենք չորս խմբի:

Առաջին խմբի մեջ ենք ներառել Նիկոմիդիա (Իզմիթ), Մուշ, Սեբաստիա, Հաճըն, Կեսարիա, Շատախ, Ամարա, Բիթլիս, Ռոդոսթո (Թեքիրդաղ), Ուրֆա, Երզնկա, Կիրասոն, Տիգրանակերտ, Տրապիզոն, Աղաբազար, Կաղզվան, Շապին-Գարահիսար, Չենկիլեր, Սիվրիհիսար, Քղի (Օրոր) բնակավայրերը, որտեղ 1913-ից հետո որևէ պարբերական չի տպագրվել:

Երկրորդ խմբի մեջ ներառել ենք այն բնակավայրերը, որոնցում պարբերականները դադարեցվել են Արևմտահայաստանի հայ բնակչության նկատմամբ պետական մարմինների կողմից ցեղասպանական նպատակով կազմակերպված պաշտոնական տեղահանության հետևանքով: Այդ շրջաններն են՝ Պարտիզակ, Նիկոմեդիա (Իզմիթ), Վան, Կարին, Պրուսա, Սեբաստիա, Եվդոկիա՝ (Թոկատ), Մարզվան, Խարբերդ, Կեսարիա, Երզնկա, Կիրասոն, Տիգրանակերտ, Աղաբազար, Մալաթիա, Ամասիա, Կոնիա, Կրման (Խոտորջուր), Սամսոն, Թալաս:

[13] Fatih Kardeş, Basın Yayın Genel Müdürlüğü 60 yılın Hikayesi, Ankara, «Başarı», 1980, s. 7:
[14] BCA 030 10 85 561 11,2.

Երրորդ խմբի մեջ ենք ներառել այն բնակավայրերը, որոնք 1918–1921 թթ. գտնվելով Անգլիայի կամ Ֆրանսիայի հովանավորության ներքո, որոշ վերապրողների վերադարձով պայմանավորված՝ վերսկսել են մամուլի տպագրությունը: Նշված շրջաններում, սակայն, 1921–22 թթ. քեմալական *միլլի* շարժման արդյունքում ենթարկվելով երկրորդ բռնագաղթի՝ նույնպես տպագրությունը դադարեցվել է: Այդ շրջաններն են՝ Զմյուռնիա (Իզմիր), Կարս, Այնթապ, Ադանա, Մարաշ, Տարսոն, Դյորթ-յոլ (Չորք-Մարզպան):

Չորրորդ խմբի մեջ առանձնանում է բացառապես Կ. Պոլիսը: Թեեւ 1913–1915 թթ. Կ.Պոլսում փակվում է միանգամից 52 անուն պարբերական[15], այս շրջանում հայկական համայնքի գոյությամբ, պատրիարքության գործունեությամբ պայմանավորված՝ ցայսօր շարունակվում են տպագրվել որոշ թվով պարբերականներ:

Այսպիսով, ըստ Մ. Ա. Բաբլոյանի մատենագիտական համահավաք ցուցակում բերված տեղեկությունների, մինչ Ցեղասպանությունը Օսմանյան կայսրության 41 քաղաքում եղել է հայկական բեղուն տպագրություն, 1915-ի դրությամբ դրանցից 33-ում այլեւս որեւէ պարբերական այլեւս չի տպագրվել, իսկ 1923-ի դրությամբ միայն Կ.Պոլսում է շարունակվում հայկական մամուլի տպագրությունը:

Ադանայի շրջանում տպագրված 14 անուն պարբերականներից 13-ը բաժին է ընկնում զինադադարի շրջանին[16], քանի որ Ադանան ֆրանսիական հովանավորության ներքո վերածվել էր հայ գաղթականությանը պատսպարող ամենահուսալի կենտրոններից մեկին՝ իր գիրկն առնելով փրկված հարյուրավոր հայորդիների: Ադանայում, մինչեւ երկրորդ բռնագաղթը տպագրված պարբերական մամուլին են ավելանում մի քանի նորահայտ անուններ եւս:[17] Միհրան Մինասյանի հոդվածում[18] ներկայացվում է 35 նորահայտ տպագիր ու խմորատիպ թերթ, այդ թվում Ադանայում զինադադարի շրջանում տպագրված «Արգեոս» (1920՞–1921՞) եւ «Թելէֆօն» (1918–1922)[19] թերթերը:

1918-ի դրությամբ Կ. Պոլսում տպագրություն են սկսում իրականցնել թվով 12 անուն պարբերական: Հաջորդող թվականներին տպագրություն սկսած պարբերականների քանակական պատկերը հետեւյալն է. 1919-ին՝ 25,

---

[15] **Բաբլոյան Մ. Ա.,** Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794–1980, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երեւան 1986, էջ 341–346:

[16] Նույն տեղում, էջ 348:

[17] **Միհրան Մինասյան,** Հայ պարբերական մամուլի նորայայտ անուններ, Հայկազյան Հայագիտական Հանդէս, Պէյրութ, 1981, էջ 295–304:

[18] Նույն տեղում:

[19] Մ. Մինասյանի հոդվածի մեջ նշված է նաեւ Ադանայում տպագրված հետեւյալ թերթերը՝ «Սէյհան» 1860՞, «Սիհուն», «Կիլիկիա» 1908–1909, «Տավրոս» 1908–1909: Հեղինակի ներկայացրած նորահայտ անունների հետ միասին Ադանայում տպագրված թերթերի ընդհանուր քանակը այսպիսով կազմում է 20 անուն:

1920-ին 13, 1921-ին՝ 6, 1922-ին՝ 9-ը, 1924-ին՝ 4, 1925-ին՝ 2, 1926-ին՝ 5, 1927-ին՝ 5, 1928-ին՝ 5, 1930-ին՝ 3, 1931-ին՝ 6, 1932-ին՝ 7, 1933-ին՝ 4, 1934-ին՝ 1, 1935-ին՝ 5, 1936-ին՝ 2, 1937-ին՝ 2, 1938-ին՝ 3, 1939-ին՝ 1. 1940-ին՝ 2, 1941-ին՝ 1, 1943-ին՝ 1, 1944-ին՝ 1, 1945-ին՝ 2, 1946-ին՝ 4, 1947-ին՝ 2, 1948-ին՝ 3, 1949-ին՝ 2, 1950-ին՝ 5, 1951-ին՝ 1, 1952-ին՝ 2, 1953-ին՝ 1, 1954-ին՝ 1, 1955-ին 1, 1957-ին՝ 1, 1959-ին՝ 3, 1960-ին՝ 1, 1962-ին՝ 1, 1964-ին՝ 1, 1966-ին՝ 2, 1967-ին՝ 1, 1968-ին՝ 1, 1970-ին՝ 3, 1973-ին՝ 1 եւ 1976-ին 1: Այս ցուցանիշներին նայելով կարող ենք պատկերացնել, որ Ցեղասպանությանը հաջորդող տարիների ընթացքում և՛ Կ. Պոլսի հայությունը, և նրա կողմից տպագրվող մամուլը քաղաքական, կրոնական, մշակութային, լեզվական եւ գրաքննության ճնշումներով պայմանավորված հետզհետե նոսրացել է: Քաղաքական ճնշումները դրսեւորվել են ինչպես բուն մամուլի նկատմամբ սահմանափակումներ արձանագրող օրենքներով, այնպես էլ հասարակական, քաղաքական ճնշումներով[20]:

Քաղաքական ճնշումների առումով Հանրապետական շրջանում հայ բնակչության նկատմամբ ամենամեծ հարվածը արձանագրվեց 1942–43 թթ. ունևորության հարկի գործադրման ընթացքում: Այն գույքի «օրինականացված» բռնագրավում էր, որի հիմքերը կարելի էր տեսնել դեռեւս Մուստաֆա Քեմալի կողմից ստեղծված Անկարայի ժամանակավոր կառավարության գործարկած քաղաքականության մեջ[21]: Եթե Ցեղասպանության բուն էությունը ազգային պետության ստեղծման գաղափարն էր, ապա 1942–43 թթ. ազգային պետության մեջ տնտեսության ազգայնացման հարցի լուծումն էր:

Հանրապետության հռչակումից հետո իշխանությունները համառ աշխատանքներ էին տանում թուրքահայ համայնքին զանգվածային լրատվական միջոցից՝ տպագրությունից, զրկելու ուղղությամբ: Նախ, կեղծ փաստարկների հիման վրա դադարեցվում էին տպագրվող պարբերականները, որին այնուհետեւ հաջորդում էր տպարանի պետականացումը:[22]

Այսպիսով, դարասկզբից գրաքննության եւ այլ քաղաքական հետապնդումները ունեին «Թուրքիան միայն թուրքերին» հեռահար նպատակ և ուղղված էին ոչ թուրք տարրի, ոչ թուրք քաղաքացիների դեմ: 1940–1943 թթ. Թուրքիայում հիմնադրվում է ընդամենը 4 անուն պարբերական, որից 2-ը միեւնույն

---

[20] 1942 թվականին թուրքական կառավարությունը, վարչապետ Շուքրու Սարաջօղլուի գլխավորությամբ, թուրքական խորհրդարան ներկայացրեց «Ունեցվածքի հարկ»-ի (Varlık vergisi) մասին օրենքը, որն ընդունվեց նույն թվականի նոեմբերի 11-ին՝ խորհրդարանի նիստին մասնակցող 350 պատգամավորների միաձայն քվեարկությամբ (տե՛ս օրենք թիվ 4305): «Ունեցվածքի հարկ»-ը գործեց 16 ամիս եւ վերացվեց 1944 թվականի մարտի 15-ին (թիվ 4530 օրենք): Քանի որ սահմանված ձեւով հնարավոր չէր վճարումներ անել մարդկանց ունեցվածքը ամբողջությամբ բռնագրավվում էր պետության կողմից, իսկ տերերն աքսորվում էին տաժանակրության: Ընդհանուր առմամբ, հավաքվեց 314.900.000 թուրքական լիրա հարկ, որի 70 տոկոսը՝ Ստամբուլում, ուր առկա էր հայկական ու հունական ստվար համայնք:

[21] BCA 030 10...218 472 11 (1,2):

[22] BCA 030 18 01 02 71 6 9.

թերթն էր՝ երկու տարբեր անուններով «Մարմարա» եւ «Նոր Լուր Մարմարա»: Մամուլի վերահսկողության վրա կառավարության լայն լիազորությունները մասամբ հանվում են 1946-ին՝ Իսմեթ Ինյոնյուի կառավարման տարիներին: Սակայն դրանք կատարվում էին ոչ այնքան մամուլին ազատություն շնորհելու, որքան վերահսկողությունը մեկ մարմնից մյուսին փոխանցելու ձեւաչափով:

Ցեղասպանությունից հետո հայ մամուլի մեծ մասը փակվել է թերեւս միեւնույն կամ հաջորդող տարվա ընթացքում: Այսպես, Կ. Պոլսում 1914–1924-ին հիմնադրվել է շուրջ 89 անուն պարբերական, որոնցից 1924-ին հիմնադրվածները 4-ն էին, իսկ 1924-ի դրությամբ տպագրվողների քանակը կազմում էր 11 անուն: 1925–1934-ի ընթացքում՝ 37 տպագիր օրգան, որից 1934-ի դրությամբ տպագրվում էր 9-ը: 1935–1944-ի ընթացքում՝ 16 անուն, որոնցից 1944-ին տպագրվում էր 3-ը: 1945–1954-ի ընթացքում 23, որոնցից 1954-ին՝ տպագրվում էր 12-ը: 1955–1964-ին՝ 8, որից վերջին տարում տպագրվում էր 2-ը, եւ վերջապես 1965–1980-ի ընթացքում հիմնադրված պարբերականների քանակը 9-ը, որից 1980-ի դրությամբ տպագրվում էր միայն մեկ պարբերական[23]:

Գրաքննիչները հետեւում եւ համապատասխան զեկուցագրեր էին պատրաստում Թուրքիայում, Խորհրդային Հայաստանում եւ այլ երկրներում[24] տպագրվող պարբերականների վերաբերյալ[25]: Այս մարդիկ, օգտվելով առիթից, սեփական անձնական վրեժը հաճախ լուծում էին թերթի, պարբերականի ու գրատան հասցեին իրականությանը բոլորովին չհամապատասխանող գրություններ գրելով: Նման գրությունների հիման վրա, գործունեությունը դադարեցնում էին բազմաթիվ հայկական պարբերականներ:

1990-ից հետո ընկած ժամանակահատվածում Թուրքիայում նկատելի է տպագրության համեմատական աշխուժացում, որը մեր կարծիքով պայմանավորված է Թուրքիա-Եւրամիություն փոխհարաբերությունների հետ: Այս ծիրից ներս 1993-ին, երկարատեւ լռությունից հետո, Թուրքիայում հիմնադրվում են նոր հրատարակչատներ, նոր թերթեր, որոնք լցնում են փոքրամասնությունների՝ երկարատեւ հրատարակչական գործունեության լռության բացը:

Այս առումով շրջադարձային երեւույթ է «Արասի» հիմնադրությունը թուրքահայ համայնքի եւ առհասարակ հայության համար: «Արաս»ի տպագրած գրքերի քանակը, եթե բաղդատենք դարասկզբին գործած տպարանների եւ բնակչության թվի հետ՝ բացառիկ է: Այս մեկ հրատարակչության շնորհիվ ընթերցողներին հնարավորություն է ընձեռնվում կարդալու հայերեն, թուրքերեն, քրդերեն գրքեր, թարգմանական գրականություն, պատմագրական կարեւորություն ներկայացնող աշխատություններ, ուսումնասիրություններ: «Արաս»-ը մեծածավալ աշխատանք է կատարում նաեւ վերահրատարակություններով՝

[23] Նշված են ոչ թե տպագրվող՝ այլ տասնամյակի կտրվածքով հիմնադրված եւ շարունակականություն ունեցող մամուլը:

[24] BCA 030 10 108 712 17.

[25] BCA 030 10 250 689 31.

լույս ընծայելով հայոց լեզվի ուսուցման, հայ գրականությանը նվիրված տարբեր ժողովածուներ, 1915 թ. առաջ հայկական պատմական, եկեղեցապատմական, մշակութային գրքեր, տարաբնույթ ժողովածուներ եւ այլն[26]:

«Արաս» հրատարակչությունից զատ իր ավանդն է բերել նաեւ «Բելգե»-ն /Belge yayınevi/, որը չլինելով հայկական՝ աշխատանք է կատարում հայկական անշարժ գույքերի ցուցակագրման, սեփականության իրավունքի, Ցեղասպանությանը եւ հայոց պահանջատիրությանը նվիրված գրքերի ու ուսումնասիրությունների հրատարակության ուղղությամբ:

Թուրքիայում հայկական համայնքի կողմից տպագրված ու մամուլի մատենագիտական ցուցակներում տեղ չգտած պարբերականներն են.

1. «Ժամանակ» օրաթերթ: 1908:
2. «Նոր Մարմարա» թերթը: 1940:
3. «Շողակաթ» ամսագիր: 1952:
4. «Պայքար» 1990:
5. «Նոր Սան»: Արվեստագիտական հանդես: Բանգալթիի մխիթարյան սանուց միության հանդես: 1992-ին հիմնադրված «Նոր Սան» հանդեսը 1948-ին Կեդրոնական լիցեյի սանուց միության «Սան» հանդեսի շարունակություն էր:
6. Հոպինա, 1994: 1948 -ին հիմնադրված «Հանդես մշակույթի»-ն 1994-ից հրատարկվել է «Հոբինա» անունի ներքո:
7. «Լրաբեր», 1992: Թուրքիայի Հայոց Պատրիարքարանի պաշտոնաթերթ: 1992–2007:
8. «Ակօս» շաբաթաթերթը, 1996:
9. «Սուրբ Փրկիչ» ազգային հիվանդանոցի ամսագիր, 1900–2016:
10. «Ժպիտ» մանկական ամսագիր, 1992-ից: Նախկինում հրատարակվել է «Պարտեզ» եւ «Գարուն» անունների ներքո:
11. «Փարոս» ամսագիր: 2011:
12. «Լույս» երկշաբաթաթերթ / Luys Aktüel – Magazin Gazetesi/:

Նշված պարբերականներից ներկայումս /2016-ի դրությամբ/ տպագրությունը շարունակում են միայն չորսը:

«**Ժամանակ**» - Քաղաքական եւ ժողովրդական, հայերեն օրաթերթ: Հիմնադրվել է 1908-ի հոկտեմբերի 28-ին Ստամբուլում, Միսաք[27] (Քասիմ[28]) եւ Սարգիս[29] Գոչունյան եղբայրների կողմից: Ներկայումս (2016 թ.) թերթի արտո-

[26] http://www.arasyayincilik.com-/

[27] Միսաք Գօչունեան (1863–1913) հրապարակագիր, թերթոն վեպերի եւ այլ երկերի հեղինակ, մանկավարժ, ազգային պատգամաւոր, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» կոթողային ստեղծագործության առաջին աշխարհաբարի թարգմանող մտավորական:

[28] Այս կեղծանունով նա աշխատակցել է «Բյուզանդիոն», «Արեւելյան մամուլ», «Նոր դար», «Մասիս», «Մանզումե-ի էֆքյար» թերթերին:

[29] Սարգիս Գոչունյան (1867–1926) Օսմանյան պետության տարածքում մամլո ծանուցումների գործակալություն հիմնած առաջին ձեռներեցներից մեկն է: Պոլսի Հայոց Պատրիարքու-

նատերն է Սարգիս Գոչունյանը, հրատարակության տնօրենուհի՝ Նատիա Գոչունյան, գլխաւոր խմբագիր՝ Արա Գոչունյան:

Խմբագրության շենքը երկար տարիներ գտնվել է Ղալաթիո ապա Բերայի մեջ, ներկայումս այն *Ֆէրիգյուղում* է (Feriköy): Քառաէջ օրաթերթը լույս է տեսնում ամեն օր բացի՝ կիրակիից: Անդրադառնում է թուրքահայ կյանքին եւ համայնքի իրավունքներին, հայ-թուրքական հարաբերություններին, Թուրքիայի հայկական ժառանգությանը, հայոց սփյուռքին, հայ առաքելական եկեղեցուն, ընկերամշակութային կյանքին, աշխարհաքաղաքական զարգացումներին:

90-ական թվականներից սկսած Հայաստանում օրաթերթն ունի սեփական թղթակից կամ աշխատակից: Վերջին շրջանում գործում է նաեւ էլեկտրոնային էջ, որի շնորհիվ ապահովվում է լրատվության համահայկական հասանելիություն[30]:

«Ժամանակ»ը հրատարակվել է նաև այլ անուններով (ինչպես օրինակ «Հեռաձայն»), սակայն խմբագրակազմը անպայմանորեն պահպանում էր տպագրության հերթական համարը, հիմնադրի անունն ու նույնիսկ թերթոնների հերթականությունը: Այս կերպ այն կարողացել է ապահովել շարունակականություն ու անընդհատականություն՝ դառնալով անցնող 108 տարիների պատմության ու պատմագրության անփոխարինելի սկզբնաղբյուրը:

«Ժամանակ»ի համար հատկապես ծանր շրջան էր 1915–1918 թթ., երբ հեղինակ թղթակիցները կամ սպանվում էին, կամ՝ աքսորվում կամ՝ տարագրվում. Ռուբեն Սեւակ, Ռուբեն Զարդարյան, Գրիգոր Զոհրապ, Երուխան, Զապել Եսայան եւ այլոք: Ուսումնասիրողները նշում են, որ այս տաղանդաշատ մտավորականների թղթակցելու ընթացքին օրաթերթն ունեցել է այդ տարիների համար չլսված տպաքանակ 8000, երբեմն նույնիսկ՝ 15000[31]:

Տարբեր տարիների ընթացքում «Ժամանակ»ին թղթակցել են հայտնի մտավորականներ: Այդ թվում Երվանդ Օտյան, Վահան Թեքեյան, Արշակ Չոպանյան, Թեոդիկ: Օրաթերթի մեջ լույս է տեսել Երվանդ Օտյանի «Անիծյալ տարիները» վեպը՝ որպես թերթոն: «Ժամանակ»-ով են սկսել գրական գործունեության երախայրիքը արեւմտահայ, սփյուռքահայ գրականության ռահվիրաններ՝ Վազգեն Շուշանյանը, Թորգոմ Բեշիքթաշլյանը, Զահրատը, Զավեն Բիբերյանը, Վարդան Կոմիկյանը եւ այլոք: Այսպիսով, օրաթերթը մի կողմից դեպքերի ժամանակագրական մանրամասնությունները լուսաբանող անփոխարինելի սկզբնաղբյուր, մյուս կողմից՝ արեւմտահայ գրական ժառանգության պահպանման անփոխարինելի մի գանձարան է դառնում, որը նոր սերնդի

թյան ելևմտական հանձնաժողովի ատենապետ եւ նույն պատրիարքության Ս. Աստվածածին Աթոռանիստ մայր եկեղեցու թաղային խորհրդի ատենապետ:

[30] http://www.jamanak.com/

[31] Մեջբերումն արված է օրաթերթի անցած ճանապարհը լուսաբանող վավերագրական «Ժամանակի ժամանակը» ֆիլմից:

ուսումնասիրողներին ի զորու է տրամադրելու անսպառ ուսումնասիրության նյութ:

2008–2013 թթ., երբ նշվում էր թերթի հիմնադրման 100-րդ տարեդարձի հոբելյանը, սկիզբ դրվեց «Ժամանակ 100» մատենաշարի հրատարակությանը՝ ներառելով Միսաք Գոչունյանի եւ այլ հեղինակների գործերը: 2015-ին հրատարակվեց «Ժամանակ»-ին աշխատակցած նախատակ մտավորականների աշխատանքները: Այս ծիրից ներս ներկայումս լույս են տեսել երեք անուն գրքեր[32]:

«Նոր Մարմարա» օրաթերթ. Պոլսի երկրորդ երկարակյաց պարբերականը «Մարմարա» քաղաքական հասարակական եւ գրական օրաթերթն է՝ հիմնված 1940-ի օգոստոսի 31-ին՝ լրագրող Սուրեն Շամլյանի կողմից: Սկզբնական շրջանում եռօրյա էր, ապա՝ օրաթերթ: 1943-ին «Նոր լուր» (Ստամբուլ, 1924–54), և «Մարմարա» օրաթերթերը միավորվում են այդուհետ տպագրվելով որպես «Նոր լուր մարմարա»: 14-րդ համարից թերթը կրկին վերանվանվում է «Մարմարա»: 1967-ի հոկտեմբերի 27-ից թերթի խմբագրի պաշտոնը ստանձնում է Ռոպէր Հատտեճյանը: Թերթի պատասխանատու տնօրենն է Արի Հատտեճյան, փոխ-խմբագրապետ՝ Մաքրուհի Հակոբյան: Թերթը բաղկացած է չորս էջից: Հրատարկվում է ամեն օր, բացի կիրակի օրերից: Ստամբուլից բացի, բաժանորդագրությամբ ուղարկվում է նաեւ արտասահման: Շաբաթը մեկ անգամ լույս է տեսնում թերթի թուրքերեն հավելվածը՝ Արի Հատտեճյանի խմբագրությամբ: Թերթն ունի մոտ 1400 ընթերցող: Անդրադառնում է համայնքային լուրերին՝ կարեւոր բաժին հատկացնելով գրական եւ գեղարվեստական նյութերին, Թուրքիայի, Հայաստանի եւ արտասահմանի մշակութային զարգացումներին: Թերթի գրական հավելված բաժնում լույս են տեսնում Ստամբուլահայ գրողների ստեղծագործությունները: Տասը տարուց ի վեր առկա է նաեւ թերթի էլէկտրոնային էջը:

Շողակաթ. կրոնական - բարոյական, պատմական, բանասիրական, մշակութային հանդես: Սկսել է լույս տեսնել 1952-ից՝ Ստամբուլում: Հանդեսի առաջին պաշտոնատերն է եղել Սահակ Վարդապետ Փափազյանը, պատասխանատու խմբագիր՝ Գարեգին Վարդապետ Գազանճյանը (ապա՝ պատրիարք): 1953-ին թերթի պաշտոնատերն է դառնում Ս. Խաչ Դպրեվանքի խնամակալությունը: 1959–1961 թթ. Եղիշե Պատրիարք Դուրյանի ծննդյան 100 ամյակի առիթով լույս է տեսնում բացառիկ համար: 1962-ին խմբագրի պաշտոնը ստանձնում է Արտաշես Սրկ. Նշանյանը: 1968-ից սկսած «Շողակաթ»ը վերածվում է տարեգրքի: 1977-ին 25 ամյակի առիթով լույս է տեսնում հատուկ համար, որում տպագրվում է Գեորգ Փամբուքճյանի՝ 1923-ից մինչեւ 1977 թթ. Ստամբուլում հրատարակված գրքերի մատենագիտությունը: 1978-ից սկսած «Շողակաթ մատենաշար» տեսքով տարբեր առիթներով հրատարակվում են

[32] Միսաք Գոչունյան, Օրվան մտածումներ 1908–1915, Իսթամբուլ, 2014: Փոքր Ասիո մէջէն, Երուխան, Ստամբուլ, 2015: Ռուբեն Զարդարյան, Ստ., 2015:

հիշատակի գրքույկներ: 1988–1991 թվականներին ընդհատվում է տպագրությունը: Գարեգին Բ. Պատրիարքի (Գազանճյան) գահակալությամբ 1991-ին վերսկսվում է «Շողակաթի» հրատարակությունը: Այս շրջանում հանդեսի սեփականատերն է դառնում Պատրիարքական Աթոռը: Լույս է տեսնում երեք համար, ապա մինչեւ 1995-ը նորից ընդհատվում է նրա տպագրությունը: Խմբագրական աշխատանքները վերսկսելու նպատակով կազմվում է հանձնախումբ անդամակցությամբ՝ Պարույր Մուրադյանի, Գեորգ Փամուքճյանի եւ Վաղարշակ Սերոբյանի: Հանդեսի պատասխանատու տնօրեն է նշանակվում Մեսրոպ Արք. Մութաֆյանը, իսկ պատասխանատու խմբագիր է նշանակվում Գրիգոր քհն. Տամատյանը: 1990-ականների առաջին կեսին լույս է տեսել հատուկենտ մի քանի համար եւ դադարել:

«Ժպիտ» Թուրքահայ ուսուցչաց հիմնարկի[33] **մանկական հանդես.** 1991-ի դեկտեմբերին ի շարունակություն կառույցի նմանատիպ հրատարակությունների հարուստ ավանդույթի («Պարտեզ», «Գարուն»): Ի սկզբանե հրատարակության նպատակը եղել է նոր սերնդին հայերենով ընթերցասիրության մղելը: «Ժպիտ»ի մեջ տեղ են հեքիաթներ, խաղեր, հանելուկ եւ այլն: «Ժպիտը» բաժանորդագրության հիմունքներով առաքվում է արտասահման, զանազան վարժարաններ, մշակութային կենտրոններ: Ցայսօր ունի պատրաստված հավաքածուներ, խտասալիկներ: Տարեկան հրատարակվում է 8 համար՝ հոկտեմբերից-մայիս, 1250 տպաքանակով: Վերջին տարիներին ուսանողներին եւ այլ ընցերցասերներին տրամադրվում է ձրիաբար: «Ժպիտ»-ի պատասխանատու տնօրենն է Սիլվա Կոմիկյանը:

«**Լրաբեր**». Հայոց պատրիարքության պարբերական տեղեկատու թերթ: Սկսել է տպագրվել 1996-ից: Թերթի հիմնադիրներից են եղել Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը, Գրիգոր Տամատյանը, Վաղարշակ Սերոբյանը եւ այլք: Առաջին մի քանի համարները եղել են լուսապատճենի միջոցով բազմացված օրինակներ: Թերթը երկլեզու է՝ հայերեն եւ թուրքերեն: Սկզբնական շրջանում ներառել է մշակութային եւ հոգեւոր նորություններ, իսկ 1999-ից պարունակում էր միայն պատրիարքարանի երկլեզու պաշտոնական հայտարարությունները: 1999-ի ամռանը ընդհատվում է թերթի տպագրությունը՝ փոխարինվելով համացանցային էջով: «Լրաբեր»ի տպագրությունը վերսկսվում է 2000 թ-ից: 2006-ից սկսած տեղեկատու պաշտոնաթերթի ընդգրկած թեմաների նեղացում է արձանագրվում: Այն այլեւս անդրադառնում է մկրտություններին եւ Սուրբ Գրոց ընթերցումներին: Պատրիարքարանի պաշտոնական նորությունները 2007–2012 թթ. հրապարակվում են միայն համացանցի միջոցով, որն էլ իր հերթին 2012-ին ինչ-ինչ պատճառներով նույնպես դադարեցվում է:

«Ակոս շաբաթաթերթ». Ստամբուլ, հայերեն եւ թուրքերեն երկլեզու շաբաթաթերթ: Հիմնվել է 1996-ին Հրանդ Դինքի եւ ընկերների կողմից: Թերթի

[33] Թուրքահայ ուսուցչաց հիմնարկը հիմնադրվել է 1965-ին:

հիմնադրողներից էին Լուիզ Բաքար, Հրանտ Դինք, Հարություն Շեշեթյան եւ Աննա Թուրայ: Հրատարակության առաջին տնօրենն էր Հրանտ Դինքը: 2007-ին Հրանտ Դինքի սպանությունից հետո, խմբագրապետի պաշտոնը ստանձնում է Էթիեն Մահչուպյանը: 2010-ին թերթի գլխավոր խմբագիրն է դառնում Ռոբեր Քոփթաշը: Ներկայումս նույն պաշտոնը ստանձնել է Եդվարդ Տանձիկյանը: «Ակոս»- թերթի գերկշիռ մասը թուրքերեն է, որոշ էջեր՝ հայերեն:

«Ակօս»ը Հանրապետութեան շրջանի առաջին հայերեն-թուրքերեն երկլեզու լրագիրն է: Թերթն ունի նաև համացանցային էջ: «Ակօսի» համարները առաքվում են նաեւ Հայաստանի տարբեր գրադարաններ:

«Սուրբ փրկիչ», 1900–2016: 1900-թ. Պատրիկ Գյուլբենկյանի հոգաբարձության շրջանում որոշվում է, որ հիվանդանոցը ամեն տարի տարեցույց պետք է հրատարակի: Այսպիսով, ն**ախապես այն տպագրվում է որպես տարեցույց:** Հայոց ցեղասպանության հետեւանքով 1910–1924 թվականների ընթացքում ընդհատվում է տարեցույցի տպագրությունը: 1924-ից վերստին սկսում է հրատարկվել, 1949-ից սկսած «Սուրբ Փրկիչը» սկսում է տպագրվել որպես ազգային հիվանդանոցի տեղեկատու ամսաթերթ (գրական, գեղարվեստական, գիտական, բժշկական)[34]: Ներկայումս (2016 թ.) թերթի արտոնատերն է Պետրոս Շիրինօղլուն, հրատարակության վարիչ Արսեն Յարման, խմբագրապետ Հ. Մաքրուհի Պ. Յակոբյան, Վարչական վայր Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոց: Ներառում է հայերեն, թուրքերեն լեզվով նյութեր:

«Փարոս» ամսաթերթ. Հիմնադրվել է Մայտա Սարիս, Թալին Էքյեմեզ, Էլենքա Էլտեք Չատըրճըօղլու եւ Մկրտիչ Առծույանի կողմից: Համարվում է Քալֆայան դպրոցի թերթը: Առաջին համարը լույս է տեսել 2011-ի հոկտեմբերին: Հիմնական նպատակն է Թուրքիայի հայկական փոքրամասնությանը ծանոթացնել համայնքային, մշակութային կյանքին՝ վավերագրային մերձեցումով, եւ սատարել նրանց ուղիղ ըմբռնմանը:

«Լույս» (Լույս մագազին) երկշաբաթաթերթ. Սկսել է հրատարակվել 2013-ի ապրիլ ամսից: Թերթի նախաձեռնողներից են Արամ Քուրանին եւ Շահնուր Գազանճըն: Թերթն անդրադառնում է հայ, հույն, ասորի եւ հրեա համայնքներին, նրանց առօրեական, մարզական, քաղաքական ու տնտեսական հարցերին:

Նշված պարբերականներից զատ 1992-ից հետո Թուրքիայում հրատարկվել են այլ պարբերականներ եւս՝ «Լուսատու», «Փունջ», «Դալարգյուղ», «Մեշրու», տարբեր դպրոցների աշակերտական թերթեր ու հանդեսներ:

---

[34] **Բաբլոյան Ա.Մ.,** նշվ. աշխ., 251:

VERA SAHAKYAN
Mashtots Institute of Ancient Manuscripts – Matenadaran
sahakyanvera@gmail.com

THE ARMENIAN PRESS IN THE OTTOMAN EMPIRE AND THE TURKISH REPUBLIC (1915–2016)

SUMMARY

The article makes an attempt to analyze the periods and reasons for terminating the publication of Armenian periodicals throughout the Armenian Genocide of 1915–1916 and in the course of the long-term state policy of Genocide in Western Armenia and other Armenian-populated areas of the Ottoman Empire. This period can be virtually divided into four stages. The history of the press of 1915–1980 is presented, with a special emphasis on the periodicals initiated in 1980 and functioning until 2016, which are not found in the bibliography.

ВЕРА СААКЯН
Институт древних рукописей имени Маштоца – Матенадаран
sahakyanvera@gmail.com

АРМЯНСКАЯ ПЕЧАТЬ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ И ТУРЕЦКОЙ РЕСПУБЛИКЕ (1915–2016 ГГ.)

РЕЗЮМЕ

В статье сделана попытка анализа этапов и причин прекращения деятельности периодической печати во время Геноцида армян 1915–1916 гг. и в течение продолжительной государственной политики геноцида в Западной Армении и других армянонаселённых областях Османской империи. Эти периоды условно разделены на четыре этапа. Представлена история печати 1915–1980 гг., по мере возможности обращено внимание на периодические издания, основанные в 1980–2016 гг., которые оказались не включёнными в библиографичекие списки.

ЛУСИНЕ ТАНАДЖЯН
Институт археологии и этнографии НАН РА
tanajyan07@mail.ru

СОЦИАЛЬНЫЕ ИЗМЕНЕНИЯ СРЕДИ АРМЯН В ИНОНАЦИОНАЛЬНОЙ СРЕДЕ

Роль родства также очевидна при выборе непосредственного окружения. В этом случае следует рассматривать тот же вопрос, но уже в зависимости от того, кем является близкий друг респондента (член семьи, родственник, сосед, коллега). В армянской общине Лос-Анджелеса предпочтения в выборе друга более многообразны, чем в Тегеране, но ни в первом, ни во втором случае нет прямой связи между выбором друга и восприятием его как делового партнёра. Конечно, почти все группы в обеих общинах ответили, что хотели бы видеть члена своей семьи в качестве делового партнёра, однако в тех же масштабах, а иногда и в больших, фактически, наблюдается тенденция проведения экономической деятельности в одиночку. Это, скорее всего можно объяснить как личностное качество мигранта, чем явление содержащее определённую особенность.[8]

Представляется интересным рассмотреть степень вовлечённости армян в социальные отношения и направление сетевых предпочтений на личностном уровне в странах проживания. В выбранных нами общинах, для выявления степени вовлечённости армян в социальные отношения, мы использовали следующие параметры: работу опрошенных в настоящем, его вовлечённость в общинные организации, страну выхода, личность друга в зависимости от пола, возраста и образования.

[8] **Windzio M.,** 2013, № 25 (2), 123–145.

Таблица 1. Степень вовлеченности в социальную жизнь в зависимости от пола, возраста и образования армян Лос-Анджелеса и Тегерана. в %

Лос-Анджелес

		Образование				Возраст				Пол		
		Среднее	Средн. специальное	Высшее	Всего	18-29	30-49	50 и больше	Всего	Мужской	Женский	Всего
Личность близкого друга	сосед	27	27	46	100	10	60	30	100	30	70	100
	родственник	28	29	43	100	19	46	35	100	37	63	100
	партнер	19	19	62	100	15	40	45	100	37	63	100
	земляк	39	22	39	100	10	21	69	100	55	45	100
	одноклассник	42	17	41	100	44	22	34	100	38	62	100
	член семьи	18	33	49	100	12	62	26	100	27	73	100
Вовлеченность в общинные организации	партийные, политические	43	36	21	100	25	17	58	100	21	79	100
	благотворительные	15	15	70	100	22	11	67	100	25	75	100
	спортивно-культурные	-	-	100	100	-	33	67	100	67	33	100
Тип занятости	учащийся	44	37	19	100	67	25	8	100	48	52	100
	занятые трудовой деятельностью	29	34	37	100	5	18	16	100	34	66	100
	безработный	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Страна «выхода»	Республика Армения	17	23	60	100	11	54	35	100	34	66	100
	США	58	8	34	100	64	36	-	100	62	38	100
	Страны Ближнего Востока и Ирана	18	28	54	100	8	48	44	100	33	67	100
	СНГ, Европа	12	12	76	100	36	36	28	100	44	56	100

Тегеран

		Образование				Возраст				Пол		
		Среднее	Средн. специальное	Высшее	Всего	18-29	30-49	50 и больше	Всего	Мужской	Женский	Всего
Личность близкого друга	сосед	80	-	20	100	-	100	-	100	40	60	100
	родственник	42	14	44	100	3	58	39	100	28	72	100
	партнер	55	5	40	100	9	54	37	100	53	47	100
	земляк	60	20	20	100	-	80	20	100	-	100	100
	одноклассник	21	8	29	100	44	39	17	100	21	79	100
	член семьи	43	-	57	100	-	83	17	100	11	89	100
Вовлечен-ность в общинные организации	благотворительный	36	8	56	100	5	45	50	100	12	88	100
	образовательный, общественный	42	9	49	100	9	52	39	100	41	59	100
	спортивно-культурный	15	8	77	100	10	60	30	100	23	77	100
	церковный	66	-	34	100	33	33	34	100	-	100	100
	национальный	19	12	69	100	30	54	16	100	35	65	100
Тип занятости	учащийся	-	-	100	100	100	-	-	100	-	100	100
	занятые трудовой деятельностью	43	7	50	100	7	63	30	100	3	7	100
	безработный	22	22	56	100	-	-	100	100	22	78	100

В Лос-Анджелесе наблюдается высокая активность со стороны возрастной группы «выше 50», что касается общины Тегерана, то средние и старшие возрастные группы проявляют почти одинаковую активность во всех сферах, а молодёжь числится в группах учащихся и в спортивно-культурных организациях. И в Лос-Анджелесе, и в Тегеране, почти во всех группах, наблюдается высокий уровень образованности.

Таким образом, одним из важнейших факторов изменения или сохранения особенностей сетевого поведения в инонациональной среде является соотношение внешних и внутренних факторов влияющих на общину. Доминирование одного из них приводит к формированию совершенно иных социальных отношений, поведения и т.п. Помимо внешних и внутренних факторов, оказывающих воздействие на общину, важно выделить цепь индивид-семья-община, каждое звено которой может действовать как отдельный фактор, определяющий тип, характер общины, а так же социальные отношения внутри нее.

БИБЛИОГРАФИЯ

Кайзер М., Неформальный сектор торговли в Узбекистане.//Журнал социологии и социальной антропологии, № 2, 2000.

Рзаева С.В., Этническая социальная сеть как механизм миграционных процессов и адаптации мигрантов в принимающем обществе: О понятии и устройстве// Вестник Томского государственного университета. 2015. № 395.

«Հայրենիք-սփյուռք առնչությունները հայկական մամուլում» (Հայաստանի և սփյուռքի թերթերի կոնտենտ անալիզ), Երևան, «Գիտություն», 2012:

Barnes J.A., Class and committees in a Norwegian island parish, human relations, 1954.

Community // The Concise Oxford Dictionary of Sociology / Ed. by G. Marshall. New York, Oxford: Oxford University Press, 1996.

Lin N., Social resources and instrumental action // Social Structure and Network Analysis / Ed. By P. Mardsen. Beverly Hills: Sage, 1982.

Windzio M., Bicr E. Are we just friends? Immigrant integration into high- and low- cost // Rationality and Society 2013, № 25 (2).

ՍՈՆԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
nesona@bk.ru

ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ ազգի տարբեր հատվածների կենսագործունեությունն ընթանում է տարբեր և բազմազան այլէթնիկ միջավայրերում: Սոցիալական ցանցերը հնարավորություն են ընձեռում ձևավորել էթնիկ խմբի ինքնակառավարման կառուցվածքներ օտար միջավայրում, որոնց գործառույթները պայմանավորված են ցանցում ստեղծված հին և նոր կապերի գոյությամբ:

Սփյուռքում սոցիալական ցանցերի գործառույթների ուսումնասիրության փորձը կարող է կարևոր նշանակություն ստանալ բոլոր սփյուռք ունեցող էթնոսների զարգացման օրինաչափությունները հետևելու և հեռանկարներն ընկալելու գործում: Հետևաբար հայկական սփյուռքում գործող սոցիալական ցանցերի գործառնության բնույթի իմաստավորումը թույլ կտա կողմնորոշվել ժամանակակից բազմազգ պետություններում ընթացող էթնոսոցիալ գործընթացների հեռանկարների որոշակիացման հարցում:

Սոցիալական ցանցերի միջոցով հնարավորություն է ընձեռվում ձևավորել էթնիկ խմբի ինքնակառավարման կառուցվածքներ, որոնց գործառույթները պայմանավորված են ցանցում ստեղծված նոր և հին կապերի գոյությամբ: Ահա այս պատճառով շատ կարևոր է ուսումնասիրել սփյուռքում սոցիալական ցանցերի գործառնության բնույթը, սահմանել նրանց որակական չափանիշները և վերհանել ազդող գործոնները:

Աշխատանքը հիմնված է Լոս Անջելեսի և Թեհրանի հայկական համայնքներում «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագրի շրջանակներում իրականացված էթնոսոցիոլոգիական հետազոտության վրա:

Աշխատանքը նպատակ ունի դուրս բերել այլ միջավայրերում հայերն ինչպես են հարաբերություններ հաստատում և զարգացնում, արդյոք պահպան-

վում են վերոնշյալ առանձնահատկությունները, և արտաքին միջավայրի ազդեցությամբ դրանք ինչ փոփոխությունների են ենթարկվում:

Հայկական հասարակության մեջ ցանցային հարաբերությունների կառուցման և գործառնության դեպքում որոշիչ դեր ունեն ցանցի ներսում ունեցած կապերը և դրանց բնույթը: Այդ պատճառով հայկական սոցիալական հարաբերությունների համակարգում առաջնային գոտում գտնվում են ամենամերձ՝ ընտանեկան-բարեկամական կապերը, ապա նոր ընկերական, հարևանական, գործընկերային և այլն: Համապատասխանաբար, դերերի և կարգավիճակների բաշխման պարագայում որոշիչ գործոնները դասավորվում են ըստ վերոնշյալ հաջորդականության:

Այսպիսով, այլէթնիկ միջավայրում ցանցային վարքի փոփոխության կամ առանձնահատկությունների պահպանման համար կարևորագույն գործոններից է տվյալ միջավայրի ազդեցության և ներքին գործոնի հարաբերակցությունը: Որևէ մեկի գերիշխումը հանգեցնում է բոլորովին այլ սոցիալական հարաբերությունների, վարքի և համայնքի ձևավորման:

Բացի արտաքին ու ներքին գործոններից, կարևոր է առանձնացնել անհատ-ընտանիք-համայնք շղթան, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ կարող է հանդես գալ որպես առանձին գործոն համայնքի ձևի, բնույթի, դրա ներսում սոցիալական հարաբերությունների սահմանման համար:

SONA NERSISYAN
Institute of Archaeology and Ethnography, NAS RA
nesona@bk.ru

NETWORK RELATIONS IN ARMENIAN DIASPORA

SUMMARY

Life activities of different groups of Armenians are held in various and diverse ethnic environments. Social relations give an opportunity to create self-governing establishments of an ethnic group in foreign environment, factors of which are connected with old and new ties of the social network.

In Diaspora the research of social network factors is important for observing and understanding the horizons of development patterns for all nations that have Diasporas. Hence, the relevance of social network factors in the Armenian Diaspora allow us to find our way in the certainty of horizons of ethno-social processes of modern multi-national countries.

The functions of self-governing establishments of ethnic groups are connected with the existence of old and new connections. For this reason it is very important to study the functions of the social network of Diaspora, define their qualitative criteria and reveal the affecting factors.

Connections and the quintessence of the net have a decisive role in the creation and functioning of the Armenian society net relations. Thus, family – relatives connections are primary. They are followed by family – friends, neighbors, colleagues, etc. ties. Correspondingly, in case roles and statuses diverge, decisive factors are lined up according to the subsequence mentioned above.

This work aims to bring out facts concerning the relationship ties and the development of Armenians in other environments. The question we are after is whether they save the features mentioned above or undergo some changes in a foreign environment.

The application of three methods has proved to be productive in our research:

• Standardized interviews with members of the Armenian communities in Los Angeles and Tehran,

• In-depth and expert interviews with representatives of Armenian community organizations,

• Non-participant observation in communities.

For keeping net behavior changes or significances in other ethnic environments, of paramount imporatance turns out to be the effect of the correlation of the given environment and inner factor ratio. Domination of any of these factors results in different social relations, behaviors and community formation.

Besides inner and outer factors, for defining the social relations in the community it is also important to segregate the individual – family – community chain, where each component can appear as a separate factor of the community’s form and essence.

PUBLICATIONS
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՊԱՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
pavelchobanyan@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕՍՄԱՆՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Օսմանյան և Սեֆյան պետությունների միջև մասնատված Հայաստանի վերաբերյալ վավերագրական նյութերն ստեղծվել և պահպանվել են այդ պետությունների պաշտոնական լեզուներով, որոնց հետազոտման և հայկական սկզբնաղբյուրների հաղորդումների հետ համեմատության արդյունքում կարելի է ամբողջական և համալիր պատկերացում ունենալ Հայաստանի պատմության առանցքային շատ հիմնահարցերի վերաբերյալ: Նմանաբնույթ սկզբնաղբյուրների թվում են հարկամատյանները, որոնք երկրի ժողովրդագրական պատկերը ներկայացնելու կարևոր և անհամեմատ ճշգրիտ փաստաթղթեր են: Երկրի բնիկ բնակչությունը վճարում էր հարկեր, որոնք ամբողջությամբ հաշվառվում էին ըստ բնակավայրերի ծխերի, զբաղմունքի, դավանության և այլն: Պարսկական իշխանությունների կողմից Արևելյան Հայաստանում իրականացված մարդահամարի վերաբերյալ Եսայի Հասան Ջալալյանը նշում է. «Եւ ցրուեցան զօրքն ընդ երկիրս և ընդ գիւղօրայս ի թիւ արկեալ գրովն, և քանզի յոյժ ծանր էր լուծն և ոչ կարէին տանել, վասն որոյ չարչարէին և կեղեքէին, և ջարդելով առնուին ըստ չափու իւրեանց ի յոլովիցն՝ յոլով, և ի փոքունցն՝ փոքր. զի (մեծ) ցեղն հարիւր յիսուն, հարիւր, կամ յիսուն թուման. և յոյժ փոքրն յերեսուն և կամ ի քսան թումանէ չէր պակաս: Նոյնպէս ի վաճառականաց, և յամենայն արուեստաւորացն առին: Եւ այսպէս ամի ամի զգլուխսն համարէին, և հարկահանքն եկեալ ճշգիւ առնուին: Յետ այսորիկ միւս եւս կերպիւ հարկս եդին, և անուանեցին զայն Ապիտուրան. դարձեալ միւս եւս եդին, և զայն

աացին Շահզատի ախրաջովն, միւս եւս յաւելին, և անուանեցին Շէշ տինար, և զայս երեքպատկեցին»[1]:

Նման հարկամատյաններ կազմվել են նաև Հայաստանի Արևմտյան և Արևելյան տարածքներում Օսմանյան նվաճումներից հետո նրանց տիրապետության հաստատման նպատակով:

Ինչպես հայտնի է, Օսմանյան պետությունը 1578–90 թթ. թուրք-պարսկական պատերազմի ժամանակ, ինչպես նաև 1722 թ. աֆղանների կողմից Սպահանը գրավելուց և Ռուսաստանի կողմից Կասպիական արշավանքն սկսելուց անմիջապես հետո արշավեց Այսրկովկաս ու գրավեց մինչև Շամախի ընկած տարածքները, ինչպես նաև Իրանական Ատրպատականն ու հարակից այլ տարածքներ՝ առավել լուրջ դիմադրության հանդիպելով հիմնականում Հայաստանում՝ Երևանում, Սյունիքում և Արցախում: Օսմանյան նվաճողական արշավանքների և ռուս-թուրքական 1724 թ. պայմանագրի արդյունքում Հայաստանը և Վրաստանը հայտնվեցին Օսմանյան տիրապետության ներքո: Նորանվաճ երկրամասերում հարկահավաքությունը կազմակերպելու նպատակով նախկինում իրանական տիրապետության ներքո գտնվող վարչա-քաղաքական միավորների սահմաններում օսմաններն իրականացրին աշխարհագիր, կազմեցին պետական պաշտոնական հարկամատյաններ, որոնցով կարգավորվելու էր հարկերի գանձումը: Հարկամատյանների փաստական տվյալների միջոցով երկրի բնակչության հաշվառման հենքի վրա հաստատվում է Հայաստանում հայ բնակչության քանակական գերակշռության փաստը:

Օտար տիրապետության հաստատումը կասեցնում էր երկրի բնականոն զարգացումը՝ զրկելով ժողովրդին իր աշխատանքի արդյունքը լիիրավ տնօրինելու հնարավորությունից՝ Հայաստանից հարկի ձևով հավաքված գումարների օգտագործումը ուղղելով հիմնականում Հայաստանից դուրս այլևայլ նպատակների:[2] Հայ բնակչությունը շարունակել է մշակել իր հողը, ունենալ իր տնտեսությունը, պահպանել իր հայրենիքում ապրելու իրավունքն ու զգացումը, սակայն համեմատաբար ավելի ծանր պայմաններում:

Այսպիսով, Հարկամատյան փաստաթղթերը, որոնցով առաջնորդվում էին օտար իշխանությունները հարկերի գանձումը իրականացնելու համար, կարևոր աղբյուր են երկրի պատմության որոշակի ժամանակաշրջանի շատ հարցերի պատասխաններ գտնելու համար:

Ուստի հարկամատյանների ուսումնասիրությամբ հնարավոր է վեր հանել Հայաստանի ողջ բնակչության մոտավոր քանակը, իմանալ յուրաքանչյուր բնակավայրերում ծխերի քանակը, էթնիկ կազմը և ժամանակի մեջ նրա փոփոխութ-

[1] **Եսայի Հասան Ջալալեանց,** 1868, 15–16:

[2] Գանձակ-Արցախից գանձված հարկերի ու եկամուտների օգտագործման հրամանագիրը և բաշխման ցուցակը տե՛ս **Osmanli belgelerinde** Karabağ, 2009, 297–352.

յունները, ուսումնասիրել բնակչության տնտեսական զբաղվածությունը, կազմել բնակավայրերի քարտեզը և այլն:

Օսմանյան չորս մարդահամարների հարկամատյանները որպես պատմական սկզբնաղբյուրներ, վաղուց են արժանացել հետազոտողների ուշադրությանը, որոնց հիման վրա իրականացվել են զանազան հետազոտություններ:

Չնայած նշված սկզբնաղբյուրների կարևորությանը, Հայաստանում պարսկական հարկամատյաններից որևէ մեկը դեռևս հայտնաբերված չէ, իսկ օսմանյան հարկային համակարգի վավերագրերից հայերենի են թարգմանվել ընդամենը միայն իրավական համառոտ ակտ-հրահանգները՝ «Կանուննամենները», որոնք առանձին նահանգների (վիլայեթների) համար սահմանում են միայն հարկերի գանձման չափերն ու սկզբունքները,[3] իսկ ծխերի թվարկմամբ բուն հարկամատյանները մնացել են անծանոթ:

Վրաց հետազոտողների համար հետաքրքրություն ներկայացնող հարկամատյանները օսմաներենից վրացերեն են թարգմանվել և օսմաներեն բնագրերի հետ միասին ուսումնասիրվել ու հրատարակվել Վրաստանում:[4] Ժամանակագրորեն վերջինը լույս է տեսել Թբիլիսիում 2009–2010 թթ. «1728 թ. Թիֆլիսի վիլայեթի մեծ դավթարը» վերնագրով: Թիֆլիսի նահանգում (վիլայեթում) 1728 թ. օսմանյան հարկամատյանի վրացերեն երկհատոր հրատարակությունը ներառում է նաև Հայաստանի հյուսիսային տարածքները, այն է Աշոցքը, Տաշիրը, Փամբակը և այլն, որտեղ ներկայացված են բոլոր բնակավայրերը՝ հայկական իրենց ծխերի թվարկումով և անմարդաբնակ շատ գյուղատեղիների արձանագրումներով:[5] Առաջին հատորի սկզբում դրված է Սուլթան Ահմեդ Երրորդի (1703–1730 թթ.) թուղրան՝ «Սուլթան Ահմեդ խան Մուստաֆա խանի որդի, միշտ հաղթող» մակագրությամբ:

Օսմանյան 1593 թ. և 1728 թ. կազմված Երևանի, Գանձակ-Ղարաբաղի և Նախիջևանի ընդարձակ և համառոտ հարկամատյանները, որոնք հստակ և հնարավորինս ճշգրիտ վկայություններ են պարունակում ինչպես գյուղերի ծխաքանակի, այնպես էլ գավառի մեջ ընդգրկված բնակավայրերի քանակի վերաբերյալ, հատուկ ուշադրության են արժանացել նաև Ադրբեջանում: Տեղեկատվական պատերազմում ադրբեջանական կեղծարարության հիմնական թիրախնե-

---

[3] «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI–XVII դարերի Կանուննամեներ)», Երևան, 1964:

[4] გურჯისტანის ვიალეთის დიდი დავთარი, თურქული ტექსტი გამოსცა და თარგმნა ს. ჯიქიამ, თბ., 1941, 1947, 1958. ჩილდირის ეიალეთის ჯაბა დავთარი 1694-1732წწ.., თურქული ტექსტი ქართული თარგმანით გამოსაცემად მოამზადა ცისანა აბულაძემ, გამოკვლევა დაურთოთ მიხეილ სვანიძემ, თბილისი, 1979, 326 გვ.

[5] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წ. I-II, თბ., 2009–2010.

րից է Հայաստանի պատմության և նրա ուսումնասիրության բազմալեզու (այդ թվում նաև թյուրքալեզու) սկզբնաղբյուրների կեղծումը:

Թուրքիայի արխիվներից վերցված բնագրերի հիման վրա այդ հարկամատյանները հրատարակվել են Բաքվում, որտեղ սակայն աղճատելու միջոցով փորձ է արվել օգտագործել դրանք որպես ապացույց տարածաշրջանը որպես մահմեդաբնակ «Արևմտյան Ադրբեջան» ներկայացնելու համար:[6] Օսմանյան հարկամատյաններում թեև արձանագրված են բոլոր բնակավայրերն ու բնակավայրերի բոլոր ծխերը՝ անձնանուններով ու հայրանուններով՝ գյուղական համայնքների կողմից վճարելիք գումարի չափի ու հարկատեսակների թվարկմամբ և հարկամատյանում արձանագրված են նաև անմարդաբնակ գյուղերը, սակայն ադրբեջանական հրատարակություններում ներկայացված չեն քրիստոնյա հայ բնակչության ծխերի թվարկումները: Մասնավորապես Նախիջևանի ընդարձակ հարկամատյանի ադրբեջանական հրատարակության մեջ ոչ միայն չի կցված օսմաներեն բնագիրը, այլև մահմեդական բնակչության ծխերը թվարկված են անուն առ անուն՝ ամբողջությամբ, իսկ հայ բնակչության վերաբերյալ հրատարակչի կողմից միայն նշվում է «ոչ մահմեդական» ձևակերպումը և փակագծերում ավելացվում է ընդամենը տեղեկություն առկայության ու ընդհանուր թվաքանակի վերաբերյալ՝ առանց ծխերի թվարկման, որի ճշգրտությանը ևս բնականաբար դժվար է հավատ ընծայել:[7] Այդ է պատճառը, որ ադրբեջանցի հեղինակները արձանագրում են հայ բնակչության առկայության և գերակշռության փաստը միայն հարկամատյանների առաջաբաններում եղած արձանագրումներում,

---

[6] «Irəvan əyalətinin icmal dəftəri». Araşdirma, tərcümə, qeyd və əlavələrin müəllifləri Ziya Bünyadov Hüsaməddin Məmmədov (Qaramanli), – Bakı: “Elm” 1996. – 184 səh.; (Երևանի էյալեթի համառոտ հարկամատյանը, Ուսումնասիրության, թարգմանության, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակներ Զիա Բունիաթով, Հուսամեդդին Մամմադով /Քարամանլի/, Բաքու, «Էլմ » 1996, 184 էջ) «Naxçıvan sancağının müfəssəl dəftəri». Bakı, 1997. (Նախիջևանի սանջակի ընդարձակ հարկամատյան, Բաքու, 1997) «Gəncə-Qarabağ əyalətinin müfəssəl dəftəri». Ön söz, tərcümə, qeyd və şərhlərin müəllifi Hüsaməddin Məmmədov (Qaramanlı). Bakı, Şuşa nəşr*iy*yatı, 2000. 576 s. (Գանձակ-Ղարաբաղ էյալեթի ընդարձակ հարկամատյան, Առաջաբանի, թարգմանության, ծանոթագրությունների ու մեկնաբանությունների հեղինակ Հուսամադդին Մամմադով /Գարամանլը/, Բաքու, Շուշա հրատ., 2000, 576 էջ) : «Naxçivan sancağinin müfəssəl dəftəri». 9 məhərrəm 1140 (27 avqust 1727), Araşdırma, qeyd və şərhlərin müəllifi Hüsaməddin Məmmədov (Qaramanli), tərcümə edənlər: Ziya Bünyadov və Hüsaməddin Məmmədov (Qaramanli), Bakı-"Elm"-2001 http://elibrary.bsu.az/books rax/N_174.pdf); “1728-ci il Tiflis əyalətinin müfəssəl dəftəri (Borçalı və Qazax)” (Hazırlayan Ş.Mustafayev; Bakı, 2001). “Lori vilayətinin icmal dəftəri” (Hazırlayan Ş.Mustafayev; Bakı, 2004). «Irəvan əyalətinin icmal dəftəri». Bakı, 2009. «Gəncə-Qarabağ əyalətinin icmal dəftəri». Bakı: Çaşıoğlu, 2010. - 508 səhifə.

[7] «Naxçivan sancağinin müfəssəl dəftəri» 9 məhərrəm 1140 (27 avqust 1727), Araşdırma, qeyd və şərhlərin müəllifi Hüsaməddin Məmmədov (Qaramanli), tərcümə edənlər: Ziya Bünyadov və Hüsaməddin Məmmədov (Qaramanli), Bakı-"Elm"-2001.

որոնք սակայն կասկածի տակ են առնվում, թե կան նաև այլևայլ «փաստեր» և «հաղորդումներ» ևս, որոնց միջոցով կարելի է ապացուցել մահմեդական բնակչության գերակշռության հանգամանքը: Արձանագրելով, որ «Երևանի նահանգի բնակչության ազգային կազմն ու կառուցվածքը ըստ հարկամատյանում գրանցված անձնանունների, հնարավոր է որոշել»[8] և համոզվելով որ հարկամատյանի տվյալներով քանակական մեծամասնություն կազմում են քրիստոնյաները (իմա՝ հայերը), ուստի այդ շրջանցելու և կասկածի տակ առնելու համար նաև հարկամատյանի տվյալների ճշգրտությունը, օգտագործվում են տարբեր պատմողական աղբյուրների հաղորդումներ (Էվլիա Չելեբի և ուրիշներ), որոնցում բնակչության քանակի ու էթնիկ հարաբերակցության մասին կան ուռճացված և շինծու մոտավոր թվեր:[9] Հարկամատյանների և պատմիչների հաղորդումների միջև եղած տարբերությունը ցուցադրելու նպատակով, նշվում է. «Օրինակի համար, ըստ 1590 թ. թվագրված Երևանի նահանգի ընդարձակ հարկամատյանի հիման վրա մեր կատարած հաշվարկի, ողջ նահանգում հաշվառված էր 9164 հարկատու անձ, սրանցից 8.654 կազմում են ընտանիքավորները, իսկ 510 մարդ ամուրիներ էին (յուրաքանչյուր ընտանիքի 5 շնչից բաղկացած լինելը ընդունելու դեպքում, այս ժամանակաշրջանում Երևանի նահանգում կարող ենք հաշվել 43.780 բնակիչ): Հարկամատյանում գրանցված անձնավորությունների ազգային կազմին անդրադառնալու դեպքում. սրանցից 59,1%-ը քրիստոնյաներ, իսկ 39,9%-ը[10] կազմում էին մուսուլմանները»:[11] Նույն միջոցը կիրառվում է նաև Նախիջևանի պարագայում:

16-րդ դարավերջին Երևանի նահանգում ըստ նշված հարկամատյանի, արձանագրված էր 1883 գյուղ:[12]

Արցախյան հակամարտության առիթով իրենց ներբերումը արձանագրելու նպատակով արխիվային վավերագրերի ժողովածուներ հրատարակվել են նաև

---

[8] «Ancaq İrəvan əyaləti əhalisinin etnik tərkibini və strukturunu adı dəftərə düşənlərin şəxs adlarına görə müəyyənləşdirmək mümkündür". Տե՛ս «Irəvan əyalətinin icmal dəftəri». – 1996, 9.

[9] Այսպես, Էվլիա Չելեբու տվյալներով Երևանն ուներ 2060 տուն, իսկ Շարդենը նշում է 800: Նախիջևան քաղաքում Էվլիա Չելեբին նշում է 10200 տուն, Շարդենը՝ 2000: Տե՛ս «Irəvan əyalətinin icmal dəftəri». 1996. 11–12.

[10] «Irəvan əyalətinin icmal dəftəri». – Bakı: "Elm" 1996. – səh. 9–10. Մուսուլմանների համար տոկոսային նշումը տպագրված է՝ 49,9%, ինչը թվաբանական վրիպակ է:

[11] «Misal üçün, 1590-cı il tarixli İrəvan əyalətinin müfəssəl dəftərinə əsasən apardığımız hesablamalara görə, bütün əyalət üzrə 9.164 vergi mükəlləfiyyəti daşıyan adam qeydə alınmışdır ki, bunların da 8.654 nəfəri evli, 510 nəfəri isə subay kişilər idi (hər ailənin 5 nəfərdən ibarət olduğunu qeyd etsək, bu // dövrdə İrəvan əyalətində 43.780 nəfərin yaşadığını qeyd edə bilərik). Adı dəftərə düşənlərin etnik tərkibinə gəldikdə, bunların 59,1%-ni xristianlar, 49,9%-ni isə müsəlmanlar təşkil etmişdir» («Irəvan əyalətinin icmal dəftəri», 9–10):

[12] «Irəvan əyalətinin icmal dəftəri», 1996, 17:

Ստամբուլում թուրքական արխիվային վարչության կողմից՝ կցելով վավերագրերի բնագրերի լուսանկարները:[13]

Այսպիսով, Իրանի և օսմանյան պետությունների Հայաստանում իրականացված մարդահամարների ու հարկամատյանների ուսումնասիրությունը նոր խնդիր և նոր հնարավորություն է ընձեռում ետխորհրդային արևելագիտության և հայագիտության հետագա անելիքների առումով, ինչն անհրաժեշտ է կեղծիքները կանխելու առումով և կարող է խթանել նաև Հայաստանի միջնադարյան պատմության սոցիալական, տնտեսական, վարչական, տեղանվանական հիմնախնդիրների և ժողովրդագրության հետագա խորացված ուսումնասիրությանը:

Հարկ է արձանագրել, որ հայագիտության մեջ օսմանյան մարդահամարների ողջ հարստությունից առայժմ հրապարակվել է ընդամենը միայն մեկ բնակավայրի՝ Վաղարշապատի, հարկամատյանը:[14]

Վերապահ լինելով ադրբեջանական հրապարակումների ճշգրտության նկատմամբ, ուստի և այն օգտագործելու հնարավորության հանգամանքին, ստորև որպես տեղեկույթ-նմուշ ներկայացնում ենք Թիֆլիս քաղաքում արձանագրված հայկական եկեղեցիներից միայն Մուղնի և Նորաշեն եկեղեցիների շրջակայքում գտնվող և հավանաբար նրանց ծխական թեմերը կազմող բնակչության ցուցակները՝ ըստ 1728 թ. Օսմանյան հարկամատյանի բնագրի վրացական վերծանության[15] և նրա վրացերեն թարգմանության:[16] Հարկամատյանի այդ ցուցակների միջոցով ևս ակնհայտ է դառնում օսմանյան հարկային քաղաքականության էությունը, ինչն ստիպում էր բնակչության որոշ ներկայացուցիչների պարտադրաբար ընդունելու մահմեդականություն:[17]

Հարկ է արձանագրել, որ օսմանյան գրագիրները թեև երբեմն վրիպումներով են արձանագրել հայկական անձնանունների կամ տեղանունների արտասա-

---

[13] **«Osmanli belgelerinde** Karabağ», İstanbul, 2009; «**Osmanli Arşýv belgelerýnde:** Nahçivan», Istanbul, 2011.

[14] Հ. Փափազյան, Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, - «Բանբեր Մատենադարանի», թիվ 5, Երևան, 1960, էջ 431–465: Հ. Փափազյան, Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը,- ՊԲՀ, 1984, թիվ 3, էջ 196–199: Հ. Փափազյան, Նոր նյութեր Արևելյան Հայաստանում թուրքական իշխանությունների հարկային քաղաքականության վերաբերյալ, - Բանբեր Մատենադարանի, թիվ 16, Երևան, 1994, 198–213:

[15] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წ. I, თბ., 2009, էջ 81-88:

[16] Անձնանունների համեմատությունը թարգմանությանը կցված օսմաներեն բնագրի հետ և որոշ նկատված վրիպակների ուղղումները, որոնք նշվում են տողատակ ծանոթագրություններում, կատարել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ Գեորգի Ալեքսանդրի Միրզաբեկյանը:

[17] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წ. I, თბ.,2009, էջ 29-30:

նությունը, սակայն այնուամենայնիվ, դժվար չէ հաստատել նրանց հայկական պատկանելությունը:

Ադրբեջանական հրատարակություններում հայ բնակչության արձանագրումները կարևոր փաստեր են մերկացնելու համար հենց ադրբեջանական պատմագրության այն կեղծիքները, թե մինչև 1828–1829 թթ. այսպես կոչված պարսկահայոց և արևմտահայոց ներգաղթը իբր Արևելյան Հայաստանի տարածքում հայազգի բնակչություն գոյություն չուներ: Հարկամատյանների նպատակասլաց աղավաղումներով հրատարակությամբ ադրբեջանական պատմագրությունը փաստորեն հայտնվել է ինքնամերկացման առջև՝ արձանագրելով Արևելյան Հայաստանում հայազգի բնակչության առկայությունը նախորդ դարերի ընթացքում:

/81/ Մուղանի[1] [Մուղնի] եկեղեցի

Օհան՝ որդի Հարությունի, տունը
Հարություն նրա որդին, մ[ուսուլման է]
Ալահվերդի որդի Իսլամի
Սիմոն՝ որդի Աբրամ քեշիշի, տունը
Օհան նրա որդին, մ[ուսուլման է]
Զուրաբ նրա որդին, մ[ուսուլման է]
Աբրամ մյուս եղբայր
Հակչուբ մյուս եղբայրը
Մովսես նրա որդին
Դավիթ Ավաղբեգի որդին
Անկադ որդի Աբրամի, մ[ուսուլման է]
Օսիպ նրա որդին, մ[ուսուլման է]
Թամազ որդի Մուլարի
Ասթամ որդի Իսլամի
Մուսի եղբայր Սաչուլուի տունը
Իսալի նրա որդին, մ[ուսուլման է]
Միքել որդի Գեորգի, տունը

[1] Վրացերեն թարգմանության մեջ պահպանված է օսմաներեն բնագրի գրելաձևը, սակայն միանգամայն ակնհայտ է, որ օսմաներեն հարկացուցակի կազմողի համար ավելի ծանոթ է եղել Մուղան արտասանությունը, քան Մուղնի-ն: Երևանի նահանգի 1727 թ. Համառոտ հարկամատյանի ադրբեջաներեն թարգմանության մեջ Մուղնի տեղանունը արձանագրված է Մուկնի ձևով: Տե՛ս «İrəvan əyalətinin icmal dəftəri». Bakı, 2009, էջ 65.

«Musa Həsən oğlunun adına timar.
Mukni kəndi. Gəlir: 18.000 ağça».

Կաղրոս նրա որդին, մ[ուսուլման է]
Մկրտում նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Մելքո՝ որդի Մելքոյի, տունը
Գեուրք նրա որդին, մ[ուսուլման է]
Փիրուզ նրա եղբայրը
Աղա որդի Վարթանի
Բաբա նրա որդին
Օսիպ որդի Օհանի, տունը
Բաղդասար եղբայր նրա, մ[ուսուլման է]
Բաղդալեթ որդի Մամուկայի տունը
Ալահվերդի որդի Ռեվահիլի
Արսլան որդի Ալահվերդիի
Գեորգի նրա որդին, մ[ուսուլման է]
Իսթեփան նրա եղբայրը մ[ուսուլման է]
Իսալի որդի Բաբայի
Ավաղիլ նրա որդին
Օսիպ երկրորդ եղբայրը
Իսթեփան եղբայր Օհանիսի տունը
Օսիպ նրա որդին մ[ուսուլման է]
Ավթանդիլ որդի Դավիթի տունը
Փարսադան նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Եստատե որդի Մաղրիսի
Գուրգեն Իսլամ Բենու
Արութին որդի Արիկայի տունը
Ասբաս նրա որդին, մ[ուսուլման է]
Գուրգեն որդի Արութինի տունը
Փիրլեթ որդի Նակդիի տունը
Դավիթ նրա որդին մ[ուսուլման է]
Արութին որդի Գուրգինի տունը
Դանիել նրա եղբայրը մ[ուսուլման է]
Ավթանդիլ նրա որդին, մ[ուսուլման է]

/82/ Շահկուլի որդի Քուլիի տունը
Գիվիրք նրա որդին, մ[ուսուլման է]
Մանուչեր նրա որդին, մ[ուսուլման է]
Չապլ որդի Արջիկայի տունը
Մելքո որդի Կավադի տունը
Սարգիս որդի Սալիի տունը
Անտոն որդի Բաղոյի մ[ուսուլման է]
Բաբա նրա եղբայրը մ[ուսուլման է]
Բայինդուր որդի Մելքոյի տունը
Բաբաջան որդի Ռաչոյի տունը
Օհան որդի նրա մ[ուսուլման է]
Սամվել նրա եղբայրը մ[ուսուլման է]
Մանվել երկրորդ եղբայրը
Միկիրտում որդի Օհանի
Զուրաբ որդի Գասպարի տունը
Ջոջիք որդի Սեփերի տունը
Գիորգի որդի Արութինի տունը
Անքադ որդի Չապլի տունը
Ռամազան որդի Օսիպի տունը
Կարա խան որդի Սեփեր խանի
Ռամազան նրա եղբայրը
Շերմազան երկրորդ եղբայրը
Զուրաբ որդի Հաքիանի տունը
Ավեդիք նրա որդին, մ[ուսուլման է]
Հինազադ որդի Քուքիի տունը
Ջաբադ նրա որդին, մ[ուսուլման է]
Դիմիտրի որդի Դուդիի տունը
Գիուրք նրա որդին, մ[ուսուլման է]
Հարբիուն որդի Բիյանդուրի
Մադրուս որդի Սարքիսի տունը
Սարքիս նրա որդին
Պետրոս որդի Բաղուսի տունը
Բեժան նրա որդին
Ռոստոմ նրա եղբայրը
Բասիա որդի Նազարի տունը
Բեժան նրա որդին
Նազար նրա եղբայրը
Զուրաբ երկրորդ եղբայրը
Մաշո եղբայր Մելքիդեքի տունը
Գիորգի[2] որդի Գասպարի տունը
Բաբա նրա որդին
Միմիան որդի Իսալի տունը
Արութին որդի Ասատուրի տունը
Զուրաբ որդի Մանկոյի տունը

[2] Օսմաներեն բնագրում՝ Գուրգեն:

Սարիան որդի նրա մ[ուսուլման է]
Էստատե որդի Սակոյի մ[ուսուլման է]
Փիր Ակոփ որդի նրա, մ[ուսուլման է]
Դավիթ նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Արութին որդի Կազարի տունը
Թամազ որդի Ավթադիլի տունը

Բաբա որդի Սեփերի
Իսալի նրա եղբայրը
Ավթանդիլ որդի Թամազի
Գոդերի նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Ռոստոմ նրա եղբայրը
Միհրաբ երկրորդ եղբայրը
Աբել որդի Աղադաջիի տունը
Ադամ նրա եղբայրը
Չապլ որդի Կարապետի
Գաբրիել որդի Մելքոյի տունը
Բաբա նրա որդին
Սիմոն որդի Նադիրի
Բաբա նրա որդին:

Նորաշեն եկեղեցի
/84/ Մարկոզ որդի Ասատուրի տունը
Էստատե որդի Զոհրաբի տունը
Սեզար որդի Մելքոյի տունը
Ավթանդիլ որդի Սեփերի տունը
Իսթեփան նրա որդին տունը
Մովսես որդի Սերոյի, մ[ուսուլման է]
Ասատուր որդի Փիր Բեժանի տունը
Մելքո որդի Բանոյի տունը
Իսթեփան նրա որդին, մ[ուսուլման է]
Շանշե որդի Արութինի, տունը
Սանվել նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Օսիփ որդի Բասոյի, տունը
Ավթանդիլ նրա որդին, մ[ուսուլման է]
Զուրաբ նրա որդին, մ[ուսուլման է]
Մկրտում որդի Միմանի, տունը
Դանիել որդի Բաջուդի
Ավթանդիլ որդի Ռոստոմի
Օսիփ որդի Բողդանի, տունը
Ադամ նրա որդին
Շաքրո նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Գուրգեն երկրորդ որդին
Գիորգի որդի Արութինի տունը
Իսթեփան նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Փարսադան երկրորդ որդին

Օսիպ որդի Կուլիի
Գուզել որդի Նազարի, տունը
Կաղիր նրա որդին, մ[ուսուլման է]
Շահվերդի որդի Էստատեի
Բաղդասար նրա որդին
Բասիա նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Բաբա որդի Հաբաջուլի, տունը
Զուրաբ նրա որդին
Իսթեփան նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Փարսադան որդի Դիմիտրիի, տունը
Օսիփ որդի Կուլիի
Մերաբ նրա որդին
Ռոստոմ նրա որդին, տունը
Բաղդասար որդի Արութինի
Օհաննես նրա եղբայրը, տունը
Խաչատուր նրա եղբայրը, տունը
Իսթեփան նրա որդին, մ[ուսուլման է]
Իսալի նրա եղբայրը
Բաղդասար երկրորդ եղբայրը
Մովսես մյուս եղբայրը
Մկրտում որդի
Շաքրո որդի Գիորգիի, տունը
Գուրգին որդի Բեհզադի
Խալի նրա որդին
Աբել նրա եղբայրը
Զուրաբ որդի Թուլուսի, տունը
Մկրտում նրա որդին
Կակալու նրա որդին
Մելքո որդի Դադունայի, տունը
Ավթանդիլ նրա եղբայրը
Առաքել որդի Մելքոյի
Խաչատուր որդի Միմհանի, տունը
Բաբա նրա եղբայրը մ[ուսուլման է]
Սարքիս որդի Ավազաղի, տունը
/85/ Դանիել որդի Ավադասի, տունը
Գիորգի որդի Ասլամազի[3]
Բարդիս որդի Բողդանի, տունը
Բաբլուքա նրա որդին
Արութին նրա եղբայրը
Մովսես որդի Դումանի, տունը
Դավիթ նրա որդին
Իսալի որդի Մելքոյի, տունը
Դավիթ որդի Գասպարի
Դանիել նրա եղբայրը
Ակոփ որդի Կարապետի, տունը

[3] Օսմաներեն բնագրում՝ Ներսես:

Միմհան որդի Թուլիի, տունը
Չախլ որդի Մակդիսի, տունը
Մկրտում որդի Բաղլիդջայի, տունը
Չախլ որդի Հալիի[4], տունը
Բասո նրա որդին, մ[ուսուլման է]
Գիորգի որդի Լաչուրի, տունը
Դավիթ նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Արութին նրա որդին
Գիորգի որդի Դիմիտրիի
Քայխոսրով որդի Բակիի, տունը
Փարսադան որդի Նազարի, տունը
Գուրգեն նրա որդին, մ[ուսուլման է]
Բեժան որդի Չիլիկդարի
Փարսադան նրա որդին
Մանուչահր որդի Զուրաբի, տունը
Միկիրդոս որդի Օհաննեսի, մ[ուսուլման է]
Արութին նրա որդին մուլիմ է
Էստատե որդի Բաբայի, տունը
Փարսադան որդի Դավիթի
Դավիթ նրա որդին
Օսիփ որդի Գիորգիի, տունը
Շաքրո որդի Գասպարի, տունը
Չախլ որդի Օսիփի
Ռոստոմ նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Ավթանդիլ երկրորդ եղբայրը
Օքրո մյուս եղբայրը
Փիրան որդի Բաբայի
Շահվերդի նրա որդին, մ[ուսուլման է]
Իսթեփան նրա որդին
Զոհրաբ որդի Շահվերդիի, տունը
Խոջաօղլի որդի Բաբենդի
Սալբադա նրա որդին, մ[ուսուլման է]
Գիորգի որդի Փիրդանի, տունը
Օհաննես նրա որդին
Չախլ որդի Գիորգիի, տունը
Իսթեփան նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Մերաբ երկրորդ եղբայրը
Օսիփ որդի Կուբադի
Ավադիք նրա որդին
Արութին նրա եղբայրը
Օհաննես երկրորդ եղբայրը
Բաբա որդի Փարեմուզի, տունը
Գոդերի նրա եղբայրը
Աղա որդի Բաբայի
Շարմազան նրա եղբայրը

[4] Բնագրում՝ Ակիի:

Չաիլ որդի Մակդիսի
Ասադ՝ նրա որդին, մ[ուսուլման է]
Գիորգի որդի Արութինի, մ[ուսուլման է]
Գիորգի որդի Բաբայի, տունը
Շերմազան որդի Նադդիի, մ[ուսուլման է]
Իսալի նրա որդին, մ[ուսուլման է]
Դանիել նրա որդին, մ[ուսուլման է]
Բաբա որդի Աղախանի
Մասաք որդի Նիկայի, տունը
Գիուր որդի Միքեթի
Փիրան որդի Սեփերի, տունը
Գիորգի նրա որդին, մ[ուսուլման է]
Դավիթ նրա որդին, տունը
Զոհրաբ նրա որդին մ[ուսուլման է]
Բաղդի որդի Դավիթի, տունը
Արութին որդի Բաբայի
Ռամազա որդի Մաբուրայի, մ[ուսուլման է]
Էլիզբար նրա որդին
Դավիթ որդի Շարմազանի
Օսիֆ որդի Ամիրի, տունը
Դանիել նրա եղբայրը
Իսթեփան որդի Օսիֆի, տունը
Բաղնիսա նրա որդին, մ[ուսուլման է]
Գուրգին՝ երկրորդ եղբայրը
Կազար որդի Միրվելի, տունը
Գարսևան որդի Փիրանի, տունը
/86/ Աղիման որդի Մուղիի, տունը
Գիրքոր՝ նրա եղբայրը
Առաքել նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Դանիել՝ երկրորդ եղբայրը
Արսլան որդի Ամիրխանի
Հասրեթ որդի Բեժանի, տունը
Բաբա՝ նրա որդին
Իսալի՝ նրա եղբայրը
Բաղդասար որդի Ղանդուրալիի, տունը
Իսալի նրա որդին, մուսուլման է
Ավթանդիլ որդի Ղանդուրայի, տունը
Փիրան նրա որդին, մուսուլման է
Բաղի որդի Ամիարայի
Սանավնի որդի Բաղդի
Բանսու որդի Սանավնիսի
Օթար՝ նրա որդին
Փարսադան՝ երկրորդ եղբայրը
Գուրլիթ՝ երկրորդ եղբայրը
Դինբազ՝ երկրորդ եղբայրը
Մանուչար՝ երկրորդ որդին

Արութին որդի Բաբայի, տունը
Իսթեփան որդի Գասպարի
Զաալ որդի Կարապետի, տունը
Արութին նրա որդին
Գաբրիել նրա եղբայրը
Բեժան՝ որդի Բողդանի, տունը
Գիորգի՝ նրա որդին մ[ուսուլման է]
Դավիթ որդի Փիրունի, տունը
Իսալ նրա եղբայրը
Մանուչաիր՝ մյուս եղբայրը, մ[ուսուլման է]
Մանլու՝ որդի Դավիթի
Դավիթ որդի Զուլփիկարի, տունը
Պավլե նրա որդին
Օսիպ նրա եղբայրը
Փիրան երկրորդ որդին
Արութին որդի Թաբանսի, տունը
Գրիկոր նրա որդին, մ[ուսուլման է]
Պողոս նրա եղբայրը մ[ուսուլման է]
Իսա’ երկրորդ եղբայրը
Արութին որդի Բաղդասարի
Օբադ որդի Առաքելի, տունը
Ափրիամ որդի Առաքելի, տունը
Մովսես որդի Գիորգիի, տունը
Ավդի որդի Շիոյի, տունը
Արութին նրա որդին, մ[ուսուլման է]
Քեշիշ որդի Մուրադի, տունը
Բանսո նրա որդին, մ[ուսուլման է]
Չաիլ որդի Սուլիի, տունը
Փարսադան նրա որդին
Արութին որդի Էստատեի
Սահաք նրա եղբայրը մ[ուսուլման է]
Մուղի երկրորդ եղբայրը, տունը
Թանսո որդի Սակդոյի, տունը
Իսա’ նրա եղբայրը, տունը
Օսիֆ նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Բաբա նրա որդին
Մկրտում նրա որդին
Սանդա նրա որդին
Էստատե որդի Գասպարի, տունը
Փարսադան նրա որդին
Արութին որդի Էստատեի
Չալի որդի Ջանի, տունը
Օքրո նրա որդին
Օսիֆ որդի Դադուի
Օհաննես որդի Փարսադանի
Մելքո որդի Սակուդի, տունը

Իսթեփան նրա որդին
Մովսես նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Սաղա որդի Արութինի
Գուրգեն նրա որդին մ[ուսուլման է]
Դավիթ նրա որդին
Աբրիամ նրա որդին, տունը
Պողոս որդի Չոբանի, տունը
Խաչատուր նրա որդին, մ[ուսուլման է]
Գասպար որդի Չամուլի, տունը
Արսի որդի Ջուղի, տունը
Աբել նրա որդին
Գոզի որդի Ալեքսի, տունը
Ալահվերդի որդի Բաղդասարի, տունը
Մելքո որդի Խոջա Ալիի, տունը
Նուրջա Ալի նրա որդին
Մելքո որդի Առաքելի, տունը
/87/ Դավիթ որդի Գասպարի, տունը
Էստատե որդի Կիրագոզի, տունը
Գարսևան նրա որդին
Դավիթ նրա որդին
Ավետիք նրա որդին
Կարա Նիսթան որդի Կարայի, տունը
Բաղդասար նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Օհան որդի Դադաշի, տունը
Իսալ[5] որդի Մելքոյի, տունը
Օհանես նրա եղբայրը
Բաբա որդի Բեսոյի, տունը
Իվանե[6] որդի Շիոյի
Գիորգի նրա որդին, մ[ուսուլման է]
Իսթեփան որդի Ջոշիի, տունը
Օսիփ նրա որդին, մ[ուսուլման է]
Բաբա նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Գասպար որդի Նազարի, տունը[7]
Իսթեփան նրա որդին[8],
Նազար նրա որդին, մ[ուսուլման է]
Օսիփ որդի Փիրանի, տունը
Կիրակոս նրա որդին մ[ուսուլման է]
Էստատե նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Արութին նրա եղբայրը տունը[9]

Իսթեփան նրա որդին մ[ուսուլման է]
Ջանոս նրա եղբայրը
Օհանես որդի Մելքոյի, տունը
Գոզի որդի Սարքիսի, մ[ուսուլման է]
Սարքիս նրա որդին, մ[ուսուլման է]
Փիրան որդի Բաբայի, տունը
Արութին որդի Բիսոյի, տունը
Գուրգեն նրա որդին, մուսլիմ է
Դավիթ նրա եղբայրը, մուսլիմ է
Գասպար որդի Սակոյի, տունը
Առաքել որդի Մելքոյի, տունը
Գուրգեն նրա որդին
Մարկոզ որդի Ավադեքի
Մելքո որդի Մուրադի, տունը
Իսա’ որդի Բարսեղի, տունը
Հակվերդի որդի Բիսոյի, տունը
Գուրգեն որդի Կուդադի, տունը
Բաղդար որդի Արութինի, տունը
Քայխոսրով որդի Բիվաբեգի
Ավետիս նրա որդին
Բիլ որդի Բասոյի տունը
Օհան որդի Կանդոյի
Ջանսու նրա որդին
Անբութ նրա եղբայրը
Գիորգի Նիհաքի եղբայրը, տունը
Սարքիս որդի Բասիի, տունը
Բարսեղ նրա որդին, մ[ուսուլման է]
Իսա’ նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Առաքել նրա եղբայրը
Գիորգի որդի Սարքիսի, տունը
Էստատե նրա որդին, մ[ուսուլման է]
Չալալ Բուդաքի, տունը
Իսա’ նրա որդին
Քայխոսրով նրա եղբայրը
Օհանես որդի Ամիրի, տունը
Առաքել որդի Սարքիսի, տունը
Թանսու նրա որդին, մ[ուսուլման է]
Բողդան նրա որդին, մ[ուսուլման է]
Բասի նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Իսալ նրա եղբայրը, տունը
Զուրաբ նրա որդին, մ[ուսուլման է]
Թանսու որդի Առաքելի, տունը
Ալահվերդի որդի Խաչոյի, տունը
Օսիփ որդի Էստատեի տունը

---

[5] Իսնանա:

[6] Աբրամ:

[7] Բնագրում առկա է, վրացերեն թարգմանության մեջ բացակայում է:

[8] Բնագրում չկա մ[ուսուլման է] արտահայտությունը, որը առկա է վրացերեն թարգմանության մեջ:

[9] Բնագրում մուսուլմանի փոխարեն գրված է «տունը»:

Բաբա որդի Արութինի, տունը
Մելքո որդի Սարքիսի, տունը
Սահաք նրա որդին
Չալի նրա եղբայրը
Էստատե երկրորդ եղբայրը
Դանիել որդի Ալիխանի
Օսիփ որդի Բասոյի, տունը
Մանուչահր նրա որդին
Թանսու որդի Բասոյի, տունը
Գուրգեն նրա որդին
Իսթեփան նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Ավդալ որդի Իլամի
Բասու որդի Էստատեի
Ղազար որդի Միրհասի
Բաղդասար որդի Փիրանի, տունը
/88/ Բաղդասար նրա որդին
Աբել նրա եղբայրը
Փիրան նրա եղբայրը
Օսիփ նրա եղբայրը
Ավթանդիլ որդի Բահնդուրի, տունը
Բահնդուր նրա որդին, մ[ուսուլման է]
Հասրեթ որդի Բադոյի, տունը
Միմհան նրա որդին
Բաղդասար նրա որդին
Ասատուր որդի Բիսոյի
Պողոս նրա որդին
Կիկո Մուրադի որդու տունը
Արութին որդի Անանիայի
Ռոստոմ Զոհրաբի որդու տունը
Սիմոն նրա որդին
Օսքիթ որդի Լալի
Նիկոնո նրա որդին
Առաքել որդի Ափրիամի, մ[ուսուլման է]
Արութին նրա որդին
Բաղդասար որդի Մասունջի
Զոհրաբ նրա որդին
Սուլխան Ամրալի որդու տունը
Զոհրաբ նրա որդին
Զուրաբ Գասպարի որդու տունը
Փիրան նրա որդին
Գիորգի նրա եղբայրը, մ[ուսուլման է]
Էստատե որդի Միրաբի
Մակարգի նրա եղբայրը
Սահաք Արութինի որդու տունը
Դավիթ Զաալի որդու տունը
Դավիթ Զուքումի որդու տունը
Մերաբ Արութինի որդու տունը
Գիորգի նրա որդին
Իսքենդեր Օհանի որդու տունը
Սիմոն Թաջի որդու տունը
Իսալ նրա որդին, մ[ուսուլման է]
Մովսես Առաքելի որդու տունը
Օհաննես նրա եղբայրը
Բերո Մոսի որդու տունը
Սանբուլ Մանվելի[10] որդու տունը
Իսթեփան նրա որդին մ[ուսուլման է]
Անվալ որդի Մուխաջիրի
Սակդալ Ալեքսի որդու տունը
Դանիել Սարքիսի որդու տունը
Օսիփ նրա եղբայրը
Արութին Բասոյի որդու տունը
Զոհրաբ նրա որդին
Փիրան նրա որդին
Յոբ նրա եղբայրը
Ռամազան (?) նրա որդին
Բողդան Կասթունջի որդու տունը:

[10] Վրացերեն թարգմանության մեջ՝ Մանլուլ:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Եսայի Հասան Ջալալեանց, Համառօտ պատմութիւն ղուանից աշխարհին, Երուսաղէմ, 1868:

Փափազյան Հ., Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, – «Բանբեր Մատենադարանի», թիվ 5, Երևան, 1960, էջ 431– 465:

Փափազյան Հ., Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը,- ՊԲՀ, 1984, թիվ 3, էջ 196-199:

Փափազյան Հ., Նոր նյութեր Արևելյան Հայաստանում թուրքական իշխանությունների հարկային քաղաքականության վերաբերյալ, - Բանբեր Մատենադարանի, թիվ 16, Երևան, 1994, էջ 198-213:

«Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI–XVII դարերի Կանունनामե-ներ)», աշխ. Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ. Կ. Զուլալյանի, Երևան, 1964:

Osmanli belgelerinde Karabağ, İstanbul, 2009.

გურჯისტანის ვილაეთის დიდი დავთარი, თურქული ტექსტი გამოსცა და თარგმნა ს. ჯიქიამ, თბ., 1941, 1947, 1958. ჩილდირის ეიალეთის ჯაბა დავთარი 1694–1732წწ.., თურქული ტექსტი ქართული თარგმანით გამოსაცემად მოამზადა ცისანა აბულაძემ, გამოკვლევა დაურთო მიხეილ სვანიძემ, თბილისი, 1979, 326 გვ.

1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წ. I-II, თბ., 2009-2010.

«Gəncə-Qarabağ əyalətinin müfəssəl dəftəri». Ön söz, tərcümə, qeyd və şərhlərin müəllifi Hüsaməddin Məmmədov (Qaramanlı). Bakı, Şuşa nəşr*iy*yatı, 2000. 576 s.

«Gəncə-Qarabağ əyalətinin icmal dəftəri». Bakı: Çaşıoğlu, 2010. - 508 səhifə

«Irəvan əyalətinin icmal dəftəri». Araşdirma, tərcümə, qeyd və əlavələrin müəllifləri Ziya Bünyadov Hüsaməddin Məmmədov (Qaramanli), – Bakı: “Elm” 1996. – 184 səh.;

«Irəvan əyalətinin icmal dəftəri». Bakı, 2009.

«Naxçivan sancağinin müfəssəl dəftəri». 9 məhərrəm 1140 (27 avqust 1727), Araşdırma, qeyd və şərhlərin müəllifi Hüsaməddin Məmmədov (Qaramanli), tərcümə edənlər: Ziya Bünyadov və Hüsaməddin Məmmədov (Qaramanli), Bakı, ”Elm”, 2001. http://elibrary.bsu.az/books rax/N_174.pdf);

«1728-ci il Tiflis əyalətinin müfəssəl dəftəri (Borçalı və Qazax)» (Hazırlayan Ş. Mustafayev, Bakı, 2001).

«Lori vilayətinin icmal dəftəri» (Hazırlayan Ş.Mustafayev; Bakı, 2004).

«Osmanli belgelerinde Karabağ», İstanbul, 2009.

«Osmanli Arşýv belgelerýnde Nahçivan», Istanbul, 2011.



ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

90-տարեկանում վախճանվեց ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդական, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանը:

Վլադիմիր Բարխուդարյանը ծնվել է 1927 թ. սեպտեմբերի 22-ին Վրաստանի Մառնեուլի շրջանի Աղքյորփի հայկական գյուղում, ծառայողի ընտանիքում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1945 թ., նա ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ և այն հաջողությամբ ավարտել 1950 թ.: Նույն տարում ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան Հայաստանի միջնադարյան պատմության մասնագիտացմամբ (գիտ. ղեկ.՝ Ս. Տ. Երեմյան): 1954 թ. հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: Վ. Բարխուդարյանը աշխատանքի անցել Հայաստանի պատմության պետական թանգարանում՝ որպես կրտսեր գիտական աշխատող (1955–1958), այնուհետև ՀՀ ԳԱԱ պատմու-

թյան ինստիտուտում՝ որպես կրտսեր (1958–1959), ավագ (1963–1967) և գիտքարտուղար (1959–1963): 1968 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը:

1967–1990 թթ. վարել է փոխտնօրենի պաշտոնը: 1990 թ. նա աշխատանքի է անցել ՀՀ ԳԱ նախագահությունում որպես ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, եղել է ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, իսկ 2011թ.ից՝ ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդական: Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը երկար տարիներ եղել է ՀՀ ԳԱԱ պատմության, հնագիտության եւ ազգագրության ինստիտուտների, Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, Բարձրագույն որակավորման հանձնաժողովի եւ այլ հաստատությունների գիտական խորհուրդների անդամ: Վ. Բարխուդարյանը եղել է Բարձրագույն հոգեւոր խորհրդի անդամ, ակտիվ մասնակցություն է ունեցել Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատան կայացմանը:

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանն արժանացել է ԽՍՀՄ Պատվո նշանի, ՀՀ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Սահակ–Ս. Մեսրոպ շքանշանների, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ոսկե մեդալի:

Վ. Բարխուդարյանը գաղթավայրերի պատմության հետազոտության համակարգված ու գիտական նորովի ուսումնասիրության սկզբնավորողներից էր: Նա հայ հասարակության դատին հանձնեց ծանրակշիռ հետազոտություններ հայ գաղթավայրերի, սփյուռքի, ազգային-սոցիալական շարժումների, միջնադարյան Հայաստանի պատմության խնդիրների քննության վերաբերյալ: Նոր Նախիջեւանի գաղութի մասին նրա երկհատոր մենագրությունում լուսաբանվել է հայկական գաղութի նշանակալի տեղը հարավային Ռուսաստանի առեւտրատնտեսական կապերը զարգացնելու գործում, Նոր Նախիջեւանի տեղն ու դերը հայ-ռուսական հասարակական-քաղաքական կյանքում և կրթության, գրականության ու արվեստի ոլորտներում: Նոր Նախիջեւանի օրինակով նա խորությամբ բացահայտել է այն իրողությունը, որ օտար երկնակամարների տակ ծվարած հայկական համայնքների կենսունակությունը մեծապես պայմանավորված է եղել Մայր Հայրենիքի հետ ունեցած կապերով: Վերջինիս հետ տարբեր ձեւերով կապերն ու շփումները արգասավորում էին հայ համայնքների ազգային կյանքը, ամրապնդում նրանց ազգային դիմագիծն ու գոյատեւումը: Մեծարժեք է Մոսկվայի ու Պետերբուրգի հայկական գաղութների պատմության վերաբերյալ Վ. Բարխուդարյանի ստվարածավալ

հետազոտությունը (2010): Հայ-ռուսական փոխհարաբերությունների աստիճանական ձևավորման ողջ գործընթացում առանձնացնելով և ընդգծելով Մոսկվայի և Պետերբուրգի հայ գաղթավայրերի դերակատարման կարևոր նշանակությունը՝ Վ. Բարխուդարյանը մենագրական հետազոտության միջոցով ներկայացրել է հայկական գաղթավայրերի գործունեության ամբողջական պատմությունը՝ սկսելով դրանց ձևավորման փուլից և հայ-ռուսական հարաբերությունների զարգացման լայն ետնախորքի վրա, առ այդ ավելի լիակատար ընդգրկելով աղբյուրագիտական նյութն ու ապահովելով նրանց համակողմանի քննությունը:

Վ. Բարխուդարյանի բնութագրմամբ՝ հայոց գաղթաշխարհի ընդհանուր պատմության հիմնական առանձնահատկությունը երկու հայրենիք ունենալու գաղափարի մարմնավորումն է: Բոլոր գաղութների համար ընդհանուր է եղել այն, որ նրանք լծորդել են Մայր հայրենիքը իրենց ապաստան տված երկրի, նոր հայրենիքի հետ: Ազգային ինքնության պահպանման համար հետևողական պայքարի մեջ էլ դրսևորվել է հայ ժողովրդի կենսունակությունը և հայրենիքում պետականության վերականգնման գաղափարը:

Վ. Բարխուդարյանի խմբագրությամբ ստեղծվեցին հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից», «Հայ ազատագրական շարժումները եւ հայկական գաղթավայրերը 16-18-րդ դարերում» (1985), «Էջեր հայ գաղթավայրերի պատմության» (1996) հոդվածների արժեքավոր ժողովածուները: Նրա խմբագրությամբ հրատարակվեց նաև «Աստվածաշնչյան Հայաստան» գիտաժողովի նյութերի մեծարժեք հատորը (2005):

Վ. Բարխուդարյանը մեծ ներդրում է ունեցել անկախություն ձեռք բերելուց հետո հանրապետության հանրակրթական դպրոցներում պատմության դասագրքերի ստեղծման գործում: Նրա խմբագրությամբ լույս տեսան հայ ժողովրդի ամբողջական պատմությունն ընդգրկող դասագրքերը, որոնք կոչված էին առավել իրատեսական դիրքերից լիարժեք դարձնել պատմության ուսումնասիրության դերակատարումը ազգային արժանապատվության լիարժեքության ձևավորման գործընթացում:

Նա մշտական կապի մեջ էր իր հարազատ ծննդավայրի հետ, մասնակից էր բնակչությանը հուզող հարցերի քննարկմանը և իր հավասարակշիռ դիրքորոշմամբ հետամուտ խնդիրների լուծման գործընթացին:

Նրա հիշատակը միշտ անմար կմնա նրա գործընկերների և բոլոր հայագետների սրտերում:

Պ. Չոբանյան,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



ՊԱՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆ

Ս. թ. մայիսի 18-ին 69 տարեկան հասակում վախճանվել է անվանի պատմաբան ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի «Արևելյան աղբյուրագիտության և պատմագրության» բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ «Բանբեր հայագիտության» միջազգային հանդեսի գլխավոր խմբագիր, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ավագ գիտնական-վերլուծաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պավլիկ Աշոտի Չոբանյանը:

Պավլիկ (Պավել) Չոբանյանը ծնվել է 1948 թ. մարտի 15-ին Ադրբեջանի ԽՍՀ Խանլար քաղաքում (հայրենի գյուղը՝ պատմական Փիփ-Զագլիկ): Կրթությունը ստացել է տեղի հայկական միջնակարգ թիվ 2 դպրոցում, այնուհետև 1973 թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1974–1976 թթ. կովկասագիտություն-վրացագիտություն մասնագիտացմամբ ուսանել է ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում՝ ուսումնառությունը իրականացնելով Վրաց. ԽՍՀ ԳԱ Ձեռագրերի ինստիտուտում՝ ակադեմիկոս Ե. Պ. Մետրևելու ղեկավարությամբ:

Թեկնածուական ատենախոսությունը Պավել Չոբանյանը պաշտպանել է 1982 թ. («Հայերը Մերձավոր Արևելքում ըստ վրաց ուղեգրությունների»), իսկ դոկտորականը՝ 2006 թ. («Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին»):

Պրոֆ. Չոբանյանը գիտական գործունեությունը սկսել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում, անցնելով ճանապարհ կրտսեր գիտաշխատողից՝ մինչև փոխտնօրեն: 1977–1985 թթ. նա եղել է այդ ինստիտուտի Կովկասագիտության և բյուզանդագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող, 1995-1996 թթ.՝ «Քրիստոնյա Արևելք» բաժնի վարիչ: Տասը տարուց ավելի՝ 2002 թ. մինչև 2013 թ., նա պաշտոնավարել է որպես Արևելագիտության ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն:

1985–1995 թթ. Պ. Չոբանյանը աշխատել է նաև ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Նա երկար տարիներ եղել է մի շարք գիտական և խմբագրական խորհուրդների անդամ, 1999–2003 թթ. զբաղեցրել է ՀՀ ԳԱԱ Պատմա-բանասիրական հանդեսի խմբագրի տեղակալի պաշտոնը:

2007 թ. որպես ավագ գիտնական-վերլուծաբան Պ. Չոբանյանը աշխատել է ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում (ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան):

Վաստակաշատ գիտնականը հեղինակել է 150-ից ավելի գիտական հրապարակումներ, երկու տասնյակ գիտական աշխատությունների խմբագիր է: Նրա գիտական հետազոտությունները նվիրված են հայոց պատմության, հայ-վրացական, հայ-ռուսական հարաբերությունների, վրացական ուղեգրությունների ուսումնասիրությանը:

